



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33X041
n-39

07 01 2000

ՁՈՒ ՈԵՍԿԻՆ

157

ԱՅՉՈՒՐ ԵՎ ՃՈՒՅՆ

ԵՐԵՅ ԳՅՈՒՅՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղինակի համարու կենսագրութեամբ.

Թարգմանեց ռուսերէնից

Ա. ՏԻՐ - Գ. Ա. ՇԻԼԴ, Ե. Ա. Ն. Ց. Բ.

ԺՈ. Դ. Ա.
Տպարան Յ. Գ. Գիւլբաստիեանցի.

1901 թ.

Կ ԳՐՈՒ ՀԱՅՐԱԿԱՆԻ ԱԼ-ՊՐՈՎԻՆՑԻԱՆ

ԶՕՆ ՈԵՍՎԿԻՆ

1
10-41
ՄԱ

68


157

ՍԵԶԱՄ ԵՒ ՃՈՒՃԱՆ

ԵՐԵՑ ԴԱՅԱԾՈՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեղինակի համառօս կենսագրութեամբ.

35796
1000



Թարգմանեց և ուսերէնից
Ա. Տ. Տ. Ա. Ն. Ի. Լ. Խ. Ա. Յ. Յ. Յ.

ՅՈՒՂԱԲԵՐ

ՍԵՐՈԲՅԱՆ - ԻՆՉԻԿՅԱՆԻ

Կ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 թ.

ԹԻՖԼԻՍ

ԲԱԳՈՒ

Տպարան - Յ. Գ. Գիլբասարեանցի.
1901 թ.

24 JUL 2013

1113



ԶՕՆ ՊԵՇՈՍԿԻՆ

Ուուսերէնից թարգմանելով Զօն Ուեսկինի «Սեղամ և զուշան» գրուածքը, որ երեք գասափօսութիւններից է բաղկացած, աւելորդ չեմ համարում ընթերցողներին ծանօթացնել այդ նշանաւոր մարդու համառու կենսագրութեան հետ, որը նոյնպէս թարգմանում եմ ուուսերէնից *):

Տասնիններսրդ դարու վերջին տարրում չըկար և վերջին անգլիացին, որն այդ գարու զարդն էլ: Մեծ էին Տէննիսոնը, Բբառնինզը, Տէնները, Կարլէզը, Դարվինը և Գլազոսոնը, բայց, գուցէ, նրանցից ոչմէին էլ ժամանակի վրայ այնպիսի զօրեղ ազգեցութիւն չունեցաւ, ինչպէս Զօն Ուեսկինը, այդ գեղեցիկաբէտ-բարոյախօսը: Թէսէտ և նա ապրեց 80 տարի և սկսեց գործել դեռ մանկութիւնից սկսած, բայց նրա ազգեցաւթիւնն ամենից աւելի յայսուեց նրա կեանքի վերջին տարիններում: Այդ բացադրումէ նրանով, որ նրա բոլոր գրածներն ու արածներն աւելի լաւ հասկանալի են այժմ, քան թէ այն ժամանակ: Զօն Ուեսկինն էլ միւս հանձարեղ մարդկանց նման երբեմն անձնատուր էր լինում ժայրահեղութեան և տարօվինակութեան, որոնց պատճառով էլ ենթարկում էր ժամանակակիցների ծաղրին. Ներկայումս այդ ժայրահեղութիւնների մէջ որոշուումնն նրա ուսման ճշմարտութիւնները: Զօն Ուեսկինի ազգեցութիւնը, որպէս ժամանակակից մըտքերի առաջնորդողի աղդեցութիւն, յայտնուումէ շատ բանի մէջ: Նրա կարող խելքն ըմբռնումէր գեղարուեստը, գրականութիւնը, քաղաքական անտեսագիտութիւնը և կրօնը, և այդ բոլոր ճիւղերում նա փոփոխութիւն առաջցրեց: Ներկայումս հա-

*) «Новый Журналъ Иностранный Литературы» ամսագրից, որից թարգմանածիմ և «Սեղամ և զուշան»:

Дозволено цензурою 8 Декабря 1900 г., г. Тифлисъ.



սարակական գրադարանները, կառավարչութիւնը ուսումնարաններն ու արհեստանոցները և պօլիտիկումներն Անգլիայի ամենասովորական հիմնարկութիւններն են, բայց 1861 թուին ծաղը էին թափում Ռենուարինի վրայ, երբ նա խօսում էր գրանց անհրաժեշտութեան մասին թէպէտ և նա մերժում էր սօցիալիզմը, սակայն նրա քաղաքական անսահսագութիւնը հիմնուածէ այնպիսի լայն սկզբունքների վրայ, որ մեր ժամանակի սօցիալական շատ թէօրիաներ հիմնուածեն նրա անսահսագութիւնը պայմանների մէջ զարգացաւ տասնիններորդ դարու այդ հանճարը:

Զօն Ռենուարինը ծնուեց 1819 թ. վետրուարի 1-ին: Նրա հայրը հարուստ գլխելվածաւ էր, նա գեղարվեստների սիրահարէր և ունէր գեղեցիկ պատկերների մի մեծ հաւաքածու: Իւր գործի պատճառով նա պարտարէր ամեն տարի ճանապարհորդել Անգլիայի, Վալիաի և հարաւային զոտանդիայի գլխաւոր ճանապարհներում: Այդ ճանապարհորդութիւններին միշտ ուղեկցում էր նրան կինը, իսկ երբ Զօնն արդէն չորս տարեկան դասաւ, ծնողները նրան էլ վերցրին իրենց հետ: Ճանապարհորդութիւնները սասակի տպաւարութիւն ունեցան մանուկի վրայ: Նա տեսաւ նշ միայն իւր հայրենիքի գեղեցիկ անկիմները, այլ և հնարաւորութիւն ունեցաւ ծանօթանալ Անգլիայի ամբողջներից շատերի պատկերների հաւաքածուների հետ: Այդպիսով Զօն Ռենուարինը, դեռ բոլորին երեխայ ժամանակը, շատ բան ստորեց բնութիւնից և արուեստներից և դրանից առաւել, նա այդ ճանապարհորդութիւններից գուրս բերաւ քաղաքական և անսեսական մի քանի ճշմարտութիւններ, որոնց յետոյ շրմաւացաւ:

Նրա մայրը մի շատ բարեպաշտ և խիստ կինէր և, դեռ մանուկը չը ծնած, վճռեց նրան քահանայացնել: Որդու դաստիարակութիւնը նա իւր ամբողջ կերպի նշանակութիւնն էր համարդմ, նայումէր այդ գործին ինչպէս մի սրբադան պարագի վրայ և բոլորին մանրամասն նախագիծ էր կաղմում, թէ ինչպէս պէտք կառավարել երեխային և աղել նրա վրայ: Մօր այդպիսի չափազանց լուրջ յարաբերութիւնն այնքան էլ ուրախալի չէր մանուկի համար և, կարելի է ասել, Զօնը բոլորին մանկութիւն չի ունեցել: Նա երբէք խաղալիքներ չունէր, որովհետեւ կարծումէր թէ մանուկը պէտք ամեն բանի համեր սեպհական փորձով և ինքը մտածէ իրեն համար զուարծութիւն դանել: Որքան էլ

նա սիրումէր որդուն, բայց երբէք այդ սէրը ցոյց չէր տալիս փաղաքանքով. երբոր նա լացէր լինում և հնազանդ չէր լինում, նա սաստիկ պատժումէր նրան: Մինչև տասն և չորս տարեկան հասակը Զօնի միակ առաջնորդը մայրնէր: Հասարակ օրերին նա թոյլ էր տալիս որդուն ընթերցանութեան համար գրքեր ընտրել և նա ընտրումէր Վոլտեր Սկոտախին, չոմերին և Բալքոնին: Կիբրակի օրը մայրը թոյլ չէր տալիս նրան կարդալ ուրիշ գիլք՝ բացի Աստուածաշունչից, Թօրինզօն Քրուգէից և «Գեղգրիմս Պրօգրէսսից»:

Զօնի հայրը կամինում էր որդուն բանաստեղծ չինել և երեւակայում էր նրա գալինիների մասին, իսկ մայրը վճռել էր, որ նա աւետարանական եպիսկոպոս կըլինի: Մօր մոլեւանդութիւնը չը հրապուրեց որդուն և նա քահանայ չըդաւաւ: Նա ծնուածէր գրող վինելու: Նա գեռ տասն գարեկան չէր, երբ սկսեց արձակ և շափաւոր գրուածքներով նկարագրել այն տմնելը, ինչ որ տեսնումէր իւր շուրջը, և զարդարել այդ նկարագրութիւնները Տէրների հոգու նկարուած պատկերներով: Դեռ եօթն տարեկան հասակում միսս Էզգէվորդի նմանողութեամբ գրեց մի փոքրիկ պատմութիւն: 1822 թիւ *) յանվարի 1-ին նրա գրածքանասակցութեան մէջ, որ նկարագրում էր սառնամանիքի օրը Glen Farg-ում, արդէն երեւում էր «Modern Painters» և «Stones of Venice-ի» ապագայ հեղինակը:

Ծնողները չէին կամինում իրենց գամհձը ժողովրդական ուսումնարանը տալ և ուսուցիչներ հրաւելցեցին, որոնք պէտք է կրթէին մանուկին տանիք: Նրա գաստիարակների մէջ կային կանոնիկ Դէլի, Կուլէյ Փիլդինզը, և Հարդինզը, որ ծառայում էր իրեն ապացոյց այն բանին, թէ ողբան գգուչութեամբ էր կատարուած ընտրութիւնը, —իսկ Փիլդինզի և Հարդինզի ընդունութիւնը դեռ ապացուցանումէր, որ հայրն անհրաժեշտ էր համարում որդուն գեղարուեստական կրթութիւն տալ:

Այդպիսով պատրաստւելով՝ Ռենուարինը մտաւ Օքսֆօրդեան համալսարանը, ուր շատ աշխատասիրութեամբ էր պարապում: 1839 թովին նա ստացաւ Նիւդիգէդեան պրեմիան այն բանաստեղծութեան համար, որի մէջ նկարագրումէր ինվուստական գիցարանութեան աստուածութիւններով բնակուած էլիփանտի տաճարները. այդ աստուածութիւնները պատերազմ են մզնում քրիստոնէական կրօնի դէմ, որը վերջանումէ կուապաշների անկումով և քրիստոնէական հաւատի կատարեալ յաղթութեամբ:

*) Այդ թուականը սխալէ, երեւի պէտք լինի 1832 թիւ:

Հենց այդ ժոմանակ, երբ Ռեօսկին ուսանողէր Օքսֆօրդում, տարածւեց Տէրների անունը և այն օրից Ռեօսկինի բոլոր լեանքի և գործերի մէջ ցոլանումէր Տէրների պատկերների և «Blackwood's Magazine» մէջ՝ այդ գեղարուեստագետի վրայ եղած սուր յարձակումների ազդեցութիւնը: Ոչ մի կրիտիկա այնպիսի սաստիկ ապաւորութիւն չէր ունենալ Ռեօսկինի վրայ, ինչպէս ունեցաւ այդ յօդուածը, և նա կամեցաւ պատասխանել դրան նոյնպէս մանրամասնարար: Երեւաց, որ պաշտպանուելն աւելի գժուարինէր, քանի թէ յարձակւելը, նա իւր յօդուածն անկարող գտաւ և շրտպագրեց, այլ անհրաժշտ համարեց ճանապարհորդել եւրօպայում և ծանօթանալ եւրօպական պատկերների դալերէանների հետ, որպէսզի յետոյ աւելի ընդունակ պաշտպան լինի Տէրներին: Զմեռը նա անցկացրեց Հռովմումշատ ժամանակ այցելեց Խոտախայի և հիւսիսային Եւրօպայի միւս քաղաքները և իւր թարմ տպաւորութիւնները զրեց «Modern Painters-ի» առաջին հատորի մէջ: Այդ 1843 թուականին էր, երբ հեղինակը դեռ քսան և մէկ ասքեկանէր: Շուտով երեւաց և երկրորդ հատորը, որ զիսաւորապէս բովանդակումէր զանազան դատաղութիւններ բնութեան մասին և գեղեցկութեան յատկութիւնների մասին: Մինչդեռ նա զրումէր «Modern Painters-ի» երրորդ, չորրորդ և հինգերորդ հատորները, նրա ուշադրութիւնը զրաւեցին ուրիշ շատ առարկաներ: Զգուշութեամբ մշակուած ճամփամտութիւնները, որոնց Ռեօսկինը կատարումէր գեղարուեստագէանների արտադրութիւնների և ընդունակ մասունքների մէջ, այնպէս ընդարձակ էին, որ նա հրատարակեց մի քանի առանձին գրքերով, որոնք գրում էին զանազան վերնապեր: Նրա վէնեցիական տպաւորութիւնները կոչւում էին «The Stones of Venice», ճարտարագիտութեան մասին գրուածքը—«The Seven Hamps of Architecture», վիօրէնտիական գծագրութիւնները—«Mornings in Florence», իսկ բոււաբանական նկատողութիւնները, որ մեծ մասամբ գրւածէին Անգլիայի շախիղներում և Զուկցերիական լիոններում, հրատարակուեցան «Proseprina» վերնագրով: Այդպիսով Ռեօսկինի «Modern Painters» աշխատանքն իւր ծագումով պարտականէ «Blakwod's Magazine» անըստորագիր հեղինակի Տէրների վրայ ունեցած՝ յարձակումներին; ինքը Ռեօսկինն ասում էր. „Իմ գիրքը զրեցաւ անհրաժեշտութիւնից: Ես տեսայ անարդարութիւն և աշխատեցի նրան ուղղել: Ես լսեցի սուրը և պարտաւորէի հերքել: Ուրիշ կերպ ես շէի կարող վարւել“:

Զօն Ռեօսկինն ամենից առաջ գեղարուեստական կրիտիկէ: Նա այնքան խորը զիտէ արուեստի թէօրիան և պատմութիւնը, որ անցեալ արուեստն ուրիշ ուսումնարանների մասին նրա վարտապետութիւնն ընդունումէ որպէս գեղեցկագիտութեան աւետարան, առաւել ևս որ նա ինքն էլ մինչեւ ոսկրների ուղեղը հմուտ արտիստ էր: Նրա ջրաներկ նկարներն ու մատիտով գծուած պատկերները ծառայումն որպէս ակնյայնի ապացոյց այն բանին, թէ, եթէ զրականական գործունէութիւնը չը խէր նրանից շատ ժամանակ, նա առաջնակարգ գեղարուեստագէտ կըլինէր: Դրանից էլ նրա գեղարուեստական կրիտիկան կատարեալ ընկունակէ և ինքն ըստ ինքեան գեղարուեստական, ինչպէս այն ամենը, ինչ որ գուրս է եկել նրա զրչի տակից: Ռեօսկինը յետոյ մինչեւ անգամ վշտանում էր, որ գրաւել է մարդկանց աւելի ոճի գեղեցկութեամբ, քան թէ իւր ուսումով: „Իմ ամբողջ կեանքում, ասաց նա մի անգամ, ես ասումէի մարդկանց և նոքա բում էին ոչ թէ այն, ինչ որ ասումէի նրանց, այլ թէ ինչպէս էի ասում այդ նրանց համար կարեոր էր եղանակը, ոճը, և ոչ էութիւնը, նոքա արհամարհումէին հատիկը և գրաւում միայն կեղեւով“:

Իւր գեղարուեստական կրիտիկան նա զրումէր այնպիսի սաստիկ լեզուով, որ ունեցաւ շատ բարեկամներ և շատէլ թշնամիներ: Նա զովումէր այն գործերը, որոնք համաձայննուում էին նրա սկզբունքների հետ, և անխնայ կերպով դատապարտումէր նրանց, որոնք շէին հետեւում այդ սկզբունքներին: Արտիստները գողումէին նրա կրիտիկայից, հասարակութիւնն էլ այնպէս ուշադրութեամբ լսումէր նրան, որ „մինչեւ անգամ մի որեւէ յայտնի պատկերի վերաբերութեամբ նրա մի սառն վարմունքը բաւականէր, որ այդ պատկերն առանց ծախմելու վերադառնար իւր ստեղծողի արհեստանոցը“, ասումէ „Daily Chronicle-ը“: Բայց Ռեօսկինը հարկաւոր չէր գտնում մեղմացնել իւր արտայացտութիւնները և ասումէր. „ես զրումէմ և միշտ զրել եմ նրա համար, որպէսզի ցոյց տամ, թէ գոյութիւն ունի մի որոշեալ շափ ճշմարիտ արուեստը սուտից զանազանելու համար“:

Մինչեւ քառասուն տարեկանը Ռեօսկինը գրում էր արուեստի մասին, բայց յետոյ արուեստը ստորագրեց բարոյագիտութեան: Արդէն շատ տարիներ ներգործում էր նրա վրայ Կարէյլի ազգեցութիւնը, բայց քառասուն տարեկանում այդ ազգեցութիւնն այնպէս որոշուեց, այնպէս զլանեց միւս ըոլոր ազգեցութիւնները, որ Ռեօս-

կինը բոլորովին փոխուեց և ափսոսաց այն մասին, որ չի կարող ոչնչացնել իւր արած բոլոր գործերը և նորից սկսել բոլորովին ուրիշ ուղղութեամբ: Կարելիէ ասել, որ այդ Ռեօսկինի երկրորդ ծնունդն էր: Մինչեւ քառասուն տարեկանը նա մարդաէր էր և հոգւով գործումէր որոշ նպատակով յուսալով առանց սօցիալական փոփոխութեան ուղղել չարը, բայց յետոյ նա տեսաւ, որ չ'արժէ սպասել ժամանակը սօցիալական կազմակերպութեան կարկատանի վրայ, այլ անհրաժեշտ են այստեղ արմատական փոփոխութիւններ: Այն ժամանակ նա դադարեց հրատարակել արուեստի մասին իւր գրքերը և վճռեց հրատարակել մի քանի աշխատութիւններ քաղաքական անտեսագիտութեան մասին, որոնք անսխալ կերպով պատասխանէին իրենց նպատակին: Այդ առաջացաւ ոչ թէ նրանից, որ նա մերժումէր իւր առաջւայ աշխատութիւնները, այլ նրանից, որ նա սկսեց այդ աշխատութիւնները պակաս կարեւոր համարել, քանթէ այն տնտեսական մտքերը, որոնց սովորել էր Կարլէլից:

Հենց այդ ժամանակ մեռաւ նրա հայրը և որդուն թողեց 157,000 ֆունտ սակերվնդ կարողութիւն, բայց հողերից, տներից և պատկերների շատ թանկագին հաւաքածուից: Բայց այդ կարողութիւնը նրան ուրախութիւն չըպատճառեց, այլ ընդհակառակը հարկադրեց նրան զգալ հարստութեան և աղքատութեան մէջ եղած յարաբերութեան արհամարհանքը: Նրա միտքն անդադար զբաղուածէր վճռելու աղքատների մասին խնդիրը, իսկ խիզճն ասումէր նրան, որ նա ոչինչ իրաւունք չունի օգտուելու իւր կարողութիւնից, որովհետեւ նա ինքը չեր աշխատել: Դրանից յետոյ նա բաժանեց բոլոր կարողութիւնը մասամբ աղքականներին, մասամբ բարեգործական նպատակով, իսկ ինքն սկսեց սովորեցնել, գրել՝ գործել և ապրել իւր համոզունքներով:

Օքսֆորդի համալսարանում պրօֆեսսօր լինելով՝ նա իւր փայլուն դասախոսութիւններով գրաւումէր ունկնդիրներին և սովորեցնումէր նրանց այն սկզբունքներին, որոնցից գուրս էին գալիս պարզ և խիստ կենսական կանոններ: „Իմ բոլոր թէօրիաները, —ասումէր նա, —համաձայնումն Վօրդալօրդի մի խօսքին, որ ասումէ: „մենք ապրումնք զննողութեամբ, յուսով և միրով“: Բայց ոչ թէ ինքնին մեր զննողութեամբ և մեր յուսով: Սիրել կարելիէ միայն ուրիշներին, ինքնասիրութիւնն ինքն ըստ ինքնան հակասող մի բանէ: Յանախ նա արտասանումէր անսպասելի աֆօրիզմներ: օրինակ՝ „Այն

այժը, որը զանազանում է ճշմարտութիւնը սուտից, արուեստի մէջ կոչւմէ ճաշակ», և բնաւորութեան մասին սուր նկատողութիւններ էր անում, որոնք մի նախաղասութեան մէջ կրիակիա էին բովանդակում, օրինակ՝ «Հիբերալին աշխատում էր առանց սիրոյ, —նրա արուեստը սառն է»: Լօնդօնի և Փարիզի երիտասարդներին, որոնք կազմում էին նորագոյն լուսաւորութեան արդինքը, նա դրոշմում էր հետեւեալ խօսքերով. «Դա թունաւոր, բայց առանց ձեւների սարդ է, որը նայելում է և ծծում, բայց չի կարողանում հիսել»: Անկանած Ռեօսկինն ամենախիստ գոգմատիկ է, մի անգամ նա այսպէս սկսեց իւր դասախոսութիւնը. «Ես մտածում եմ, թէ միակ մարդն եմ Օքսֆորդում, որն ասում է թէ ուսուցանելու համար կատարեալ որոշած մի բան ունի»: Նրա բոլոր դասախոսութիւնները համարեա մտնում են «Fors Clavigera»-ի մէջ, որ նամակների մի ժողովածու է գրուած անգլիական բանութիւններին:

Ռեօսկինը շատ էր հարապուրում ձեռքի աշխատանքով, դրա համար նրան շատ էին դասապարագառում: Նա ասումէր, որ ոչ մի բան չի կարելի հմուտ կերպով սովորել, եթէ ոչ ձեռքի աշխատանքի միջոցով, և վճռեց արիստօկրատների որդիներին ծանօթացնել իսկական աշխատանքի նշանակութեան հետ. Նա գտնում էր, որ այդ ոչ միայն օգուտ կըքերէ նոցա առողջութեանը, այլ կ'օգնէ նրանց ճիշտ հայեացք կաղմել այն աիրապետող կարծիքի մասին, թէ ձեռքի աշխատանքը հեշտ է և նրան կատարելու համար ոչ մի արուեստ չի պահանջում: Այդ նպատակով նա իւր ուսանողների հետ շրջադաշտութիւններ էր կազմում ինձուլիների կարկատանների համար և բանութիւններ՝ լոնդոնում ջրմուղների մաքրման համար, ուստի նախ ինքը սովորում էր այդ ամենը մասնագիտ բանութիւններից: Ռեօսկինի վրայ շատերը ծիծառում էին, բայց նրա ինչ գործն էր հասարակական կարծիքը, երբ նա ամբողջովին հրապուրածէր բանութիւնների ստորացման և նոցա տանջանքների մաքով. նա մտածում էր թէ ինչպէս օգնէր դրան: Տեսնելով՝ որ բնակարանի վարձը կազմում է աղքատի ծախքի մեծ մասը և կործանում է նրան, նա այդտեղ էլ փորձ արաւ. նա իբրեւ տանտէր՝ լոնդոնի մութանկիւններից մինում փորձեց առաջարկել բանութիւններին շափաւոր վարձով լաւ բնակարաններ: Հարեւան տանտէրը ստանումէր 12% արդինք, իսկ նա բաւականանումէր միայն 50%: Յետոյ նա խանութիւ փորձ արաւ, ուր բանութիւնները կարող էին էժան գնով առնել ամենալաւ յատկութեան ապրանքներ: Վերջապէս, գրգռուած այն պայմաններով, որոնց տակ արտադրում էին բրթէ գործուածքները, նա դնեց մի քանի ոստայն և

հիմնեց մի վոքրիկ արդիւնաբերական կենդրօն, ուր ծերումիները տանը նստած՝ ունէին թեթեւ և հաճելի գործ:

Այդ ամենն, ի հարկէ, միայն տեղական մարդասիրութեան նշանակութիւն ունէին: Բայց ամեն մի փորձ, որն անում էր Ռեօսկինը, մի մասն էր աւելացնում նրա փորձառութեանը: Նա դրա հետ միասին սովորում էր յայտնի աւելանորդ—զեկավարներին քաղաքական անտեսագիտութեան մէջ և անդադար որոնում էր այդ ուղղութեան մէջ որոշ փաստեր և մտքեր: Նա ամբողջովին անձնատուր էր եղել աւելի առողջ և արդար սկզբունքների վրայ կառավարութիւններ, արդիւնաբերական հաստատութիւններ և ընկերութիւններ կազմակերպելու քարոզութեան. Նա մտածում էր, որ չարութիւնների մեծ մասի պատճառն ընկնում է այնպիսի արտայայտութիւնների անկանոն հասկացողութեան մէջ, ինչպէս են, կարողութիւն, արժէք և քաղաքական անտեսագիտութիւնն, և եթէ որ հասկանալի լինէր նոցա խսկական նշանակութիւնը, այն ժամանակ շատ շուտով փոփոխութիւն կառաջանար հարստի և աղքատի յարաբերութեանց մէջ: Դրա համար էլ իւր «Unto this last» գրքի մէջ նա աշխատում է սովորեցնել այդ յարաբերութեան ճշմարտութիւնը: Այդ գիրքը մի մեղադրանք է քաղաքական անտեսագիտութեանը, որպէս մի գիտութիւն: Նա ասումէ, որ դա բոլորովին քաղաքական չէ, այլ շահասիրական անտեսագիտութիւնէ: «Polis», որից առաջանումէ «քաղաքական» խօսքը, նշանակումէ տէրութիւն, հետեւարար քաղաքական անտեսագիտութիւնը նպատակ պիտի ունենայ ամբողջ հասարակութեան օգուտը, այն ինչ գիտութիւնը սովորեցնում է թէ ինչպէս հարստանայ վաճառականը, և երբէք չի մտածում տէրութեան միւս անդամների մասին: Այդ գիտութեան գլխաւոր սկզբունքն է—զնել ամենաէժան գնով և վաճառել ամենաթանկ գնով,—որ Ռեօսկինի կարծիքով մարդկութեան մաքի համար ամենախայտառակ սկզբունքն է: «Գնել էժան շուկայում,—ասումէ նա:—Լաւ, բայց ինչո՞ւ ձեր շուկան էժան է: Կարելիէ ձեզ մօտ էժան կըլինի ածովալը, երբ ձեր տները՝ կայրուեն կրակից. էժան կըլինի աղլւաը ձեր փողոցներում երկրաշարժութիւնից յետոյ: Բայց կառէք դաւք, որ հրդէններն ու երկրաշարժները կազմում են ժողովրդական բարիք, որովհետեւ կարողէք էժան գնով առնել կործանման նիւթերը: Եթէ մի որեւէ առարկայ էժան է, կարելի է հաւատացած, որ վաճառականական վարագոյքի ետեւ թափնում է մարդկային ուրախութեան և բաղդատորութեան ինչ որ խորակումն: Ծախել ամենաթանկ շուկայում: Լաւ, բայց ինչը ձեր շուկան թանկ դարձրաւ: Գուշը այսօր

լաւ գնով ծախեցիք ձեր հացը, բայց ում: Կարելի է մեռնող մարդուն, որը տալով ձեզ իւր վերջին կոպէկը, այլ եւս չի կարօտում հացին. կամ թէ հարստին, որը վաղը ձեր զիւխին պիտի կապէ, կամթէ թշնամի զինուորին, որ գնում է կողոպաելու այն բանկը, որի մէջ պահւումնն ձեր խնայողութիւնները»:

Ռեօսկինն ասումէ, որ մենք մինչեւ անգամ չենք խմանում թէ ինչ է նշանակում հարուստ լինել: «Հարուստ» խօսքը համեմատարար և պարտատրացուցիչ կերպով հասկացնումէ հակառակ խօսքը, ինչպէս «Հիւսիս» խօսքի դէմը ենթադրում է «հարաւ» խօսքը: Աներեւակայելի է, որ գոյութիւն սննեցող պայմանների տակ ամեն մի մարդ հարուստ լինի: Եթէ ամեն մի մարդ կ'ունենայ պակասաւթիւնն (և այդ բոլորովին հնարաւորէ), այն ժամանակ չեն լինել տղաքաները, այլ հետեւարար կանյայտանան հարուստների գոյութեան համար պատճառուները: «Ձեր գրպանում գտնուած դինէի ուժը,—ասում է Ռեօսկինը.—ամբողջովին կափումն ունի ձեր հարեւանի զրպանում այդ գինէի բացակայութիւնից: Եթէ որ նա չըկարօտէր նրան, այդ վողը ձեզ համար անօգուտ կըլինէր: Նրա նշանակութեան ասափիճանը իսկ և իսկ համապատասխանում է ձեր հարեւանի կարիքին և նրա ցանկութեանն ստանալ այդ, հետեւարար հարստանալու արուեստը, ինչպէս դրան սովորեցնում է շահասիրական տնտեսութիւնը, անխուսափելի կերպով կայանում է ձեր հարեւանին չքաւորութեան մէջ թողնելու արուեստի մէջ:» Մի երկրի իսկական բարեկեցութիւնը գնահատաւումէ ոչ թէ միքանի գտնառականների հարստութեամբ, այլ բոլոր ժողովրդի ընդհանուր բարեկեցութեամբ: Ռեօսկինի կարծիքով բարեկեցութեան այդպիսի հասկացողութիւնը միակ ճշմարիտն է: Բարեկեցութիւն նշանակում է բարի կառավարչութիւն, ուստի ամենահարուստ երկիրը նա է, որն ունի աւելի շատ առողջ և բաղդաւոր մարդիկ: Հարստութիւնների աւելացումը՝ ի վեաս ընդհանուրի առողջութեան, յարմարութեան և երջանկութեան՝ շլ կարող աղզի բարեկը կազմել:

Այդպիսի սկզբունքները, որոնք գրուած էին «Unto this last» և «Munera Pulveris»-ի մէջ, հարուստում էին վաճառականներին, որոնք հարցնում էին. ի՞նչի է ձգտում հեղինակը: Այդ հարցելի պատասխանը գտնուում է «Unto this last» յառաջարանի մէջ: Ռեօսկինը կամնում է առաջինը՝ որ կառավարութիւնը հիմնէր ամբողջ երկրում ձրի ուսումնարաններ իւր հաշով և իւր հսկողութեան տակ, որոնց մէջ մուտք ունենային լըլոր որպիները, և որպէս զի այդ ուրախարաններումներնչէին

որդիներին հեղութեան և արդարութեան կանոնները և սովորեցնէին նրանց առողջապահութեան ու այն արհեստին, որով իւրաքանչիւրն՝ ուսումն վերջացնելուց յետոյ՝ կապրի: Երկրորդ՝ Ռեօսկինը կամենում է, որ հիմնուէին կառավարչական դորժարաններ, արհեստանոյներ և խանութներ՝ արտադրելու և ծախելու կեանքի և բոլոր օգտակար արուեստներն ուսումնասիրելու համար ամենակարեւոր իրերը: Երրորդ՝ իւրաքանչիւր գործ չունեցող մարդ պէտքէ ընդունուի մերձակայ կառավարչական ուսումնարանում, ուր նրան փորձելոց, պէտք է տան նրան յարմար գործ: Եթէ նա անգործ է եղել չիմանալու պատճառով, նրան պէտքէ սովորեցնեն, եթէ ծովութեան պատճառով, նրան պէտքէ տան ծանր, բայց անհրաժեշտ գործ, որից սովորաբար փախչում են: Այդ մարդուն պէտքէ նշանակին համապատասխան ոռնիկ և այդ ոռնիկը թողնեն նրա տնօրինութեան տակ, հենց որ նա կըսկի աւելի ողջախոհութեամբ նայել աշխատանքի պայմաններին: Եթէ մարդ չի աշխատել հիւանդութեան պատճառով, նրան պէտք է բժշկել: Չորրորդ՝ ծերացած թշուառներին պէտքէ ապաստան և սնունդ տալ:

Այժմ այդ մտքերը մեզ բոլորովին բնական են երեւում, բայց 1860 թուականին նոքա մեծ յուզմունք առաջացրին: Դրամատէրերն առում էին թէ Ռեօսկինը նայում է միայն բանորի տեսակէտից, որը, եթէ տան նրան մեծ ոռնիկ, ծախսում է: Ռեօսկինը դրան պատճառախանում էր, թէ ինչ հակում էլ որ ունենայ բանորը, դրա համար պատասխանատուեն այն մարդիկ, որոնք աւելի լաւ պայմանների մէջ են:

Ինչ վերաբերում է Ռեօսկինի ընդամեկան կեանքին, այդ կողմից նա բաղդաւոր չէր:

Ա. Տէր-Դանիէլեանց:

Ս Ե Զ Ա Մ.

Լ.

Թագաւորների գանձարանների մասին.

Յարգելի տիկիններ և պարօններ, իմ առաջին պարտականութիւնն եմ համարում ներողութիւն խնդրել ձեզանից այն անուան համար, որի տակ սկզբում յայտարարւեցաւ այս դասախոսութիւնը. այդ անունը կարելի է երկու տեսակ հասկանալ և դուք, վերջ ի վերջոյ, կարողէք մտածել, թէ ես բոլորովին բարեխղճութեամբ չեմ գրաւել ձեր ուշադրութիւնը: Յիրաւի, ես չըպիտի խօսեմ ոչ տեսանելի թագաւորների մասին և ոչ էլ այն գանձարանների մասին, որոնց մէջ պահւումեն բոլորին յայտնի և տեսանելի հարստութիւնները. այլ պիտի խօսեմ բոլորովին ուրիշ տեսակ թագաւորների և անյալտ գանձարանների մասին: Ես մինչեւ անգամ մտածել էի խնդրել ձեզ փոքր ինչ ուշադրութիւն դարձնելու, ինչպէս երբեմն այդպէս եմ վարւում իմ այն բարեկամի հետ, որին տանումեմ ցոյց տալու բնութեան տեսարանների մի գեղեցիկ անկիւնը. մտածումէի ամենալի խորամանկութեամբ ծածկել ձեզանից իսկապէս այն, ինչ որ ցանկանումեմ ասել, մինչեւ որ մենք շրջադարձաւիդներով դուրս կըգանք հենց այն տեղը, որտեղից մեր առաջ անսպասելի կերպով կըբացւի տեսարանն իւր բոլոր գեղեցկութեամբ: Բայց իմ բարի և մեծահոգի բարեկամ

կանոնիկոս Անսօնը մաւածք արդէն պարզելէ այդ խորամանկ մտքերը՝ իւր յախտարարութեան մէջ այս դաստիառութիւնը կը չելով «ինչ և ինչպէս կարդալ»: Բացի դրանից, այդ գործին հմուտ մարդկանցից լսել եմ, որ ունկընդընին ոչ մի բան այնպէս չի ձանձրացնում, ինչպէս հոետորի ջանքը՝ ծածկելու նրանցից իւր վերջնական նպատակը, —ուստի այժմ ես դէն եմ ձգում այդ թափանցիկ դիմակը և ուղղակի ասումեմ, որ պիտի խօսեմ գրքերի մասին, այն մասին, թէ մենք ինչպէս ենք կարգում գրքերը, ինչպէս կարողենք և պիտի կարդանք: Հարցը շատ կարեւոր է և ընդարձակ: Այնպէս ընդարձակ, որ ես ըբալիտի փորձեմ ամբողջութեամբ մեկնել, այլ կաշխատեմ միայն բացադրել ձեզ ընթերցանութեան մասին մի քանի հասարակ մտքեր: Այդ մտքերը համակումեն ինձ տւելի և տւելի այն չափով, ինչ չափով ես հետամուտ եմ լինում, թէ հասարակութիւնն ինչ յարաբերութիւն ունի դէպի կրթական միջոցների արագ աճումն ու գրականական հեղեղի համեմտատական տարածումը:

Ինձ շատ անգամէ պատահել գործ ունենալ ժողովրդի զանգան դասակարգերի համար հիմնած ուսումնարանների հետ և բազմաթիւ նամակներ ստանալ ծնողներից՝ նոցաորդոց կրթութեան մասին: Այդ բազմաթիւ նամակները միշտ ապշեցնում էին ինձ ծնողների, առանձնապէս մայրերի, հարցերի գերիշխանութեամբ: «Կրթութիւնը հարկաւորէ այս ինչ և այն ինչ գրութեան համար», ահա ինչի մասին են նոքա անդադար խօսում ու դատում: Ես որքան նկատումեմ, լաւ կրթութիւնն ինքն ըատ ինքեան երբէք չի մտնում իմ թղթակիցների հայեացքների մէջ. մեծ մասամբ կրթութեան տեսական կատարելութեան միտքը բոլորովին հեռու է նրանցից: Նոցա նպատակնէ մի կրթութիւն, որը հնարաւորութիւն եղտալ որդուն լաւ սիւրտուկներ հաղնել,

ինքնավստահութեամբ բաղխել ճոխ զանգակներով դռները և, ի վերջով, իւր սեպհական գուանը ալդպիսի ճոխ զանգակ կախել, —մի խօսքով այնպիսի մի կրթութիւն, որն օգնէր նրանց «աւելի հեռուն գնալ»: Բայց, երեւի, նոցա միտքըն անգամ չի ընկնում, որ կալ մի կրթութիւն, որն ինքն ըստ ինքեան արդէն կեանքի ճանապարհի վրայ մի քալ առաջէ տանում, այն ինչ միւս կրթութիւնները կարողեն միայն առաջ տանել մահւան ճանապարհի վրայ: Եթէ որ գործը ձեռք առնուի պարտուպատշաճ կերպով, այն ժամանակ էական կրթութիւնն աւելի հեշտութեամբ ձեռք կըրերուի, քան թէ նոքա են մտածում, իսկ հակառակ գէպքում ոչ մի գինով և ոչ մի միջնորդութեամբ չես կարող ստանալ:

Սւելի տարածւած և տւելի էական գաղափարների մէջ առաջին տեղն է բռնում կեանքի ընթացքի գաղափարը: Գոնէ ոչ մի հարց չի քննում այնպիսի անկեղծութեամբ և չի համարում պատանեկական եռանդին համապատասխան զարկ, ինչպէս այդ հարցը: Ներկայ ըոպէին իմ գլխաւոր նպատակն է որոշել այդ հարցի փորձնական նշանակութիւնն ու նրա օրինական սահմանները:

Սպարեէզ ձեռք բերել, մարդկանց մէջ դուրս գալ, առաջ գնալ, —իսկապէս նշանակումէ հասարակութեան մէջ մի յալտնի տեղ բռնել, մի այնպիսի դիրք ստանալ, որին միւսները յարգելի և պատուաւոր կը ճանաչէն: Գործն ալստեղ ինքն ըստ ինքեան փող վաստակելու հասարակ ձեւի մէջ չէ, այլ հարստանալու մի այնպիսի ձեւի մէջ, որ բոլորին յալտնի լինի՝ թէ դուք ձեր նպատակին հասաք: Մի խօսքով գործն ալստեղ ծափահարութեամբ մեր ծարաւը յագեցնելու մէջն է: Այդ ծարաւը թէկ «մեծ մարդկանց վերջին թուլութիւնն է», բայց միեւնոյն ժամանակ «փոքր մարդկանց առաջին խուլութիւնն է», իսկ ընդհանուր առ-

մամբ՝ միջին մ. րդկութեան «ամենազօրաւոր զարկն է»։ Մարդկութեան ամենամեծ ձգտումների արմատը կարելիէ գանել միշտ գովեստների սիրոյ մէջ, ինչպէս նրա ամենամեծ աղէտների արմատը— բաւականութիւնների սիրոյ մէջ։

Ես չըպիտի պաշտպանեմ այդ եղանակը և ոչ էլ պախարակեմ։ Ես միայն կամենումմեմ համոզել ձեզ, որ այդ, լիրաւի, ընկնումէ մեր բոլոր ժամանակակից գործունէութեան սկզբունքի մէջ։ «Փառասիրութեան գոհացումն», — ահա թէ ինչն է գրգոռում մեզ գործել և ինչն է զուարճացնում մեր պարապ ժամանակը. նա այնպէս մօտիկէ շըփւում մեր կեանքի աղբիւրների հետ, որ եթէ մէկը դիպէ մեր ինքնասիրութեանը, մենք ալդպիսի վիրաւորանքն իրաւամբ «մահացու» կանուանենք, ինչպէս կանուանէինք մի որեւէ քաղցկէղ կամ սարսափելի անդամալուծութիւնը։

Թէպէտ և մեզանից քիչերն այնքան ծանօթ են բժշկականութեան, որ կարողանան որոշել այդ ցանկութեան ունեցած զանազան աղդեցութիւններն առողջութեան և եռանդի վրայ, բայց կարծեմ տղնիւ մարդկանց մեծամասնութիւնը խոստովանումէ այդ և ճանաչումէ որպէս մեր գործունէութեան գլխաւոր եղանակը։ Նաւաստին միայն նրա համար չէ կամենում ինքը լինել նաւապետ, որպէսզի զգալ իւր ընդունակութիւնը նաւը կառավարելու մէջ, այլ նրա համար, որ նրան «Նաւապետ» անուանեն։ Քահանան միայն նրա համար չէ կամենում ինքը լինել եպիսկոպոս, որպէսզի ցոյց տալ իւր ձեռքի ամրութիւնը՝ թէ հօտն անցկըկացնէ բոլոր գժուարութիւնների միջից մի ուրիշ ձեռքից աւելի լաւ, այլ նրա համար, որ նրան «Նորին սրբազնութիւն» անուանեն։ Եւ թագաւորը միայն նրա չէ կամենում ընդարձակել իւր տէրութեան սահմանները և աւելի հպատակներ ձեռք բերել, որպէսզի իրեն ամենից աւելի ընդունակ համարեն գահին և թագաւորութեանը

ծառայելու, այլ նրա համար, որ աւելի շատ մարդիկ անուանեն նրան «Շերդ մեծութիւն»։

Ահա կեսնքի յառաջադիմութեան գլխաւոր միտքը Միեւնոյնը, և գեռ աւելի մեծ չափով, վերաբերումէ այդ յառաջադիմութեան երկրորդական արտայալտութեանը, այն բանին՝ որ «լաւ շրջանի մէջ ընկնենք»։ Մենք կամենում ենք լաւ շրջանի մէջ ընկնել ոչ թէ նրա համար, որ այդ շրջանի մէջ լինենք, այլ նրա համար, որ մեզ տեսնենք այնտեղ, իսկ նրա արժանաւորութեան չափը մեր աչքում— նրա երեւելիութեան չափն է։

Ներեցէք, որ մի բոպէ կանգեմ առնում ձեզ մի հարց առաջարկելու, որը, կարելիէ, դուք յանդուգն կանուանէք։ Ես երբէք չեմ կարողանում շարունակել իմ ճառը, եթէ չեմ իմանում և չեմ զգում, թէ ինձ հետեւն իմ ունկնդիրները. թէ իմ դէմ են (սկզբում ինձ համար դա անխտիր է լինում), բայց ես անշուշտ պէտքէ իմանամ ո՞ր տեղ են նոքա և այդ բոպէին շատ կըցանկանալի գուշակել, թէ դուք ինչպէս էք մտածում. արդեօք չափազանց ստոր եղանակներով չը բացադրեցի ես մարդկալին գործունէութիւնը։ Ես վճռել եմ ալսօր այդ եղանակներն այնքան ստորացնել, որ ոչ ոք չըկարողանայ նորա հաւանականութեան դէմն արտայալտել։ Քաղաքական տնտեսագիտութեան լոգուածներում երբեմն ինձ պատահելէ ենթադրել, թէ մարդկալին գործունէութեան սկզբունքի մէջ կարելի է հաշուի առնել ազնութիւնը, վեհանձնութիւնը և մասսամբ այն, որն առհասարակ «բարեբարութիւն» է կոչւում, և իսկոյն բոլորը գոչումէին. «այդ իզուրէ, մարդկալին բնութեան մէջ այդ ըրկալ, ագահութիւնն ու նախանձն են այն միակ զգացմունքները, որոնց իրաւունք ունիք հաշուի առնել. ոչ մի ուրիշ բան չի ազդում ոչ ոքի վրայ, կամ թէ ազդումէ բացառութեամբ ոչ էական դէպէրում»։ Ահա թէ ինչու հա-

մարեմ ես այսօր եղանակների սանդուղքի ալդպիսի ստորաստիճանից սկսում: Խնդրում եմ նրանց, որոնք գովեստների սէրն ամենազօրաւոր են համարում այն բոլոր եղանակներից, որոնցով մարդիկ ձգտում են աւելի բարձր դիրքերի, իսկ մի որեւէ պարտականութիւն կատարելու ազնիւցնկութիւնը բոլորովին երկրորդական եղանակ,—ձեռք բարձրացնեն: (Բարձրանումեն մի քանի ձեռներ. հասարակութիւնը մասամբ չէր հաւատում, թէ որքան լրջօրէն է խօսում հռետօրը, մասամբ էլ ճնշւումէր իւր կարծիքը յալտնելու): Ես բոլորովին լրջօրէն եմ խօսում և, յիրաւի, կամենում եմ իմանալ, թէ դուք ինչպէս էք մտածում. ի միջի ալլոց, ես կարող եմ հաւաստիանալ դրան իմ հարցը հակառակ կերպով առաջարկելով: Թող ձեռք բարձրացնեն նրանք, որոնք պարտականութեան զգացմունքը գլխաւոր եղանակն են համարում, իսկ գովեստների սէրը—երկրորդական:

(Ասումեն, հռետօրի ետեւ մի ձեռք միայն բարձրացաւ):

Շատ գեղեցիկ, տեսնում եմ, որ դուք համաձայն էք ինձ հետ և ես էլ շատ ստորից չեմ սկսել: Այլ ես չեմ ձանձրացնիլ ձեզ զանազան հարցերով, բայց կանխօրէն համարձակւումեմ վճռել, որ թուլ կըտաք պարտականութեան զգացմունքը համարել ի թիւս երկրորդական կամ երրորդական եղանակներին: Դուք ընդունում էք, որ միորեւէ օգտակար բան շինելու կամ ճշմարիտ բարիք ձեռք բերելու ցանկութիւնը գոյութիւն ունի մեծամասնութեան մէջ ինչպէս զուգընթաց, թէեւ երկրորդական եղանակ, աւելի բարձր դրութեան հասնելու ձգտման մէջ, ուստի եւ կ'ընդունէք, որ չափաւոր ազնիւ մարդիկ պաշտօնների են հասնում մասամբ օգուտ տալու ընդունակութեան գիտակցութիւնից և կըթուած ու խելացի լարդկամնց չըջանը կըդրագանէք լը-

մարների և անկիրթների շրջանից: Բարեկամութեան և ընկերականութեան մասին աւելորդ է կրկնել սովորական խօսքերը, անշուշտ դուք առանց այդ էլ կըհամաձայնուէք, որ նրան ջերմեանդութեամբ ենք ցանկանում հաւատարիմ բարեկամ և խելացի ընկեր գտնել, նրան մեծ ուշադրութեամբ և գգուշութեամբ ենք ընտրում թէ մինը և թէ միւսը, այնքան աւելի յուս ենք ունենում բաղտաւորութեան և օգտակարութեան վրայ:

Բայց ենթագրենք թէ մենք բոլորս էլ ցանկութիւն և կարողութիւն ունինք լաւ բարեկամներ ընտրել.—ինչպէս այդ քիչերին հնարաւորէ, կամ, գոնէ, ինչպէս մեծամասնութեան համար սահմանափակութէ ընտրութեան շրջանը: Համարեա մեր բոլոր յարաբերութիւններն էլ որոշւում են պատահականութեամբ և անհրաժեշտութեամբ, և կայանումեն մի նեղ շրջանի մէջ: Մենք չենք կարող ծանօթանալ նրանց հետ, որոնց հետ կըկամենալինք, իսկ նրանց, որոնց հետ ծանօթենք, չենք կարող մեզ մօտ ունենալ այն ժամանակ, երբ նոքա մեզ ամենից աւելի հարկաւորեն: Մարդկութեան ստոր ինտելիգէնցիալի առաջ բացւումէ բարձրը մի բոպէ միայն և այն էլ տեսնումեն ճեղքուածքից: Յաջողութեան ժամանակ մեզ պատահումէ հարեւանցի կերպով նայել մեծ բանաստեղծին և լսել նրա ձայնի հնչւնները, կամ թէ ուսումնականին հարցեր տալ և բարեհոգի պատասխան ստանալ: Երբեմն յաջողուումէ մեզ տասն ըոպէ խօսակցութեամբ անհանգստացնել մինխստըին և նրանից այնպիսի պատասխաններ ստանալ, որ աւելի վատենլութիւնից, որովհետեւ վստահութեան արժանի չեն լինում: Մի կամ երկու անգամ բացառական բաղտաւորութիւն ենք ունենում ծաղկափնջեր ձգել պրինցէսի ոտների տակ և որսալ թագուհու ողորմած հայեացքը: Եւ այդպիսով մենք աշխատումենք ձեռք բերել այդ թանկագին ըոպէները, հետա-

մուտ լինելով այդպիսի չնչին բաների մենք փչացնում, սպառումենք մեր կեանքը, ցանկութիւնը և ոլժերը: Բայց կալ մի շրջան, որ մատչելի է մեզ ամեն ժամանակ. ալդ այն մարդկանց շրջաննէ, որոնք կըխօսեն մեզ հետ որքան մեզ հաճելիէ, ինչ էլ ուզում է լինի մեր կոչումն ու պաշտօնը. կըխօսեն մեզ հետ իրենց տրամադրութեան տակ ունեցած ընտիր լեզուով և շնորհակալ կըլինեն, որ լսում ենք նրանց: Այդ բազմամարդ և արիստօկրատիքական շրջանն սպասումէ մեզ ամբողջ օրերով. նա չի տալիս, այլ ունկընդրութիւն է խնդրում. ամբողջ օրերով համբերութեամբ սպասումեն թագաւորներ և թագաւորական մարդիկ՝ ճնշուելով նեղ նախասենեակներում մեր գըքերի պահարանների դարակների վրայ, իսկ մենք մի րոպէ չենք գտնում նրանց լսելու և ոչնչի տեղ ենք դնում նոցա շրջանը:

Կարելի է դուք կասէք, թէ այն անտարբերութիւնը, որով մենք վերաբերումենք այդ նշանաւոր շրջանին, որն աշխատումէ մեզ հետ խօսակցութիւն ունենալ, և այն ցանկութիւնը, որով մենք ձգտում ենք մօտենալ կասկածելի շրջանին, որն արհամարհում է մեզ,—բացադրում են անձամբ կենդանի մարդկանց տեսնելու և նոցա հետ ծանօթանալու հնաբաւորութեամբ ու ցանկութեամբ և ոչ նոցա ճառերին ծանօթանալով: Բայց այդ ճիշտ չէ: Ասենք թէ դուք չէք կարող տեսնել նոցա դէմքերը և ենթադրենք, թէ ձեզ նստացրել են պըինցի կամ մի բարձրաստիճան մարդու սենեակում վարագուրի ետեւ, միթէ դուք ուրախութեամբ չէք լսել, թէ ինչէ խօսում այդ պըինցը կամ բարձրաստիճան մարդը, եթէ մինչեւ անգամ ձեզ արգելուած է դուրս գալ վարագուրի ետեւից: Այն ինչ երբ վարագուրը քիչ փոքրէ, միայն երկու կտորից է և ոչ չորս, դուք կարողէք թագնուել կազմի երկու տախտակների ետեւ և ամբողջ ժամերով լսել ոչ թէ որեւէ դատարկաբանութիւն, այլ ամենախմա-

տուն ։ արդկանց մտածած ու ընտրած ճառերը: Դուք արհամարհումէք այդ խաղաղ ունկընդրութիւնը և այդ գաղտնի խորհրդի պատելը:

Կարելիէ դուք կասէք թէ այդ ամենը նրա համար է, որ կենդանի մարդիկ խօսում են առօրեայ չարութիւնների մասին, որոնք աւելի են հետաքրքրում ձեզ. բայց այդ էլ ճիշտ չէ: Կենդանի մարդիկ եւս աւելի լաւ են գրում օրւայ չարիքների մասին, քան թէ խօսումեն պատահական խօսակցութեան մէջ: Ես միայն ընդունում եմ, որ այդ եղանակը կարողէ ձեզ վրայ մի քանի ազդեցութիւն ունենալ, որքան դուք արագ և առօրեայ արտադրութիւնները կըգերադասէք բազմադարեան և քրտնաջան աշխատութեամբ ձեռք բերուած արտադրութիւններից—գրքերից, այդ խօսքի խսկական նշանակութեամբ: Գրքերը բաժանաւումեն երկու դասակարգի, առօրեայ կեանքին վերաբերեալ գրքեր և ամեն ժամանակի վերաբերեալ գրքեր: Այդ զանազանութիւնն ի նկատի ունեցէք. դա պայմանաւորում է ոչ միայն արժանաւորութեամբ: Գործն այստեղ չի սահմանափակում նրանով, որ վատ գրքերը դադարումեն գոյութիւն ունենալուց, իսկ լաւերը մնում են. զանազանութիւնը կայանումէ հենց գրքի տեսակի մէջ: Կան լաւ գրքեր ներկայից և լաւ գրքեր բոլոր ժամանակներից. կան վատ գրքեր ներկայից և վատ գրքեր բոլոր ժամանակներից: Ես նախ սկսի բացադրեմ այդ զանազանութիւնը:

Լաւ գիրքը,—ես չեմ խօսում վատերի մասին,—ոչ այլ ինչէ, եթէ ոչ ձեզ համար տպագրւած օգտակար և հաճելի մի խօսակցութիւն այն մարդու, որը չի կարող ձեզ հետ խօսել ուրիշ ճանապարհով: Յաճախ այդ խօսակցութիւնը շատ հաճելիէ լինում, երբ հաղորդում է այնպիսի երեր, որոնց մասին անհրաժեշտ է իմանալ. նա հաճելի է լինում ինչպէս խելօք բարեկամի հետ ունեցած խօսակցութիւնը,

ճանապարհորդութիւնների փայլուն նկարագրութիւնները, զանագան հարցերի սրամիտ և բարեհոգի դատողութիւնները, վիշտասանական ձեւով գրուած կենդանի և ոգեւորւած զրոյցները, պատմական անցքերի փստահելի տեղեկութիւնն երբ, մանաւանդ երբ գրումեն ականատեսները, - այդ ամենն առօրեայ գրքերեն, կրթութեան տարածման հետ նոքա էլաւելի և աւելի տարածւումեն մեր մէջ և կազմումեն մերժամանակի գերազանց ժառանգութիւնը: Մենք պէտք է խորին շնորհակալութիւն անենք նրանց և մեզ համար պէտքէ շատ ամօթ լինի, եթէ չենք օգտուիլ նրանցից բայց եթէ մենք ընդունում ենք նրանց իսկական գրքերի տեղ, այնուամենականիւ օգտումենք նրանցից ամենավատ կերպով. իսկապէս դրանք գրքեր չեն, այլ լաւ տպուած նամակներ կամ լրագրեր: Չեր բարեկամի նամակը կարողէ շատ սիրելի և հարկաւոր լինել, երբ ստանումէք, բայց արժէ պահել այդ, —ուրիշ հարցէ: Նրագրերը կատարեալ հարկաւորեն առաւօտեան թէ ի վրայ կարդալու համար, բայց հարկաւոր չեն ամբողջ օրւայ ընթերցանութեան համար: Հենց այդպէս էլ երկան նամակները, մինչեւ անդամ կազմած նամակները, որոնց մէջ շատ կենդանի կերպով նկարագրւածեն հիւրանոցները, ճանապարհները, եղանակները, պատմուածէ մի մոռացւած անեկդօտ, կամ թէ լայտնուումեն այն բոլոր ճիշտ հանգամանքները, որոնց ժամանակ պատահել են լայտնի անցքեր, —այդպիսի նամակները թէ եւ կարող են հարկաւորել ստուգութեան համար, բայց չեն կարող իսկական մտքով «գիրք» կոչւել և պէտքական չեն ընթերցանութեան համար: Գիրքն իւր էութեամբ ոչինչ պատմուածք չէ, այլ գրուած մի բան, և գրուած է ոչթէ հաղորդելու համար, այլ յաւերժացնելու համար: Զրուցատրական ձեւով գրուած գրքերը նրա համար են, որ գրքեհեղինակը չի կարող միանգամից խօսել հազարաւոր մարդ-

կանց հետ, եթէ կարողանար, կըխօսէր. գիրքը միայն նրա ձայնի բազմապատկումնէ: Դուք չէք կարող խօսել Հնդկաստանում ձեր բարեկամի հետ, եթէ կարողանալիք, կըխօսէիք. գրա փոխարէն գուք գրումէք և այդ ուղղակի ձեր ձայնի փոխանցումն է: Բայց գրքերը գրուում են ոչ թէ ձայնի բազմապատկութեան և փոխագրութեան համար, այլ յաւերժացնելու համար: Հեղինակը մի բան ունի ասելու, որը, նրա կարծիքով, ճիշտէ, հարկաւոր է և օգտակար իւր գեղեցկութեամբ: Որքան նրան լայտնիէ, դեռ ևս ոչ չի ասել այդ և բացի նրանից ոչ ոք չի կարող ասել: Նա պէտքէ արտայատէ իւր միտքը պարզ կերպով և խոհեմութեամբ: Կեանքի երեւոլթների թւում նա տեսնում է առաջարկուած երը կամ թէ մի խումբ իրեր. նրան է վիճակուել ճանաչել այդ ճշմարտութիւնը, տեսնել և որսալ: Նա կըկամենար այնպէս տպագրել, որ լայտեան ըլջնջուէր, եթէ կարողանար, կըփորագրէր ժայռի վրայ: Նա ասումէ. «ահա ամենալաւ բանը, որ իմ մէջ եղելի. ես դեռ կերել եմ, խմել և քնել, սիրել եմ և տաել ինչպէս միւսները. իմ կեանքը շոգի եր և անցաւ, բայց ահա ես ինչ իմացալ և տեսայ. իմ բոլոր գոլութեան մէջ այդ մէկն արժանաւորապէս կը մնայ ձեր լիշողութեան մէջ»:

Ահա նա ինչ է «գրում», մարդկալին չնչին միջոցներով իւր ճշմարիտ ներշնչման ոլժի չափով նա թողնումէ մեզ իւր գրութիւնը, իւր կտակը և դա էլ կոչւումէ «գիրք»:

Արելիէ գուք մտածումէք թէ գոլութիւն չունին այնպիսի գրքեր, որ գրուած լինեն այդպէս:

Բայց նորից հարցնումեմ. արդեօք հաւատում էք որքան և իցէ ազնւութեանը, հաւատումէք որքան եւ իցէ բարութեանը: Գուցէ գուք մտածումէք թէ խելօք մարդկանց մէջ երբէք ազնւութիւն, բարութիւն չի լինում: Յուս ունեմ, որ մեր մէջ չի գտնուել մէկը, որ այդպէս մտածէ:

Ահա աշխատանքի այն բաժինը, որը խելօք մարդը կատարումէ անուութեամբ և դէպի մարդիկն ունեցած սիրով—է նրա խկական գիրքը, նրա գեղարուեստական արտադրութիւնը: Այդ բաժինը միշտ խառնէ լինում վատ, աւելորդ կտորներով, անջերմեռանդ և կեղտու աշխատանքով, բայց եթէ կարողանումէք կարդալ, առանց դժուարութեան կարողէք որոնել խկական տեղը,—որը կըլինի և գիրքը:

Այդպիսի գրքեր գրելեն բոլոր ժամանակների մեծ մարդիկը, մեծ ուսուումնականները, մտածողները և թագաւորական գործողները: Այդ բոլոր գրուածքները պատրաստեն ձեզ համար, բայց կեանքը կարճ է: Այդ մասին դուք առաջ ես լսել էք, բայց արդեօք չափելէք նրա կարճութիւնը, որոշել էք այն ժամանակը, որը ձեր տրամադրութեան տակ է դրուած: Գիտէք որ մէկը կարդումէք, միւսը չէք կորդում, այսօրւայ կորցրածը վաղը չէք դտնում: Միթէ դուք կըխօսէք ձեր աղախնի հետ, կամ ախոռապանի հետ, երբ կարողէք խօսել թագաւորների և թագուհիների հետ, միթէ ստոր և ագահ ամբոխի յարգանքը յարմար կը համարէք այս ինչ տեղը մտնելու և այն ինչ տեղն ունկընդութիւն ունենալու համար ձեր սեպհական իրաւունքների արժանաւոր գիտակցութիւնից, երբ ձեր առաջ և ձեզ համար բացէ անմահ և լայն աշխարհի մուտքը, ուր լիքնէ ժամանակի ընտրուածների, իշխողների անչափ ամբոխը: Դուք միշտ կարողէք մտնել այնտեղ ձեզ համար տեղ և շրջան ընտրելու, և եթէ մտնումէք, միայն ձեր սեպհական կամքը կարող է հալածել ձեզ: Այն շրջանի վսեմութիւնը, ուր դուք ձեզ համար ասպարէզ էք որոնում, ծառալումէ որպէս մի ուղիղ չափ ձեր մէջ բնածին արխտուրատիզմի. ձեր իրաւունքների օրինականութիւնն ու կենդանի մարդկանց մէջ բարձր գիրք բունելու ձգտման անկեղծութիւնը ստուգւումեն նրանով, թէ դուք ինչ տեղ էք ցանկանում

բռնել մեռածների մէջ:

Ո՛չ միայն այն դիրքով, որը կամենումէք բռնել, այլ և նրանով, որի համար պատրաստումէք, որովհետեւ հանգուցեալների բակը նման չէ ալժմ կենդանի որեւէ արիստոկրատիալի բակին. նրան կարողեն մօտեցնել միայն աշխատանքըն ու ծառալութիւնը: Արքայութեան դուների պահապանը չի հրապուրւում ոչ մի հարսաութեամբ, չի շփոթւում ոչ մի բարձրակոչ անունով և չի ընկճում ոչ մի խորամանկութեան առաջ: Խկական մտքով այնտեղ չի մտնում ոչ մի գուեհիկ կամ ստոր մարդ: Այդ լուռ Faubourg St Germain-ի մուտքի մօտ ձեզ կարճ հարցմունքի են ենթարկում: «Եթէ արժանաւորէք մտնելու, կըմտնէք. եթէ կամենումէք մեծատունների շրջանում լինել, յալտնի կըդառնաք. եթէ կամենումէք իմաստունների հետ խօսել, կըսովորէք նոցա իմաստուն ճառերը հասկանալ և լսել նրանց: Եթէ կամենում էք ուրիշ պայմաններով մտնել, անկարելիք: Եթէ ո՞ր դուք չըբարձրանաք մինչեւ մեզ, մենք չենք կարող ստորանալ մինչեւ ձեզ: Կենդանի լորդին կարելի է քաղցրութեամբ ձգել, փիլոսոփը ներողամտութեամբ կարողէ բացադրել ձեզ իւր մտքերը, բայց այստեղ մենք չենք շպրտում և չենք բացատրում. դուք պէտքէ բարձրանաք մինչեւ մեր գաղափարների մակերեւութը, եթէ կամենումէք զուարձանալ այդ գաղափարներով. պէտքէ բաժանէք մեր զգացմունքները, եթէ կամենումէք մեզ հետ լինելո:

Ահա թէ ինչեն պահանջում ձեզանից: Խոստովանուումէմ, որ շատ են պահանջում: Դուք պէտքէ սիրէք այդ մարդկանց, եթէ կամենումէք նոցա շրջանի մէջ լինել: Շողոքորթութիւնն անօգուտ է, նոքա արհամարհում են այդ: Դուք պէտքէ սիրէք նրանց և ձեր սէրն արտայալտէք հետեւեալ երկու միջոցներով.

I Առաջին՝ նոցա մօտ սովորելու և նոցա մտքերը

մէջ թափանցելու ցանկութեամբ: Խաւ նկատեցէք, ես ասում եմ թափանցել նոցա մտքերի մէջ և ոչ թէ նոցա մօտ որոնել ձեր արտայալտութիւնները: Եթէ այն մարդը, որը գրել է գերքը, խելօք չէ ձեզանից, չ'արժէ և կարդալ, իսկ եթէ խելօք է, նա շատ բանի մէջ կըլարմարւի ձեզ հետ:

Մենք շատ սիրովենք խօսում գրքերի մասին. «ինչ պէս լաւէ, ասես հենց նա է, որի մասին ես մտածումէի»: Բայց ուղիղ յարաբերութիւնըն ուրիշ տեսակէ. «ինչպէս օտարօտի է. երբէք իմ միտքը չի ընկել, բայց տեսնումեն, որ ճշմարիտ է. եթէ այժմ չեմ էլ տեսնում, յոյս ունիմ լետոյ տեսնել»: Եթէ մօտենում էք գրողին այդպիսի հեղութեամբ, կամ առանց դրան, գոնէ մօտենումէք այն լուսով, որ ցանկանումէք իմանալ նորա մտքերը և ոչ թէ նրա մօտ որոնել ձերը: Այդ մտքերի մասին դատեցէք լետոյ, եթէ ձեզ դատելու ընդունակ էք համարում, բայց նախ իմացէք ու հասկացէք նրանց: Նոյնպէս հաւատացած եղէք, որ եթէ գրողը ձեզ մի տեղ հարկաւորւի, դուք նրան միանգամից չէք ըմբռնել, իսկ այն ամենին, ինչ որ նա հասկանումէ, դուք շատ շուտ չէք համնիլ, ոչ թէ նրա համար, որ նա լուսումէ որեւէ բանի մասին,—նա բացադրում է շատ սաստիկ արտայալտութիւններով,—որովհետեւ չի կարող բոլորն ասել, մինչեւ անզամ այլ ես չի կամենում ուրիշ կերպ խօսել, օրինակ մեղադրանքներով և առակներով, որպէսզի համոզուի թէ դուք, լիրաւի, կամենումէք ըմբռնել, որ նա հասկանում է: Թէ ինչո՞ւ համարէ այդ, ես լաւ չեմ կարող լիշել, չեմ կարող վերլուծել այն ծածկամտութիւնը, որը հարկադրում է իմաստուններին թագցնել իրենց մտքերի խորքերը:

Նոքա թոյլ են տալիս ձեզ գիտել այդ խորքերը ոչ թէ օդնութեան համար, այլ իբրեւ մի պարգեւ, երբ համոզւումեն, որ դուք արժանի էք դրան: Այդ միեւնոյնն էլ

պատահումէ իմաստութեան նախագաղափարի—ոսկու հետ: Ինչո՞ւ երկրի էլեքտրական ոլժերը միանգամից չեն ցուցանում նրա մէջ թագնուած ոսկին, որ թագաւորներն ու ժողովուրդը իմանան թէ որտեղ կարելի է գտնել և առանց դժուարութեան, առանց ժամանակ կորցնելու, առանց փորելու և վրդովելու կտրէին որքան հարկաւորէ և փող շինէին: Բայց բնութիւնն ուրիշ կերպ է տնօրինում. նա ոսկին տեղաւորումէ փոքրիկ խորշերում և որտեղ, ոչ ոքի բայտնի չէ. կարելի է շատ փորել և ոչինչ չըգտնել, բայց հարկաւորէ փորել առանց խնայելու ժամանակն ու աշխատանքը, որպէսզի գտնուի գոնէ մի փոքրիկ կտոր:

Այդ միեւնոյնն էլ պատահում է և մարդու գերիմաստութեան հետ: Մի լաւ գիրք ձեռք առնելու ժամանակ դուք պէտքէ հարցնէք ձեզ. «արդեօք տրամադիր էք գործելու ինչպէս աւստրալիական հանքափորը. կարգին են ձեր բահն ու բրիչը. կարգին էք դուք ինքներդ. լաւ են յետ ծալուած ձեր թեւքերը. շնչարգելութիւն չունիք, լաւ տրամադրութեան մէջ էք»: Մի քիչ էլ շարունակենք այդ համեմատութիւնը: Նա տխուր է, բայց նպատակալարմար մետաղը, որը դուք որոնումէք,—հեղինակի միտքն ու հոգին է. նրա խօսքը—ժայռն է, որ դուք պէտքէ կտրէք, որպէսզի գտնէք այդ միտքն ու հոգին: Բահը—ձեր ջանքն է, խելքը և գիտակցութիւնը. Հալելու վառարանը—ձեր սեպհական մտածող հոգինէ: Մի լուսաք, թէ առանց այդ գործիքների և կրակին ձեզ կըլաջողւի հասկանալ լաւ գրողին: Մի կտոր ոսկի ձեռք բերելու համար լաճախ պատահումէ ձեզ երկար ժամանակ համբերութեամբ հալել ու հալել, նուրբ և ուժեղ կտրիչներով կոտրել ժայռը:

Դրա համար էլ ասում եմ ձեզ, ինդրում ու թախանձում (գիտեմ, որ այդ գէպքում ես ճշմարիտեմ), որ ամենից առաջ սովորէք մտադրութեամբ լսել խօսքերը, ճշտու-

թեամբ որոշել նոցա և շանակութիւնը վանկ առ վանկ, տառ առ տառ։ Կարելի է կարդալ Բըրտանական մուզէի բոլոր գըքերը (եթէ մէկն այդքան երկար կեանք ունենալ) և, այնուամենայնիւ, բոլորովին անկիրթ, անուս մնալ, բայց կարդացէք հենց տասն երես մի լաւ գըքից տառ առ տառ, և դուք մի յալտնի աստիճան կրթուած մարդ կըլինէք։ Կրթութեան և անկրթութեան այդ գանազանութիւնն, եթէ կշռադատութեան առնենք բացառապէս նրա վերացական կողմը, իսկապէս ստուգւում է այդ ճշտութեամբ։

Կրթուած մարդը երեմն գիտէ քիչ լեզուներ, խօսումէ միայն իւր լեզուով և կարդումէ քիչ գըքեր, բայց ինչ լեզու էլ որ իմանումէ, — իմանումէ ճշտութեամբ, ինչ խօսք էլ որ արտասանումէ, — արտասանումէ ուղիղ։ իսկ որ ամենագլխաւորնէ, նա ծանօթէ խօսքերի բառարանի և քերականութեան հետ, միանդամից որոշումէ հին և յալտնի խօսքը ժամանակակից խօսքերի խուժանից, լիշտումէ նոցա բոլոր ազգաբանութիւնը, լիշտումէ թէ ինչ կապերի մէջ են մտած, ում հետ, որքան մուտք ունէին բոլոր ժամանակների և ժողովուրդների ազգային բանաւոր արխստօկրատիալի մէջ և ինչպիսի պաշտօններ են կատարել նրա մէջ։ Անուս մարդը կարողէ իմանալ շտա լեզուներ և խօսել նրանցով, բայց իսկապէս ոչ մի խօսք չիմանալ մինչեւ անդամ իւր մալրենի լեզուից։ Խելացի նաւաստին հաստատուն հողի վրայ գուրս գալով՝ կարողէ իրեն համար ճանապարհ բաց անել շտա նաւահանգստներում, բայց բառականէ նրան արտասանել մի որեւէ խօսք, և նա իսկոյն հրապարակ կը հանէ իւր անուսութիւնը, ինչպէս հենց առաջին նախադասութեան մէջ խօսքերի շեշտումը միանգամից որոշումէ ուսումնականին։ Եւ այդ այնպէս սաստիկ զգացւումէ, այնպէս ստոյգ է ճանաչուած բոլոր կրթուած մարդկանցից, որ մի անկանոն շեշտում, մի անուղիղ վանկ բառական է որեւէ

լուսաւորւած երկրի պարլամէնտին. ընդ միշտ հաստատել մարդու ստոր դրութիւնը։

Այդպէս էլ պէտք է լինի, բայց ափսոս, որ դեռ աւելի լուրջ ուղղութիւն չի պահանջւում, այն էլ աւելի լուրջ հիմունքների վրայ։ Լատիներէն անկանոն շեշտումը բոլորովին օրինաւոր կերպով ծիծաղ է յարուցանում համայնքների պալատում, բայց որպէսզի անգլիերէն անկանոն արտայալաւութիւնն այնտեղ կնճռու հայեացքներ առաջացնէ, — Դա բոլորովին անկրաւացի է։ Ի հարկ է, կասկած չըկայ, որ հարկաւորէ հետեւել խօսքերի շեշտմանը, բայց հարկաւորէ այդ անել աւելի իմաստով և այն ժամանակ այդ խօսքերն այնքան շատ չեն հարկաւորում։ Մի քանի պարզ և կարճ խօսքեր մի մեծ գործ են շինում, որը չի կարող շինել հազարաւոր խօսքերի զօրութիւնը, եթէ նրանցից եւրաքանչիւրը գաղտուկ կատարումէ ուրիշ պարտականութիւն։ Այն, եթէ հետամուտ չըլինինք, երբեմն խօսքերը կարող են մահացու վնաս պատճառել։ Ներկայումս ամբողջ եւրօպայում մուտք են գործում զանազան դիմակաւորւած խօսքեր։ Երբէք այդ խօսքերն այնքան շատ չեն եղել, ինչպէս ալժմ, այն էլ շնորհիւ դատարկ, անմիտ «լուսաւորութեան» կամ, աւելի ճիշտն ասած, «կերպարանափոխութեան», որը տարածւում է ինչպէս մի գարշելի ախտ։ Ասումեմ, որ ամեն տեղ էլ ըստ կամաց մտցնում են դիմակաւորւած խօսքեր, որոնց ոչ ոք չի հասկանում, բայց բոլորն էլ գործադրումեն։

Շատերը պատրաստ են նրանց համար կռուել, հոգի տալ, զոհել իրենց կեանքը՝ երեւակալելով թէ այդ խօսքերը նրանց համար մի ինչ որ թանկագին բան են կազմում, բայց իսկապէս այդ խօսքերը խամիլիօն և վերարկուներ են՝ եւրաքանչիւրի երեւակալութեան ծաղիկներով զայտարուած, որոնց մէջ նոքա փաթաթ գույն և բնդհանում փոնքին ըստ

միաւորւելով՝ ծածուկ սըստում են ու սպասում յարմար ըոպէին, երբ յարձակում են իրենց զոհի վրայ և պատառուում նրան։ Երբէք չի եղել գիշատիչ գագանն աւելի արիւնածարաւ, դիպոմատն աւելի խորամանէ, մարդասպանն աւելի դաժան, որքան այդ դիմակաւորւած խօսքերը։ Դա իւրաքանչիւրի մտքերի ապօրինի կառավարիչն է. ինչ ուխտած միտք կամ ցանկալի բնադրում ունենալ մարդ, նա յախնումէ իւր սիրելի դիմակաւորւած խօսքին և այդ խօսքը վերջապէս անսահման իրաւունք է ձեռք բերում նրա վրայ այնպէս, որ դուք առանց այդ խօսքի միջնորդութեան ուրիշ կերպ չէք կարող հասնել ձեր բնազդմանը։

Աւելի խառն լեզուները, ինչպէս անգլիականը, ուր խօսքը գործ է ածւում լատիներէն կամ յունարէն ձեռով, երբ կամենումեն յարգանք ցուցանել, և սաքսոներէն կամ նոյնքան սովորական մի ուրիշ լեզուով, երբ կամենումեն ձգել նրա նշանակութիւնը, — այդպիսի լեզուները համարեա մարդու կամքի հակառակ նրա ձեռքն են տալիս երկմտանի ճառի օրհասական իշխանութիւնը։ Ինչ տարօրինակ և բարերար ազդեցութիւն կունենար օրինակ նրանց վրայ, որոնք, կըսովորեն ընդունել խօսքերի ձեւը ուժի փոխարէն, եթէ մենք միանգամ ընդ միշտ կամ ընդունէինք կամ դէն ձգէինք յունական «bíblos» կամ «bíblion» խօսքը «գրքի» մտքով և գործ չ'ածէինք միայն այն բացառիկ գէպքերում, երբ կամենում ենք ազնուացնել, գեղեցկացնել այդ միտքը, և ըլթարգմանէինք մնացտծ գէպքերում։ Ինչպէս կըլինէր այն բազմաթիւ պարզամիտ մարդկանց համար, որոնք երկրպագումեն Աստուծոյ խօսքի տառերին նրա հոգու փոխարէն (ինչպէս երկրպագումեն պատկերին նրա կենդանի ներկալութեան փոխարէն), եթէ մի քանի գէպքերում պահպանէինք յունական ձեւը և ըլթարգմանէինք, այլ կարդալինք այսպէս։ «իսկ կախարդութեամբ պարապողներից շատերը ժո-

դովելով իրենց բիբլիաները, ալբեցին բոլորի առաջ և գումարեցին նոյն գինը, որ եղաւ լիսուն հազար դրամ։ Կամ թէ, ընդ հակառակը, միանգամ ընդ միշտ թարգմանէինք և ասէինք «Սուրբ գիրքը» փոխանակ «Սուրբ Բիբլիան»։ կարելի է այն ժամանակ մէկը յանկարծ ժտաբերէ, որ Աստուծոյ խօսքը, որով հին ժամանակներում կանգնելէ երկինքը և մնումէ ալժմ, չի կարելի ոչ ոքին նույներէ կաշուէ կազմի մէջ, չի կարելի ցանել ոչ ճանապարհների մօտ, ոչ շոգեշարժ խոփերի միջոցով և ոչ էլ տպագրութեամբ։ Բայց, չընալելով դրան, նա ամեն օր առաջարկումէ մեզ և մենք արհամարհանքով մերժումենք նրան, ամեն մի ժամ ցանւումէ մեր մէջ և մենք մեծ արագութեամբ խեղդումենք նրան մեր մէջ։

Ինչպիսի տպաւորութիւն կ'ունենալ անգլիական հոգու վրայ յունարէն katakrino խօսքի փոխադրութեան համար լատիներէն քաղցրահնչիւն «dāmno» խօսքի գործածութիւնն այնպիսի գէպքերում, երբ բարի մարդիկ առանձնապէս կամենումեն զօրացնել նրա նշանակութիւնը, և, ընդհակառակը, նրա փոխարէն անմեղ «condemn»-ը, երբ այդ նշանակութիւնը հարկաւորէ մեղմացնել։ Ի՞նչպիսի նշանաւոր քարոզներ կ'արտասանեն անկիրթ քահանաները «Զըհաւատացողն անիծւած (damnēd) կըլինի» բնաբանով և ինչպիսի աննկարագրելի երկիւղի մէջ կ'ընկնեն այդ քահանաները, եթէ նրանց առաջարկեն հետեւեալ թարգմանութիւնը. «Փւր տան ազատութեան համար, որով անիծեց նա ամբողջ աշխարհին», կամթէ Յովհաննու աւետարանչից. «կին, ոչ ոք չի անիծել քեզ։ Նա պատասխանումէ. ոչ ոք, տէր։ Յիսուս ասումէ նրան. և ես քեզ չեմ անիծում, գնա և այլ ևս մի մեղանչեր։ Այն թիւրիմացութիւնները, որոնք Եւրօպային արեան ծովեր պատճառեցին՝ անտառի անհամար տերեւների հման բազմաթիւ ազնիւ հոգիներ փշացնելով, որոնք կա-

տաղի յուսահատութեամբ պաշտպանումէին իրենց արդարութիւնը, ալդ անհամաձայնութիւններն ու երկապառակութիւնները թէեւ իսկապէս ծագում էին աւելի խորին պատճառներից, բայց սկսեցին գործնականապէս հնարաւոր դառնալ զլիսաւորապէս նրա համար, որ Եւրօպան ընդունեց յունական խօսքը հասարակական ժողովների համար՝ ցանկանալով ալդպիսի ժողովներին մի առանձին յարգելիքնաւորութիւն տալ, երբ նոքա՚ի նկատի էին ունենում կրօնական նպատակները։ Ալդ երկապառակութիւններին պատճառ էին լինում և դրանց նման ուրիշ երկդիմութիւններ այնպիսի արտակարութիւնների մէջ, որոնք կամենում էին «presbyter» խօսքը կրծատել «priest» խօսքի (քահանալ)։

Խօսքերը կանոնաւոր կերպով կարգաւորելու համար ահա՛թէ ինչպէս պէտքէ վարուեք։ Համարեա ձեր լեզուի ամեն մի խօսքը սկզբում եղել է մի ուրիշ լեզուի խօսք, — սաքսոնական, գերմանական, փրանսիական, լատինական կամ յունական (գեռ չեմ խօսում արեւելեան և նախնական բարբառների մասին)։ Նրանցից շատերը բոլորի համար եղել են մի անգամ, ալսինքն՝ սկզբում յունական, յետոյ լատինական, ապա գերմանական և, վերջապէս, անգլիական։ Նոցա Ըիտքն ու դործածութիւնը քիչ քիչ փոխւել են ամեն մի ժողովրդի բերանում, իսկ արմատական և էական նշանակութիւնը մինչեւ ալժմ պահպանւել է և ալդ նշանակութիւնը զգումեն բոլոր լաւ կրթուած մարդիկ։ Եթէ դուք չըգիտէք յունարէն ալք ու բէնը, սովորեցէք, եթէ մտածումէք լուրջ կերպով կարգալ յետոյ ձեռնարկեցէք բոլոր լեզուների լաւ բառարանները և, երբ որ մի խօսքի մէջ կասկածումէք, համբերութեամբ որոնեցէք ալդ։ Ամենից առաջ կարդացէք Մաքս Միւլերի դասախոսութիւնները և երբէք բաց մի թողէք այն խօսքերը, որոնք ձեզ

կասկածելի կըթուածն։ Դա մի դժուարին գործէ, բայց դուք հենց սկզբից կըտեսնէք, որ հետաքրքիր է, իսկ վերջը կըդառնէք նրան սովորականից դուրս գրաւէք։ Դրանից դուք մտաւորապէս այնքան կը շահուէք, որքան ուժ և իսկութիւն ձեռք կըբերէք։

Մի որեւէ լեզու կատարելապէս սովորելու համար հարկաւորէ ամբողջ կեանքը դնել, բայց ձեզ համար դժուարչէ հետեւել այն նշանակութեանը, որի վրայից անցել է անգլիական խօսքը, և այն մտքին, որը մինչեւ ալժմ պէտք է լինի լաւ գրողի մօտ։

Ալժմ եթէ ժողով կըտաք, օրինակի համար ես կըկարդամ իսկական գրքից մի քանի տող։ Տեսնենք ալդ տողերը մեզ ի՞նչ կըտածն։ Վերցնում եմ մի գիրք, որ ձեզ բոլորիդէլ լաւ լատինի է։ Անգլիական ամբողջ գրականութեան մէջ չի գտնում մի աւելի լատինի գիրք, որ քիչ խղճմտանքով կարդացուի։ Ես վերցնումեմ կարդալու լիցիդայի հետեւեալ կտորը։

«Ամենից յետոյ եկաւ և վերջը դուրս գնաց Գալիլիական լճի զեկավարը։ Նա բերաւ երկու ծանր բանալիներ երկու մետաղից շինուած (ոսկի բանալին բաց էր անում, իսկ երկաթինը — ամուր կողբում էր)։ Նա ցնցւումէր իւր իոյլով պսակուած գանգուրներով և խոռումէր խստութեամբ։ Պատասխանի, ինչպէս սիրով կըտայի քո Փոխարէն նրանցից շատերին, որոնք իրենց որովայնի համար ներս են սողում, ներս են մտնում, ներս են պլծնում փարախը։ Մնացած բաների համար նոցա վիշտը քիչ է, միայն մտնել խուզած ոչխարի մօտ խնջուքն ու արտաքսել կոչուած պատուաւոր հիւրին։ Կոյր բերաններ։ Նոքա հազիւ են կարողանում բռնել հովուական ցուալը և ոչինչ չըգիտեն, թէ ինչպէս պէտքէ վերաբերել հաւատարիմ հովուի արհեստին։ Նոցա ի՞նչ գործն է ալդ։ Նրանց ի՞նչ է հարկաւոր։ Նոքա երջան-

կութիւն են վայելում, բայց երբ ժողովում են հօտը, նոցանուազ ու դատարկ երգերը ճռնչումեն գարշելի ծղոտի ողորմելի սրինդներում. քաղցած ոչխարները բարձրացնում են գլուխները, բայց նրանց ոչ ոք չի կերակում, և քամիով ու դառն մառախուզով փքուած, որը նոքա չնչումեն, նեխուումեն և գարշելի ապականութիւն տարածում։ Բայց գրանից, գաժան գալն էլ յափշտակող թաթով շտապով լափումէ նրանց ամեն օր և ոչ ոք չի խօսում ալդ մասին»։

Այժմ մտածենք ալդ կտորի մասին և տեսնենք ինչ ասում։

Արդեօք օտարոտի չէ, որ Միլտօնը Պետրոս առաքեալին ոչ միայն եպիսկոպոսական նշանակութիւն է տալիս, այլ և ալդ նշանակութեան այն բոլոր կերպարանքը, որն ամենաշեծ եռանդով մերժումեն բողոքականները։ Նրա «խոյրով պսակուած գանգուրները»։ Միլտօնը եպիսկոպոսների սիրահար չէր, ինչպէս յալտնուեցաւ ալդ խոյրը Պետրոս առաքեալի գլխին։ «Նա բերաւ երկու ծանը բանալիներ»։ Արդեօք ալդ ալն բանալիները չեն, որ իւրացրել են հոռովմէական եպիսկոպոսները, և արդեօք Մելտօնը բանաստեղծական համարձակութեամբ չի ընդունում բանալիների իշխանութիւնը, կամ թէ ոչ գեղարւեստական կշռադատութեամբ և ոչ նրա համար, որ բանալիները ոսկեալ փայլը նպաստէր պատկերների ազդեցութեանը։ Ո՞չ։ Մեծ մարդիկ չեն դիմում թատրոնական խորամանկութիւններին, երբ խօսքը կարծիքների համախմբման մասին է, որոնք կեանքի և մահու նշանակութիւն ունեն։ Միլտօնը հասկանումէ այն, ինչ որ ասումէ. նա բոլոր ուժով հասկանումէ և իւր հոգու զօրութիւնը դնումէ արտայալտելու ալդ։ Թէպէտ և նա չէր սիրում սուտ եպիսկոպոսներին՝ բայց սիրումէր ճշմարիտ եպիսկոպոսներին, իսկ Պալլիսական լճի գեկավարը նրա գրուածքի մէջ

ճշմարիտ եպիսկոպոսութեան մի նախագաղափար և գլուխ է երեւու ։ Դա նրա համար է, որ Միլտօնը բոլորին բարեխղճութեամբ է կարդում «տալիս եմ քեզ երկնալին թագաւորութեան բանալիները «բնաբանը»։ Թէպէտ և նա մաքրակրօն էր (պուրետանին), բայց չի ջնջում ալդ բնաբանը նրա համար, որ եպիսկոպոսները վատ էին. ոչ, Միլտօնի խօսքերը հասկանալու համար մենք պէտքէ նախ հասկանանք բնաբանը, մեզ հարկաւորչէ լինւել նրա վրայ և շշնջալ նրա ականջն՝ իրթէ ալդ թշնամական աղանդների հիմքն է։ Բայց կարելի է մեզ համար աւելի հեշտ կընի դատել նրա մասին, եթէ որ առ ժամանակ թողնենք նրան, մի քիչ հեռուն գնանք, ապա վերադառնանք նրան։

Պարզ է, որ ճշմարիտ եպիսկոպոսութեան ոյժերի ստիպողական հաստատութիւնն ի նկատի ունի հարկաւորել մեզ հասկանալու այն մեղադրանքների բոլոր ծանրութիւնը, որոնց ենթարկւումեն եպիսկոպոսական աստիճանին և առհասարակ եկեղեցական միաբանութեան որ եւէ աստիճանի կամ իշխանութեան ազօրենի թիկնածուները, — նրանք, որոնք իրենց «որովայնի համար ներս են մտնում, ներս սողում, ներս սուեն պը ծնում փարախը»։

Մի մտածէք թէ Միլտօնն ալդ երեք բայերը դնումէ եւը ոտանաւորը լրացնելու համար, ինչպէս կանէր մի որ եւէ ուրիշ գրող։ Նրան իսկապէս հարկաւոր էին ալդ երեքը և աւել ոչինչ։ «Ներս են սողում, ներս են պը ծնում, ներս են մտնում», — այստեղ ուրիշ ոչ մի խօսք պէտքական չէ և չը կալ մի ալնպիսի խօսք, որ կարելի լինի աւելացնել նրանց վրայ։ Այդ երեք խօսքերով բոլորովին աւարտւումեն այն մարդկանց երեք բնաւորութիւններին համապատասխան երեք գասակարգերը, որոնք անբարեխղճութեամբ հասնումեն եկեղեցական իշխանութեանը։ Առաջինը՝ այն մարդկելը, որոնք «Ներս են սողում» փարախը. նրանց համար եւ՝ պաշ-

տօնը, և՝ կոչումն անխտիր են, բացի գաղտնի ազդեցութիւնից՝ նրանց ոչինչ հարկաւոր չէ. նոքա ամենքանի մէջ ծածուկ և խորամանկութեամբ են վարւում, համաձայնւումնեն ամենաստորացուցիչ պարտականութիւներին և վարմունքներն, միայն թէ գաղտագովի թափանցեն մարդկանց հոգիների մէջ և լուելեայն փոխեն այդ հոգիների ուղղութիւնը: Յետու գալիս են «Ներս պլըծնող» մարդիկը, նըրանք, որոնք շնորհիւ բնածին լրութեան, զօրեղ պերճախօսութեան և աներկեւղ յամառութեան՝ ինքնահաստատութեամբ գրաւումնեն ամբոխի ուշադրութիւնն ու ձեռք բերում նրա վրայ իշխանութիւն: Եւ, վերջապէս, «Ներս են մտնում» նըրանք, որոնք հասնումեն բարձր աստիճանի և զօրութեան, դառնումեն «ժառանգական իշխողներ»՝ թէպէտ և ոչ հօտին օրինակ դառնալու գիտակցութեան և աշխատանքի միջոցիւ, այլ յամառ աշխատանքի և հիմնաւոր գիտակցութեան, որոնք բացառապէս ծառալում են միայն անձնական պատուափրութեան իսկական նպատակներ:

Նարունակենք.

«Մնացած բաների համար նոցա վիշտը քիչ է, միայն թէ մտնեն խուզած ոչխարի մօտ խնջուքը: Կոլը բերաններ»:

Դարձեալ կանգ եմ առնում, այդ արտայալառութիւնը շատ օտարութի է. կարելի է այդ ընդունել մի անկանոն, կեղտոտ և անկերթ փոխարերութեան տեղ: Բայց ոչ. նրա համաձայնութիւնն ու եռանդը հիմնւում են այն բանի վրայ, որ գրաւէ մեր ուշադրութիւնն ու մնալ մեր լիշողութեան մէջ: Այդ երկու կարճ խօսքերն ամենամեծ ճշտութեամբ արտայալառումեն եկեղեցական երկու բարձր սլաշտօնների—եպիսկոպոսի և հովուի իսկական իմաստի հենց հակառակը: Եպիսկոպոս կոչումեն նրան, ով որ նալումէ, իսկ հովիւ կոչումեն նրան, ով որ կերակրումէ: Եպիսկոպոսի աստիճանին անլարմար յատկութիւնը—կուրութիւն է,

հովուի աստիճանին անլարմար—բերանը: Վերցըէք այդ երկու հակադարձ յատկութիւնները միասին և կ'ստանաք «կոլը բերաններ»: Հետեւենք այդ գաղափարին մի քիչ հեռու: Համարեա եկեղեցական բոլոր թշուառութիւնները ծագել են նըրանից, որ եպիսկոպոսները ձգտել են իշխանութեան և ոչ լուսին: Նոքա հեղինակութիւն էին կամենում և ոչ հսկողութիւն, այն ինչ նոցա իսկական նշանակութիւնը բոլորովին այն չէ, որ կառավարեն (թէպէտ և մասամբ այն է, որ իշխանաբար խրատեն և յանդիմաննեն). կառավարելը թագաւորի գործն է, իսկ եպիսկոպոսի գործն է հսկել հօտին, մի առ մի համարել ոչխարը, միշտ պատրաստ լինել լիակատար հաշիւ տալու: Ակներեւէ, նա չի կարող հօտի հոգու համար պատասխանել, եթէ ըլգիտէ քանի գլուխ կայ: Հետեւաբար ամեն մի եպիսկոպոսի պարտականութիւնն է այնպիսի գիրք բռնել, որտեղից նա ամեն ժամանակ կարողանալ իմանալ իւր հօտի պատմութիւնը, այսինքն նրա ամեն մի անդամի մանկութիւնն ու ներկայումս նրա դրութիւնը:

Այս այնտեղ անկիւնում նիւլն ու նանսը միմիանց անդամներ փշումեն: Արդեօք այդ մասին գիտէ եպիսկոպոսը, նայնում է նըրանց, նայել է մինչեւ այժմ: Կարողէ մանրամասն կերպով բացադրել, թէ նիւլն ինչպէս է սովորութիւն ստացել ծեծել նանսի գլուխը: Եթէ չի կարող, նա բոլորովին եպիսկոպոս չէ, թէեւ նրա գլուխն սալիսբօրիական զանգակատան բարձրութեամբ մի խոր կայ: Նա եպիսկոպոս չէ որովհետեւ իւր համար տեղ է ընտրել զեկի մօտ և ոչ կալմի կատարին. նա այնտեղից ոչինչ չի տեսնում: «Ո՛չ, կ'ասէք դուք, երբէք եպիսկոպոսի պարտականութեան մէջ չի մտնում անկիւնում դիտել նիւլին»: Ինչպէս, միթէ դուք մտածումէք, որ նրա պարտականութիւնն է միայն հսկել փառաւոր գեղմով չաղ ոչխարներին, այն ինչ մնա-

ցած քաղցած ոչխարները բարձրացնումեն գլուխները և անկերակուր մնում, իսկ կատաղի գալլը լափշտակող թաթով (առանց եպիսկոպոսի գիտութեան) շտալով պատառուտում է նրանց ամեն օր:

«Մենք բոլորովին ալդպիսի առաջարկութիւն չունենք եպիսկոպոսի մասին»: Կարելիէ, բայց նրանց մասին ալդպիսի առաջարկութիւն ունէին Ս. Պետրոսն ու Միլտոնը: Կարելի է նոքա են ճշմարիտ, կարելի է մենք, բայց իզուր է մտածել, թէ մենք կարդում ենք Ս. Պետրոսին կամ Միլտոնին, եթե աշխատում ենք նոցա խօսքերի մէջ դնել մեր սեպհական մտքերը:

Նարունակումեմ:

«Բայց քամիով ու դառն մառախուղով փքուած, որը նոքա շնչումեն...». այդ վերաբերումէ այն սովորական արտալայտութեանը՝ թէ «Եթէ ալդրատների մասին չեն հոգում մարմնառապելս, հոգումեն հոգեպէս, նրանց տալիս են հոգեւոր կերակուր չունեն, նոքա փքուած են քամիով: Ակըռում ձեզ կարող է թուալ, թէ այդ ոչ միայն կոսկիտ, այլ և մի մութ երեւովթ է: Սակայն այդ բառ առ բառ ուղիղ է: Վերգրէք ձեր լատիներէն և յունարէն բառարաններն ու որոնեցէք «շունչ» (spirit) խօսքը: Դա լատիներէն այն խօսքի կրծատումն է, որը նշանակումէ շնչումն (breath), և յունարէն այն խօսքի մութ թարգմանութիւնը, որը նշանակումէ «քամի»: «Քամին փչումէ, ուր կամենումէ» ոտանաւորի մէջ միեւնոյն խօսքն է, ինչոր «Ալդպէս է լինում շունչից ծնուած ամեն մէկի հետ» ոտանաւորի մէջ, այսինքն՝ որը ծնուելէ փըչումից, շնչումից, որովհետեւ շունչը Աստուծոյ շընչումն է մարմնի և հոգու մէջ: Այդ խօսքի իսկական նշանակութիւնն արտալայտումէ մեր «ներշնչումն» և «շունչ տալ» խօսքերի մէջ: Բայց կան-

երկու տեսակ շնչումն (շունչ), որոնցով կարող են լցուել հօտերը. դրանք են՝ Աստուածային շնչումն և մարդկալին շնչումն: Աստուածային շնչումը նրանց համար կեանք, առողջութիւն և խաղաղութիւն է, ինչպէս լեռնալին օդը սարերի վրայ արածող ոչխարների համար: Իսկ մարդկալին շնչումն այն խօսքերն են, որոնց մարդ հոգեւոր է անուանում. դա ալնալիսի հիւանդութիւն և ախտէ, ինչպէս ճահճի մառախուղը: Նոքա դրանից նեխւում, փքուումեն, ինչպէս դիակը փքուումէ իւր քայլքայման գաղերով: Այդ ամենը բառ առ բառ ճիշտ է բոլոր սուտ աղանդների վերաբերութեամբ, որովհետեւ նոցա առաջին, վերջին և ամենաօրհասական նշանը—փքումն է: Վերադարձած որդիները, որոնք սովորեցնում են ծնողներին. վերադարձած աքսորւածները, որոնք ուսուցանումեն ազնիւ մարդկանց. վերադարձած գուեհիկները, որ իրենց կեանքի կէսն անց են կացրել լիմարութեան և ապշութեան մէջ, բայց լանկարծ յարուցանումեն, թէ կայ մի որեւէ Աստուած և իրենք այդ Աստուծոյ կողմից ընդբռուած և ուղարկուած մարդիկ են. բոլոր զանազան աղանդառները, մեծերն ու փոքրերը, բողոքականներն ու կաթոլիկները, highchurch և low-church, նրանք, որոնք իրենց բացառապէս ուղիղ են համարում, իսկ մնացածներին մոլորւած, և ամենից աւելի որեւէ աղանդի այն անդամները, որոնք երեւակալումեն թէ փոխանակ ճշմարիտ վարմունքի կարելի է աղատւել ուղիղ մտքերով, փոխանակ գործի՝ խօսքերով, փոխանակ աշխատանքի՝ ցանկութեամբ.—ահա ձեզ մառախուղի ճըշմարիտ որդիները, առանց խոնաւութեան ամպերը, առանց արեան և մսի՝ մորթուց ու խոնաւութիւնից ապականւող մարմինները—«քամիով և դառն մառախուղով փքուած, որը շնչումեն»:

Այժմ դառնանք բանալիների իշխանութեան խօսքերին,

որովհետեւ արդէն կալող ենք հասկանալ նոցա նշանակութիւնը:

Նկատեցէք այդ իշխանութեան մասին Միլտոնի և Գանթէի հասկացողութեանց մէջ եղած տարբերութիւնը. այս անգամ վերջինս աւելի թող է երեւում. նրա գրուածքի մէջ երկու բանալիներն ել արքայութեան դռներից են՝ մինը ոսկի, միւսը արծաթի, Պետրոս առաքեալը տալիս է բանալիներն այդ դռներին հսկող հրեշտակին: Բայց Միլտոնի մօտ նրանցից ոսկին—արքայութեան բանալին է, երկաթին—այն բանտի բանալին, ուր պիտի տանջուկին չարդաստիարակները, որոնք «լափշտակել են գիտութեան բանալիները, բայց իրենք չեն մտնում այդ դռներից»:

Մենք տեսանք, որ եպիսկոպոսի և հովուի պարտականութիւնն է նայել ու կերպել, և այն ամենի մասին, ով որ կատարումէ այդ, ասուածէ. «Ով որ խմացնումէ, ինքն ել ծարաւի չի մնալ». Ով որ չի խմացնում, ինքն ել կըցամաքուի, ով չի նայում, նրան կը թագցնեն յաւիտենական բանտի մէջ: Այդ բանտը բաց է անում իւր գոները մեր առաջ ոչ միայն տպագայ կեանքում, այլ և այս կեանքում. ով որ կապուած կըլինի երկնքում, նախ պէտքէ կապուի երկրիս վրայ, Ուժեղ հրեշտակներին տուած այն հրամանը, որոնց իրեւ նախաբան ծառայումէ վէմ-առաքեալը, թէ «վերցըք նրան, կապեցէք ոտ ու ձեռքը և ձգեցէք այնտեղ», աւել կամ պակաս չափով ուղղուած է և դաստիարակի դէմ այն ամեն ճշմարտութեան համար, որը նա թագցնումէ, այն ամեն ստութեան համար, որը նա ներշնչումէ, այն մերժման համար, որը նա անումէ օգնութեան փոխարէն: Որքան աւելի է նա զլթայում, այնքան աւելի պինդ է զլթայում ինքն, որքան աւելի է մոլորեցնում, այնքան աւելի հեռուն է արտաքսւում, մինչեւ որ, վերջապէս, երկաթեալ փանդակի ցանցերը փակումեն նրան

յա հանան, ինչպէս «լաւիտեան փակումէ երկաթէ բանալին»: Ինձ ինչպէս թւումէ, մենք արդէն մի բան դուրս բերինք լիցիդալի այդ տողերից. նրանց մէջ դեռ աւելի շատ բան կարելի գտնել, բայց մեր դրածն ել բաւականէ «ընթերցանութեան» համար իսկական օրինակ լինելու: Կարդայի նշանակումէ քննել գերքը համարեա բառ առ բառ, նկատել ամեն մի շեշտում և արտայալտութիւն, անդադար հեռանալ հեղինակի առաջից և նրան տեղ տալ, ոչնչացնել սեպհական անհատականութիւնը և նրանը դառնալ. այդ ժամանակ միայն իրաւունք ունենալու թէ՝ «ալգպէս է մտածել Միլտոնը, իսկ ես այդպէս չեմ մտածել՝ անկանոն կարդալով Միլտոնին»:

Այդ գործողութիւնը փոքր առ փոքր կըսովորեցնէ ձեզ ուրիշ գէպերում ել քիչ նշանակութիւն տալ այն բանին, որը դուք մտածել էք: Դուք կըսկէք նկատել, որ այդ նշանակութիւնն առանձին կարեւորութիւն չունի, որ ձեր մտքերը, ինչ առարկալի մասին ել ուզումէ լինի, չեն գերազանցում ոչ աւելի պարզութեամբ, ոչ չափազանց խորիմաստութեամբ և, ի վերջու, այն եղբակացութեան կըգաք, որ դուք իսկապէս մինչեւ անգամ բոլորովին ոչինչ «մտքեր» չունէք—եթէ դուք արդէն բոլորովին հազուագիւտ մարդ չէք. որ դուք որեւ է լուրջ առարկալի մասին «մտքերի» համար նիւթեր չունիք, այլ պէտքէ աշխատէք աւելի շատ փաստեր իմանալ: Բայց և ձեր բոլոր կեանքում (կըկնումեմ, եթէ դուք բոլորովին բացառական արարած չէք) ոչ մի գործում «կարծիքների» իրաւունք չէք ստանալ, բացի նրանցից, որ ձեր ձեռքի տակն է: Եթէ անհրաժեշտ է մի բան անել, դուք միշտ առանց սխալւելու կըգուշակէք, թէ ինչպէս լաւ է անել այդ: Զեզ հարկաւորէ տունն ըստ կարգին պահել, ապրանքը ծախել, դաշտը հերկել, ջրանցքը մաքրել: Թէ ինչպէս լաւ է կատարել այդ ամենը, կարծիքները չեն

բաժանում այդ մասին։ Բացի ձեր անմիջական գործից կան դեւ եւս երկու երեք առարկաներ, որոնց մասին գուշ պէտքէ որոշ կարծիքներ ունենաք։ Օրինակ՝ այն մասին, թէ սուտն ու խարդախութիւնը դատապարտելի են և հարկաւորէ անլավաղ հեռացնել նրանց, հենց որ մի տեղ կը նկատէք. այն մասին, թէ ադահութիւնն ու դէպի վիճաբանութիւններն ունեցած հակումը վտանգաւորեն մինչեւ անգամ մանուկների մէջ, իսկ չափահաս մարդկանց և ժողովուրդներին դէպի կորուստն են տանում, այն մասին, թէ խսկապէն երկնքի և երկրի Աստուածը սիրումէ հեղ, գործունեալ և բարի մարդկանց և ատում է հպարտ, դադարկալորտ, ազահ և կոպիտ մարդկանց։ Այդ ընդհանուր փառտերի մասին դուք պէտքէ ոչ միայն որոշ կարծիքներ ունենաք, այլ և յամառութեամբ պահէք նրանց։ Ինչ վերաբերումէ մնացածին, — զանազան գիտութիւններին, արուեստներին և եկեղեցական կառավարութեան եղանակներին, — դուք կը համոզուէք, որ իսկապէս ոչինչ չըգիտէք այդ մասին և ոչինչ չէք իմանում. որ ամենից լաւը, որը կարող էք անել, եթէ մինչեւ անգամ կրթուած մարդ էք, է լուել և աշխատել փոքր առ փոքր խելացիանալ ամեն օր և հասկանալ ուրիշի մտքերը. բայց այդ տեղ եւս, եթէ գործը բարեխղճութեամբ կը ձեռնարկէք, շուտով կը համոզուէք, որ ամենաիմաստուն մարդկանց կարծիքներն անգամ համարեա ամբողջովին համաձայնւումեն պատշաճ հարցելի վրայ։ Տարակուսանքին պարզ ձեւ տալ, պարզ կերպով ներկալացնել նրա անլուծելիութեան բոլոր պատճառները — ահա այն ամենը, ինչ որ նոքա մեծ մասամբ կարողանումեն անել։ Դեռ լաւ է, եթէ նոքա կարողանումեն «զետեղել մեր մտածմունքների մէջ երաժշտութիւնը և տիրացնել մեզ երկնալին կասկածներով»։

Այն գրողը, որին կարդացի, ոչ առաջիններից է և ոչ

էլ խմաստուններից. նա իւր շրջահայեցողութեան սահմաններում երեւում շատ պարզ կերպով, դրա համար էլ հեշտ է հասնել նրա մտքերի խորքին. բայց աւելի մեծ մարդկանց մօտ այդ խորութիւնն անլատակ է, նոքա մինչեւ անգամ չեն կարողանում չափել։ Ի՞նչ կըլինի, եթէ որ ես խնդրէի ձեզ որոնել ոչ թէ Միլատոնի, այլ Շէքսպիրի կարծիքը։ Արդեօք ձեղանից մէկը գէթ փոքր ինչ հասկացողութիւն կունենայ, թէ ինչէ մտածել այդ առթիւ Շէքսպիրը կամ Դանթէն։ Երբ և իցէ համեմատել էք «Միշարդ III-ի» մէջ եպիսկոպոսների պատկերը կրանմէրի որոշ լատկութեան հետ։ Համեմատել էք Ս. Փրանցիսկայի և Ս. Պօմինիկոսի նկարագրութիւնն այն նկարագրութեան հետ, որը զարմացրեց Վիրգելիալին իւր «dienteso, tanto vilmente, nell' eterno esilio» տեսքով, կամթէ նրա հետ, որի մօտ կանգնած էր Դանթէն իւր come'l frate che confessa lo perfido assassin»-ով։

Կարծեմ որ Շէքսպիրն ու Ալեգէրիեն մարդկանց աւելի լաւ էին ճանաչում, քան թէ մեր մեծամասնութիւնը։ Նոքա երկուսն էլ աշխարհական և կրօնական իշխանութիւնների մէջ ծագած տաք կուուի կենդրոնումն էին և նրան մտիկ տուած՝ բռնում էին որեւէ կարծիք։ Բայց որտեղ է այդ կարծիքը, տուէք այստեղ։ Մեկնեցէք Շէքսպիրը և Դանթէի վարդապետութիւնը յօդուած առ յօդուած և ներկայացրէք եկեղեցական դատարանին։

Ասումեմ շատ և շատ օրեր կ'անցնեն մինչեւ որ դուք կը հասնէք մեծ մարդկանց վարդապետութեան և թագցրած մտքերին։ Բայց գէթ մի քիչ բարեխղճութեամբ կարդացէք նրանց և դուք կ'ըմբռնէք, որ պատահական նախապաշարմունքն ընդունել էիք ձեր «դատողութեան» փոխարէն և Դանթէն ձգուած մտքերի քամիով հալածւած, խճուած

դադարկ սխալմունք է։ զըտեսնէք, որ մարդկանց մեծամասնութեան մտքերը շատ քիչ բանով են զանազանուում մասսամբ անպտուղ, մասսամբ թունաւոր մացառներով և քամիով ցանւած, չարագուշակ խոտերով խեղդուած վալրենի դադարկութիւնից։ Կըտեսնէք, որ առաջին բանը, որը դուք պէտք անէք ձեր և նրանց համար, է այրել այդ ամբողջ դադարկութիւնը անխնայ արհամարհանքով, որուն օգտակար մոխրակուտ գալձնել, ապա հերկել ու ցանել։ Գրականական ասպարիզում ձեր բոլոր իսկական աշխատանքը պէտք է սկսուի. հնազանդելով «վերցրէք ցորեանը և մի ցանէք թփերի մէջ» հրամանին։

II Երբ որ դուք ուշադրութեամբ լսէք մեծ դաստիարակներին նոցա մտքերի մէջ թափանցելու համար, կերեւակայէք աւելի բարձր մագլցել և թափանցել նոցա սրտերի մէջ։ Ակզբում դուք դիմում էք նրանց հալեացքների պարզութեան համար, լետոյ մնումէք միանալու նոցա արդար և կարող մտքերին, նոցա ցանկութիւններին ու դիւրազգացութեանը։ Ես չեմ վախենում այդ խօսքերից և գեռ աւելի քիչ եմ վախենում նոցա նշանակութիւնից։ Վերջին ժամանակներս շատերը գոռում գոչում էին դիւրազգացութեան դէմ. բայց հաւատացնումեմ ձեզ, մենք տանջւումենք ոչ թէ նրա աւելորդութիւնից, այլ պակասութիւնից։ Զգալու ընդունակութիւնն աւել կամ պակաս ուժով պալմանաւորում է աւել կամ պակաս ազնւութիւն ինչպէտ մարդկանց մէջ, այնպէս էլ կենդանինեցի մէջ։ Եթէ մենք ծովալին սպունգ լինէինք, մեզ՝ վրայ տպաւորութիւն թողնելը գըժուար կըլինէր. եթէ գետնի որդ լինէինք, որն ամեն մի ըոսպէ կարողէ կոխուելուց երկու կէսի բաժանել, չափանց սաստիկ տպաւորութիւնը մեզ համար վնասակար կըլինէր։ Բայց որովհետեւ մենք մարդ ենք, դա մեզ համար առողջարար է, դրանից առաւել հերկանակութիւնը միան մատուցում է անուանել «եղանակ» և հոգու մարդուս ուամիկ դարձնում։ Նրա ուամկականութիւնը միշտ չափումէ դէպի համակրութիւնն ու արագ հասկացողութիւնն ունեցած անընդունակութեամբ և դէպի այն, որը բոլորովին ուզիղ կերպով ընդունուած է անուանել «եղանակ» և հոգու մարմնի շօշափելի ընդունակութիւն։ Դրանցով ծառերից ամենից աւելի գերազանցումէ մի-մօգան, արարածներից—ազնիւ կինը։ Բանականութեան համար այդ անհասկանալի նրբութիւնն ու զգացողութեան լիակատարութիւնը առաջնորդում է լուսաւորումեն բանականութիւնը։ Բանականութիւնը որոշում է միայն ճշմարիտը, իսկ Աստուծոյ ստեղծած բարին իմանումէ միայն Աստուծոյ շնորհած զգացմունքը։

թիւնը կախում ունի մեր դիւրազգացութիւնից, և մեր արժանաւորութիւնը պալմանաւորումէ այն ցանկութեան չափով, որին ընդունակ ենք։

Յիշում էք, որ ասացի ձեզ թէ հանգուցեալների անարատ և մեծ շրջանն անմատչելի է ամեն մի ստոր և ուամիկ մարդուն։ Զեր կարծիքով ես ինչ էի հասկանում այդ «ուամիկ» խօսքի տակ և դուք ինքներդ ինչ կըհասկանաք «ուամկականութիւն» խօսքի տակ։ Ահա մտածելու համար մի հարուստ խնդիր. բայց կարճ խօսքերով ուամկականութեան էութիւնն որոշումէ դիւրազգացութեան պակասութեամբ։ Հասարակ, պարզամիտ ուամկականութիւնը միայն հոգեկան և մարմնական ընդունակութիւնների բժամտութիւն է, որ պալմանաւորումէ զարգացման և կրթութեան բացակայութեամբ, բայց իսկական, բնածին ուամկականութիւնը հասկացումէ որպէս մի զարհուրեցնող անզգայութիւն, որը դառնումէ անասնական ամենահնարաւոր սովորութիւնների աղբեւր. դա մարդուս ընդունակ է դարձնում առանց երկիւղի, առանց բաւականութեան և կարեկցութեան յանցանքներ գործել։ Մարմնական բժամտութիւնն ու հոգեկան մեռելիութիւնը, ստոր վարքն ու կոշտ խիզճը—ահա թէ ինչն է մարդուս ուամիկ դարձնում։ Նրա ուամկականութիւնը միշտ չափումէ դէպի համակրութիւնն ու արագ հասկացողութիւնն ունեցած անընդունակութեամբ և դէպի այն, որը բոլորովին ուզիղ կերպով ընդունուած է անուանել «եղանակ» և հոգու մարմնի շօշափելի ընդունակութիւն։ Դրանցով ծառերից ամենից աւելի գերազանցումէ մի-մօգան, արարածներից—ազնիւ կինը։ Բանականութեան համար այդ անհասկանալի նրբութիւնն ու զգացողութեան լիակատարութիւնը առաջնորդում է լուսաւորումեն բանականութիւնը։ Բանականութիւնը որոշում է միայն ճշմարիտը, իսկ Աստուծոյ ստեղծած բարին իմանումէ միայն Աստուծոյ շնորհած զգացմունքը։

Մենք այսնւումենք հանգուցեալների մեծ շըջանում ոչ միայն նրա համար, որ նոցանից իմանանք թէ ո՞րն է ճշմարիտը, այլ աւելի նրա համար, որ նոցա հետ միասին զգանք թէ ո՞րն է արդարը: Նոցա հետ միասին զգալու համար մենք պէտքէ նմանւենք նրանց, իսկ այդ առանց ջանքի մեջանից ոչ ոքին չեն տալ:

Իսկ և իսկ ճշմարիտ խելամտութիւնը՝ կարգաւորւած և ստուգուած իմացականութիւնն է, այլ ոչ թէ առաջին միտքը, և իսկական ցանկութիւնը՝ կարգաւորւած ու ստուգուած ցանկութիւնն է և ոչ թէ ցանկութեան առաջին ձգտումը: Նրա առաջին ձգտումները սուտեն, կեղծ և խաբերայ. եթէ դուք անձնատուր լինէք նրանց, նոքա անմտաբար կըգրաւեն ձեզ ի գուր հետամտութեան և անպտուղ հրճուանքի մէջ, մինչեւ որ, վերջապէս, դուք կըզրկուէք ամեն մի ճշմարիտ նպատակից, ամեն մի ճշմարիտ ցանկութիւնից: Մարդուս մատչելի ամեն մի զգացմունք ինքն ըստ ինքեան վատ չէ, նա վատ է միայն այն ժամանակ, երբ կարգաւորւած չէ: Նրա արժանաւորութիւնը կալանումէ զօրութեան և արդարութեան մէջ, պակասութիւնը—թուլութեան և անպատշաճութեան մէջ: Կայ զգացմունքի և փոքրիկ տեսակը. օրինակ՝ երեխայի զարմոնքը, երբ նայումէ թէ ինչպէս ձեռնածուն վեր է շալրտում ոսկեայ դունտերը: Այդ զարմանքը ստոր կարգի է: Բայց միթէ կըմտածէք, որ նոյնքան ստոր է և աւելի զօրաւոր չէ այն զարմանքը, որով լցնումեն մարդուս հոգին զիշերային երկնքի վրայ թուզող ոսկեալ դնտերը, որ ձգումէ նոցա ստեղծող Ձեռքը: Կայ և հետաքրըութեան փոքր տեսակը. օրինակ՝ երեխայի հետաքրըութիւնը, երբ բաց է անում իրեն արգելւած դուռը, և ծառալի հետաքրըութիւնը, երբ հարց ու փորձով իմանումէ տիրոջ գործերի մասին: Բայց կայ և ուրիշ տեսակ հետաքրըութիւն, դա ազնիւ հետաքրըութիւնն է:

Նա կեանքի վտանգով որոնումէ մեծ գետի ակունքներն աւագուտ անապատների ետեւ, մեծ ցամաքի տեղն ովկեանուախ ետեւ. իսկ դեռ աւելի բարձր հետաքրքրութիւնն որոնումէ կեանքի դետի ակունքը և երկնալին ցամաքի տեղը.— հեշտակները ձգտումեն այդպիսի հետաքրքրութեան: Ստորէ այն աղմուկը, որով դուք հետեւումէք դադարկ վէպի հանգամանքների ըոպէական փոփոխութիւններին և աղէտներին. բայց, ինչպէս էք մտածում, արդեօք, աւելի բարձր չէ այն աղմուկը, որով դուք հետեւումէք մեռնող ազգի ճակատագրին և նրա ճգնաժամին:

Աւաղ, ժամանակակից Անգլիայում պէտք է ողբալ ոչ թէ զգայնութեան ոյժը, այլ զգացմունքի ստորութիւնը և նանրասիրութիւնը: Այդ զգացմունքն սպառումէ ծաղկափունջների և ծառերի վրայ, ինչովքների և տօնախմբութիւնների վրայ, խտրտախ պատերազմների և ցուցահանդէսների փալուն խաղալիքների վրայ, բայց երբ ձեր աչքերի առաջ մարդասպանների դանակների տակ կորչում ոչնչանումէ մի ամբողջ ազգ, դուք նայում էք առանց արտասունքի և չէք փորձում ազատել նրան:

Ես ասացի զգացմունքի «նանրասիրութիւն» և «եսականութիւն», բայց ինձ համար լաւ կըլինէր ասել «անազնւութիւն» և «անհիմնաւորութիւն». ոչ մի բան այնպէս չի զանազանում ջէնտալմէնին ռամիկ մարդուց և ազնիւ ազգը (այդպիսի ազգեր եղել են) որդերի ամբոխից, ինչպէս զգացմունքի ճշմարտութիւնն ու հիմնաւորութիւնը, պարտուպատշաճ հայեցողութեան և հաւասարակուուած մտքերի հետեւանքը: Ամբոխին կարելի է հասցնել ամեն մի հաճելի դրութեան. ընդհանուր առմամբ նրա զգացմունքները կալողեն լինել—և սովորաբար լինումեն—բարի և վեհանձն, բայց նոքա ոչ մի բանի մէջ էլ հիմնաւոր չեն. նա իւր զգացմունքների վրայ իշխանութիւն չունի. շողոքորթու-

թեամբ և գրգռելով սրան կարողէք ներշնչել ինչ որ հաճելի է, մտքերը ներդործումեն նրա վրայ կպչուն եերպով, նա վարակւումէ զգացմունքով, ինչպէս վարակւումէ տէնդով, և չըկայ մի գագարկ բան, որի մասին նա չըսկսի կատաղութեան չափ զարանալ, երբ վրայ է հասնում աստիքը, և ոչ մի այնպիսի մեծ բան, որը նա չըմոռանար մինչեւ մի ժամը, երբ անցնումէ աստիքը: Բայց ջէնտլմէնի և ազնիւ ազդի զգացմունքները ճշմարիտ են, հաւասարակշուած և հիմնաւոր: Օրինակ՝ լու ազգը չի սկսիլ ամբողջ երկու տմիս իւր ազգային սրամտութիւնն սպառել՝ սպանութեան մէջ մեղադրւող որեւէ անպիտանի դէմ ապացոյներ գտնելու համար, և չի սկսիլ ամբողջ երկու տարի նալիւ, թէ ինչպէս են կոտորում միմիանց իւր հարազատ որդիները հազարներով ու տասնհազարներով մի օրւայ մէջ, միեւնոյն ժամանակ միայն մտածել թէ ինչ ազգեցութիւն կարողէ ունենալ այդ բամբակի արժէքի վրայ, և երբէք չաշխատել իմանալու ովէ արդարն և ովէ մեղաւորը: Մեծ ազգը նոյնպէս չի սկսել տաժանակիր աշխատանքի աքսորել իւր թշուառ չարաճճիներին լունական վեց ընկոյզ գողանալու համար, իսկ սնանկներին քաղաքավարի ողջոյնով թոյլ տալ գողանալու միլիոնները և աղքատների ինալոյլութեամբ հարստացած բանկիրներին թոյլ տալ փոկելու «ձեր թոյլութեամբ» իւր դոներն «իրենից անկախ պատճառներով» նա թոյլ չի տալ, որ ահագին կալուածքներ անցնեն այնպիսի մարդկանց ձեռքը, որոնք հարստութիւն են վաստակում Զինական ծովում զբահաւորւած նաւերի երթեւեկութեամբ և թնդանօթների ոռումբերի տակ ափիօվառումով, այնպիսի մարդկանց, որոնք օտար ժողովուրդների վերաբերութեամբ աւազակների «քսակը կամ պահանջին: Մեծ ազգը չի կարող անտարբերութեամբ տես-

նել, թէ ինչպէս են մեզնում նրա անմեղ խեղճերը ճահճալին տէնդից և փիտում քաղցած տիֆից՝ հողատիբոջը շաբաթական վեց պէնս աւել վճարելու համար, և լետոյ դիւական կարեկցութեամբ ու կեղտոտ զգայնութեամբ մտածել՝ թէ արդեօք նրա պարտականութիւնների մէջ չի մտնում սիրով և հոգատարութեամբ ինայել ու փալփալել մարդապանների կեանքը: Բայց միանգամ վճռելով՝ որ առհասարակ ամեն մի մարդասպանութեան դէմ ամենանպատակալարմար միջոցը կախաղանն է, մեծ ազգը գեռ եւս չի կարող ողորմածաբար որոշել մարդասպանութեան մէջ մեղաւորութեան աստիճանը. նա չի սկսիլ ճչալ ինչպէս գալիքը մի երամակ, որ իւր թաթերը սառեցնումէ անբաղդ խելագար մանուկի, կամթէ գլուխը բոլորովին կորցրած սպիտակահեր ցանցառամիտ Օտելլօի արիւնալին հետքերում. նա չի սկսիլ որսալ նրանց հենց այն ժամանակ, երբ ուղարկում է իւր մինիստրներից մէկին հաճոյանալու այն մարդուն, որը հալրերի առաջ սպանումէ աղջիկներին և գիւղական մսավաճառի ճարպիկութեամբ ու սառնասրութեամբ մորթումէ պատանիներին: Եւ, վերջապէս, մեծ ազգը չի ծաղրիլ երկինքըն ու նրա Ոլժերը՝ լինելով այն հաւատին, որն ասումէ թէ փողի մէրը ամեն չարութեան արմատն է, և միեւնին ժամանակ լայտներով, որ այդ սէրը, և ոչ մի ուրիշը, է և կըլինի նրա բոլոր ամենակարեւոր ազգային վարմունքների և ձեռնարկութիւնների հիմքը:

Բարեկամներ, չը գիտեմ մեզ ինչ հարկաւորէ խօսել ընթերցանութեան մասին. մեզ աւելի ունկընդըռութիւն է հարկաւոր, քան թէ ընթերցանութիւն: Ինչ էլ որ լինի, մենք չենք կարող կարգալ, այդ արդէն անկասկած է, ամեն մի ընթերցանութիւն անհնարին է մարդուս համար, եթէ նրա գլուխն ալդպիսի դրութեան մէջ է, նրա համար անհասկանական է ամեն մի մեծ հեղինակի որեւէ խօսքը: Ներ-

Կայումս կատաղի ագահութիւնը մտածողութեան այնպիսի անընդունակութեան է հասցըել անգլիական հասարակութեանը, որ նրա համար փակ է ամեն մի մտաւոր գրքի մուտքը: Իարեբաղդաբար մեր տկարութիւնը համարեա սահմանափակում է մտածողութեան այդ անընդունակութեամբ: Հոգով մենք գեռ փչացած չենք և ինչպէս փաղ՝ զրնգումենք իսկական ոսկու պէս, միայն թէ թափահարեն մեզ ըստ կարգին, թէպէտ և մեր վարմունքներն այն աստիճան վարակուած են փող վաստակելու մտքով, որ, մինչեւ անգամ, երբ բարի սամարացու դեր ենք խաղում և մեր գրանից հանումենք երկու պէնս հիւրին տալու, անպատճառ ասումենք նրան: «տես, երբ որ ես դարձեալ կըգամ, դու պէտք է տաս ինձ չորս պէնս»: Բայց, այնուամենայնիւ, մեր հոգու խորքում թագնուումէ բարի ցանկութիւնների ընդունակութիւնը: Այդ ընդունակութիւնը յայտնուումէ և՝ մեր աշխատանքի մէջ, և՝ մեր պատերազմի մէջ. մինչեւ անգամ ընտանեկան այն անարդար մտերմութեանց մէջ, որոնք հարկադրումեն մեզ կատարել մի չնչին և մասնաւոր վիրաւորանքի համար և շատ հեզութեամբ տանել ընդհանուր խոշոր չարագործութիւնները: Մենք մինչեւ անգամ պահել ենք մեր անխոնջ աշխատասիրութիւնը, թէպէտ և մշակի համբերութեան հետ միացըել իսաղացողի կատաղութիւնը. դեռ մահու և կեանքի համար քաջ ենք, թէպէտ անընդունակ ենք որոշել պատերազմի ճշմարիտ պատճառը. դեռ մահուան և կեանքի ժամանակ հաւատարիմ ենք մեր ընտանիքներին, ինչպէս հաւատարիմեն նրանց ծովալին հրեշներն ու լեռնալին տրծիւթիւնը:

Մինչդեռ այդ ամենը կարելի է ասել մի ազգի մասին, — նրա համար դեռ եւս լոյս կայ: Մինչդեռ նա պահպահ կարելի է ստանալ միացեալ թագաւորութեան արդեօք ինչ կարելի է ստանալ միացեալ թագաւորութեան գրադարանի կայքը ծախելուց՝ համեմատած նրա գինետնե-

(թէպէտ այդ պատիւն անհիմն է), սիրու համար (թէպէտ այդ սէրն եսականնէ) և գործի համար (թէպէտ այդ գործը ստոր է), — նրա համար դեռ լոյս կայ: Բայց միայն լոյս, որովհետեւ այդ ընազիւական անպաշտպան արիասրութիւնը չի կարող երկար տեւել: Ոչ մի ազգ չի կարող յարատեւել, եթէ նա փոխարկուել է որդերի ամբոխի, որը ոչ մի բարի զգացմունքի ընդունակ չէ: Ազգը պէտքէ կարգաւորէ իւր ցանկութիւնները և կառավարէ նրանց, թէ չէ մի գեղեցիկ օր այդ ցանկութիւնները կըվերցնեն մտրակը և ըստ կամաց կը կառավարէն նրան: Իսկ, որ ամենագլխաւորն է, ազգը չի կարող երկար ժամանակ գոյութիւն ունենալ իբրև է վեր փող վաստակող մի ամբոխ: Նա չի կարող անպատճ և իւր գոյութեան համար անվտանգ կերպով արհամարհել գրականութիւնը, գիտութիւնը, գեղարուեստը, կարեկցութիւնը և իւր հոգին կենդրոնացնել պէնսի վրայ: Կարելիէ դուք այդ խօսքերը վալրենի և դաժան էք գտնում, բայց մի քիչ էլ համբերեցնէք և ես կ'ասպացուցանեմ նոցա ճշմարտութիւնը:

I. Առաջինը՝ ես ասումեմ, որ մենք ատումենք գրականութիւնը: Միթէ մենք, ինչպէս մի ազգ, դըքերի վերաբերեալ որեւէ գործ ունընք: Ինչպէս էք մտածում, որքան ենք ծախսում գրքերի, հասարակական և մասնաւոր գրադարանների վրայ՝ համեմատած ձիաների համար արած ծախսերին: Եթէ մի մարդ շատէ ծախսում իւր գրադարանի համար, նրան անուանումենք ցնորւած գրամոլ: Բայց ոչ ոք չի անուանում մէկին ձիասէր: Այն ինչ ձիաներ պահելու համար ամեն օր սնանկանում կործանւումեն, երբէք չի լսուել, որ մէկը սնանկանար կործանւէր գրքեր ունենալու համար: Աւելի առաջ գնանք. ինչպէս էք կարծում, արդեօք ինչ կարելի է ստանալ միացեալ թագաւորութեան գրադարանի կայքը ծախելուց՝ համեմատած նրա գինետնե-

թի կալքի հետ. ինչ լարաբերութիւն կ'ունենայ մեր գրադարանի վրայ ծախաւծ գումարն այն գումարի հետ, որը ծախսումենք ընդիր կերակուրների վրայ: Մենք խօսումենք հոգեկան կերակրի մասին այնպէս, ինչպէս խօսումենք մարմնական կերակրի մասին, իսկ լաւ գիրքն այդ հոգեկան կերակրի անսպառելի աղբիւրն է, մեր ամբողջ կեանքի պաշարը, մեր լաւ կողմի սնունդը. ինչքան երկար կընալի մեզանից իւրաքանչիւրը բոլոր գրքերից ամենալաւին, նախ քան կըմարէ նրա փոխարէն այն, ինչ որ վճարումենք լաւ դիւրմօի համար: Թէպէտ եւ ժամանակ առ ժամանակ պահէլ են մարդիկ, որոնք քաղցած ըրջել են ցնցոտիների մէջ՝ լաւ գրքեր գնելու համար, բայց ի վերջոյ նոցա գրադանն աւելի էժան էլ նստում, քան թէ մարդկանց մեծամասնութեան ճաշը: Մեզանից շատ քիչերն են ենթարկւում արդասի փորձառութեան, և շատ ափսո՞ս. թանկադին իրն աւելի թանկադին է դառնում, եթէ ձեռք է բերում գժուարութեամբ և զրկողութիւններով: Եթէ որ հասարակական գրադարանների արժէքը հաւասարէր հրապարակական ճաշերի արժէքի կեսին, կամ եթէ գրքերն արժէնալին ապարանջանների արժէքի դէժ մի տասներորդ մասը, լիմարներն ու ապուշներն անդամ կարելիէ կասեն, որ թէպէտ ծամելն ու փալլելը շատ լաւ է, բայց և կարդալն էլ վատ չէ: Իսկ այժմ գրականութեան էժանութեան շնորհիւ ամենախելօք մարդիկ անդամ մոռաննումեն, որ եթէ գիրքն արժէ կարդալ, արժէ և գնել: Եթէ գիրքն ունի որեւէ արժէք, նա աւելի մէծ արժէք ունի և գործուած է, կրկին անդամ կարդացուած, սիրւած է վաղ ժամանակներից, նախշուած նկատողութիւններով, և ձեզ համար էլ հեշտ է գտնել նրա մէջ հարկաւոր տեղը, ինչպէս հանումէ զինարանից իրեն հարկաւոր զէնքը և

տանտիկինը ձեռք է բերում նկուղից հարկաւոր սարքը: Տանջանքի հացը—բարի հաց է, բայց լաւ գրքի մէջ հացն աւելի քաղցը է մեղրից, միայն թէ կամենաք ճաշակել: Աղքատ պէտք է լինի այն ընտանիքը, որ իւր կեանքում գէթ մի անգամ չի կարողանում վճարել այնքան բազմապատկւող հացի հաշեւրը: Մենք մեզ հարուստ ազգ ենք անուանում, բայց միեւնոյն ժամանակ այնքան ժամաներից վարձով կոլը, որ այդ հացը որոնու մենք գրադարաններից վարձով վերցրած գրքերի մէջ:

II. Ես ասումեմ, որ մենք արհամարհումենք գիտութիւնը: «Ինչպէս, կըբացականչէք դուք. միթէ մենք չենք ամեն գիտերի գլուխը: Մենք չենք զարմացնում ամբողջ աշխարհին մեր խելացի և անմիտ գիտերով»: Մենք ենք: Բայց միթէ կարծումէք՝ թէ այդ ազգն է անում: Ո՛չ. այդ անւումէ ազգի հակառակ մասնաւոր անձանց փողերով ու ջանքով: Ճշմարիտ է, մենք ուրախ ենք գիտութիւնից որ եւէ շահ դուրս կորցելու և ագահութեամբ լափշատկում ենք ամեն մի գիտական ոսկը, եթէ նրա վրայ փոքր ինչ միս կայ, բայց երբ գիտութեան մարդն է դիմում մեզ ոսկեամար մի պատառ հացի համար, մենք նրան ուրիշ երգենք երգում: Մեզ մօտ հասարակութիւնը երբ և իցէ ինչ է արել գիտութեան համար: Մեր նաւերի ապահովութեան համար մեզ հարկաւոր է իմանալ որ ժամն է և դրա համար փող ենք տալիս գիտանոցին. ի դէմս պարլամենտի թող ենք տալիս ամեն տարի ձանձրացնել մեզ իրենց պահանջներով՝ թէ «շնորհեցէք» բրիտանական մուզէի համար, ուր պահումեն՝ մեր որդիների զուարճութեան համար՝ թուշունների խրտուկակներ: Եթէ մէկը սարքումէ իւր հեռադիտակն ու մի նոր ամպալին բիծ նկատում, մենք կրկնումենք այդ գիտի վրայ, իբր թէ ինքներս ենք գտել. եթէ որսի սիրահար տասն հազար կալուածատէրերից մէկը

նկատումէ, որ երկիրը ստեղծուածէ ոչ միայն ազուէսներին ապաստան ծառալելու համար, և ինքն սկսումէ փորել ու ասել. «ահա ախտեղ ոսկի կալ, իսկ այնտեղ ածուխ», մենք հասկանում ենք, որ դրանում մի միտք կալ և ի դէպ արժանացնում ենք նրան ասպետական արժանաւորութեանք բայց միթէ նոցա պատահական գիւտն օգտակար կըլինի որքան և իցէ խօսել մեր օգտին: Եթէ դուք կասկածումէք ալդ ընդհանուր դրութիւններին, ահա ձեզ ապացուց, որի վրայ արժէ փոքր ինչ մտածել: Այդ ապացուցը ճշմարտապէս մտանացուց է անում գիտութեան մէջ ունեցած մեր սէրը: Սրանից երկու տարի առաջ Բավարիայում ծախւեց Սաղէնչօֆեան հանքալին հաւաքածուն, որ բոլոր գոյութիւն ունեցող հաւաքածուններից ամենալաւն էր և պարունակումէր իւր մէջ կատարելագործութեան շատ օրինակներ, որ անում անյալտ արարածների մի ամբողջ նոր թագաւորութիւն: Այդ հաւաքածուն,—որի հրապարակալին արժէքը մասնաւոր ձեռների տակ յերաւի կըհաւասարւէր միայն հազար կամ մէկ ու կէս հազար ֆունտի, —անդլիական կառավարութեանն առաջարկուեցաւ 700 ֆունտի, բայց մենք չըհամաձայնեցանք տալ 700 ֆունտը և հաւաքածուն այժմ Միւնխէնի մուղէում կըդանուէր, եթէ պրօֆեսոր Օուէնն առանց ժամանակ ու համբերութիւն խնայելու ըլկալէր բրիտանական հասարակութեանը՝ ի դէմս նրա ներկայացուցիչների, և, վերջապէս, թուլաւութիւն ըստանար կանխիկ փողով վճարելու չորս հարիւր ֆունտը, իսկ մնացած երեք հարիւր ֆունտի համար ինքն երաշխաւոր լինել: Ցիշեալ հասարակութիւնը յետով վճարեց նրան, բայց առանց չումէ միայն այն ժամանակ, երբ մի որեւէ բան շողոքոր-

թումէ նրա ինքնասիրութիւնը: Թուաբանական ձեւով հաշուեցէք թէ ինչէ նշանակում այդ փաստը: Հասարակական կարիքների համար ձեր տարեկան ծախքը հաւասարութեանք մօտաւորապէս յիսուն միլիոն ֆունտի (այդ գումարի մի երրորդը զինուորական կարիքների համար է ծախսուում). Եօթն հարիւր ֆունտը յիսուն միլիոն ֆունտին վերաբերութեանք այնպէս, ինչպէս եօթը պէնսը երկու հազար ֆունտին: Այժմ երեւակալեցէք մի ջէնտլմէն, որի կարողութիւնն անլայտ է, բայց նրա հարստութեան մասին կարելի է ենթադրել, որովհետեւ նա տարեկան երկու հազար է ծախսում իւր ծառաստանի պատերի և ծառաների վրայ: Այդ ջէնտլմէնը հաւատացնութեանք, որ շատ է սիրում գիտութիւնը, և ահա մի անգամ ծառաների մէկը մեծ յուզմունքի մէջ նրա մօտ է վազում և ասում, որ իւր տեսակի մէջ միակ հանքալին ժողովածուն, որը բաց է անում աշխատութիւնների մի նոր տարեթիւ, ծախւութեան պէնսով: Յետոյ երեւակալեցէք, որ գիտութիւնը սիրող և իւր ծառաստանի համար տարեկան երկու հազար ծախսող այդ ջէնտլմէնը հարկադրութեանք ծառալին սպասել մի քանի ամիս և, ի վերջով, պատասխանութեանք ալսպէս. «Լաւ, ես կըտամ չորս պէնս այն պայմանով, որ մնացած երեք պէնսն էլ դու վճարես, իսկ ես կըվճարեմ քեզ եկող տարի»:

III. Ես ասացի, որ գուք տրհամարհումէք գեղարուեստը: «Ինչպէս, կ'ասէք դուք. իսկ մեր ցուցահանդէսները, որ ձգուած են ամբողջ մզոն երկարութեամբ. հազար ֆունտը, որ երբեմն վճարումներ մի պատկերի համար և մեր գեղարուեստական ուսումնարաններն ու հիմնարկութիւնները, որ մեզ մօտ աւելի շատ են, քան թէ մի ուրիշ ազգի մօտ»: Այդ ալսպէս է, բայց այդ ամենը խանութիւգործէ: Դուք կըհամաձայնուէք վաճառել ոչ միայն քարածուխ, ալլ և քաթան. ոչ միայն երկաթ, ալլ և ճենապակի,

Եթէ կարողանալիք. դուք կը լիլէիք ամեն մի ազգի բերանի հացի պատառը, բայց որովհետեւ չէք կարող, ձեր կեանքի դաղափարը կանգնումէ աշխարհի ճանապարհների հանգույցի վրայ և, ինչպէս լիւտգէթեան բանտորը, կանչումէ ամեն մի անցորդի. «Համեցէք, ինչ է հարկաւոր»։ Դուք չէք հասկանում ոչ ձեր ընդունակութիւնները և ոչ հանգամանքները։ Ձեր խոնաւ ու ողորկ, կաւոտ ու տղմոտ դաշտերի մէջ դուք մտածումէք նմանւել բրոնզով ցցուած խաղողի այգիների մէջ՝ գեղարուեստական կայտառութեամբ փրանսիացիներին, կամ թէ հրաբխալին ժայռերի ստուերների տակ իտալացիներին։ Երեւակալումէք թէ գեղարուեստը կարելի է սովորել ինչպէս հաշուապահութիւնը և եթէ մէկը կըսովորէ ալդ, նա աւելի հաշուեմատեաններ կըվարէ։ Դուք պատկերներն աւելի չէք սիրում այն լայտարարութիւններից, որոնք կպցրուած են ձեր ցանկապատերին։ միայն լայտարարութիւնների համար միշտ տեղ է գըտնում, իսկ պատկերների համար ոչ։ Լսելով անգամ ըլդետէք թէ ինչպիսի պատկերներ կան ձեր հայրենիքում։ իսկական են նոքա թէ կեղծ, լաւ են պահւում թէ վատ։ Արտասահմանում անտարերութեամբ դիտումէք՝ թէ ինչպէս են փչանում բոլորից արհամարհուած աշխարհիս ամենամեծ պատկերները և թէ ինչպէս են ուղղուած աւստրիական հրացանների բերանները վէնետիկեան այն պալատների վրայ, ուր պահւում են նոքա։ Եւ եթէ լսէիք, որ Եւրոպայում ամբողջ Տիցիաններն աւազի քսակներ են դարձել աւստրիական բերդերի համար, ալդ հանգամանքը ձեզ աւելի քիչ կըվշտացնէր, քան թէ ձեր որսի քսակից երկու երեք թռչունի պակասելը։ Ահա ալդպէսէ գեղարուեստի վրայ ունեցած ձեր ազգային սէրը։

IV. Դուք արհամարհումէք բնութիւնը. դրանով ես կամենումեմ ասել, որ դուք արհամարհում էք անշօշափելի

բնութեան խորին և սուրբ տպաւորութիւնները։ Փրանսիական լեղափոխականները ախոռներ դարձրին փրանսիական եկեղեցիները, իսկ դուք ձիարշաւների տեղ դարձրիք ամբողջ տիեզերքի տաճարները։ Ձեր միակ բաւականութիւնն է ճանապարհորդել վագոններում ալդ տաճարների սահմաններում և նախաճաշել նոցա բեմերի վրայ։ Դուք երկաթուղարին կամուրջ անցկացրիք Նաքհառւզէնի ջրվէժի վրայից, ներքնուղի փորեցիք Լիւցերնի ժալուերում՝ թէլլի մատուռի մօտ, ոչնչացրիք ժնեւիան լճի կլարեան ափը. ամբողջ Անգլիայում այժմ չի մնացել մի խաղաղ հովիտ, որը լցրած ըլլինէք հրդէհի բոցով. մի կտոր հող, որի մէջ թաղած չը լինէք քարածուխի մոխիրը. օտար երկրներում չը կայ մի մայրաքաղաք, ուր ձեր ներկայութիւնը ըլբալտնուէր հրաշլի հին փողոցներում և խաղաղ ալգիներում նոր հիւրանոցների և անուշահոտ օծանելիքների խանութների ամենակուլ բորոտութեամբ։ Նոյն իսկ Ալպերը, որ երբեմն այնքան սիրելի էին ձեր բանաստեղծներին, ձեզ համար զբոսանքի տեղ են դարձել. ձեզ անշօւշտ հարկաւոր է նրանց վրայ բարձրանալ և հրճուանքով ճըղալով յետ սողալ, բայց երբ ճչալու համար ձեր ձախնը չի բաւականանում և ուրախութիւն արտալայտելու ոյժ չունիք, դուք խացնումէք հովիտների լուութիւնը վառօտի պալմումով և գլխիվայր տուն էք դառնում գոհացած՝ փասասիրութեան քրտինքով թրջուած ու ինքնաբաւականութեան ջղաձիգ հեծկլտանքով խեղտուած։ Գուցէ այն երկու տիսուր տեսարանները, որ երբ և իցէ մարդկութիւնը ցոյց է տուել ինձ և եթէ հականանք նոցա ներքին միտքը, մինը անգիւական ամբոխն է, որ պարապւումէ Նամունիեան հովտում ժանգուած «գովիտցերների» հրացանաձութեամբ, միւսը Ցիւրիխում զուկիցերիական խաղողի հաւաքողները, որոնք հաւաքւումեն «խաղողի աշտարակների» վրայ և իրենց շնորհակալութիւնը

արտայալտում երկրավին պատուղների առարութեան համար՝ դանդաղ կերպով լցնելով ստրճանակներն ու առաւօտից մինչեւ ուշ գիշերը դանդաղ կերպով պարպելով:

Ի հարկէ, շատ ցաւալի է պարզ հասկացողութիւն չունենալ պարտականութեան մասին, բայց աւելի ցաւալի է ալդպիսի հասկացողութիւն ունենալ զուարճութեան մասին:

Թուք արհամարհումէք կարեկցութիւնը: Ալդ ապացուցանելու համար ինձ հարկաւորչէ շատ բան աւելացնել, բաւական է միայն տպագրել այն յօդուածներէց մինը, որոնց ես սովորութիւն ունեմ ամեն առաւօտ կտրել լրագերներից և ձգել գրասեղանի արկղի մէջ: Ալդ յօդուածը Daily Telegraph ներկայ տարուայ սկզբիցն է և թէ որ թուից, դժուար չէ իմանալ, թէպէտ իմ անմաքրութեամբ աննկատելի եմ դարձրել թիւը. կտրի հետեւեալ երեսին յախարարուած է, որ «Երեկ Ռեպոնեան եպիսկոպոսը Ս.Պողոսի տաճարում կատարեց տարուայ եօթներորդ արտաքոյ կարգի պաշտամունքը». այնտեղ միեւնոյն ժամանակ հազորդումէ ժամանակակից քաղաքական տնտեսագիտութեան աշխարհից մի շատ սիրելի լուր: Բայց դա գործին չի վերաբերում. նրա մէջ պատմւումէ ամենաբարեկարգ միջադէպէրից մինը, որն այնպիսի ձեւ էր ընդունել, որ դատարանական քննութիւնէր պահանջում: Ալդ յօդուածը քաղուածօրէն առաջ եմ բերում, որ հետեւեալն է.

«Սպալտօլֆելդում «Սպիտակ Զի» պանդոկում քննիչն օդնական միստեր Ռիչարդսը կատարեց Մալքէլ Կոլինզի մահուտն գործի քննութիւնը, որից երեւաց, որ հանգուցեալը մի աղքատ կոշկակար է եղել և իւր օրական ապրուսը, ընակարանի վարձը հալթալթելու և ընտանեկան օջախը պահպանելու համար իւր որդու հետ միասին գիշեր ցերեկ պարապւումէր հին կոշիկների կարկատանով: Կինը մանէր դալիս քաղաքում, գնում էր հին կոշիկներ, որոնց՝ կարկա-

տելուց յետով ծախում էր շատ աննշան գնով: Ուրբաթ օրը երեկոյեան հանգուցեալը վերէ կենում նստարանից և սկսում է դողալ: Նա յուտակի վրայ է ձգում կոշիկներն ու ասում: «Թող մի ուրիշը վերջացնէ՝ երբ ես կըմեռնեմ, այլ եւս չեմ կարողանում աշխատել»: Սենեակը ցուրտ էր, կինը վերցնում է երկու զոյգ կոշիկներ և վաճառումէ 14 պէնսով, առնումէ մի քիչ ածուխ, հաց և թէլ: Որդին մի քիչ փող էլ ձեռք բերելու համար նստումէ ամբողջ գիշերը և կարկատանով պարապւում, իսկ հանգուցեալը վախճանումէ շաբաթ օրն առաւօտեան: Դրանից յետով քննութիւնը ցոյց է տալիս, որ հանգուցեալը հինգ տարի առաջ դիմել է ժողովրդի օգնութեան. թշուառների խնամատարութեան ժողովի աստիճանաւորը նրան մի ամբողջ հաց տալով՝ ասումէ, որ եթէ մի անգամ էլ երեւաց, տին ժամանակ միայն քարերի կարժանանալ: Ալդ հանգամանքը վրդովումէ հանգուցեալին և նա ալլ եւս չի դիմում ժողովուրդի օգնութեանը: Ամբողջ երեք տարի շարունակ նրա գործերը վատեն գնում, վերջին ուրբաթ օրը մինչեւ անգամ մոմ գնելու համար ոչինչ չունէր. նա պառկում է խոտի վրայ և ասում, որ մինչեւ առաւօտ կենդանի չի լինիլ: Երբ որ որդուն առաջարկումեն մտնել գործաւորների տունը, թէ չէ քաղցից կըմեռնի, նա պատասխանումէ, որ այնտեղ էլ կըմեռնի. այժմ եթէ կուշտ լինի, կարող է գործել և շատ բանելուց կուրացած աչքերն էլ կառողանան: Բժիշկ Ֆ. Ռ. Ռակետի քննութիւնից երեւումէ, որ մահն առաջացել էր սինկօպից, որը գոյացել էր սնունդի պակասութիւնից: Հանգուցեալն անկողին չունէր, չորս ամիս շարունակ նա ոչինչ չէր կերել բացի չոր հացից: Մարմնի մէջ ճարպալին ոչ մի նշան չըկար: Հանգուցեալն ուրիշ հիւանդութիւն չի ունեցել և բժշկական օգնութեամբ կարող էր դիմանալ սինկօպին: Քննիչը նկատողութիւն է անում ալդ դէպքի տխուը բնաւո-

բութեան մասին, իսկ երդուեաւերը վճիռ են կայացնում, որ «հանգուցեալի մահն առաջացել էր կերակրի և առաջին անհրաժեշտութիւնների պակասութիւնից նուազելուց և բժշկական օգնութեան բացակայութիւնից»:

«Ինչու հանգուցեալի որդին չի մտնում բանւորների տունը», կը հարցնէք դուք: Երեւի աղքատները բանւորների տան մասին մի նախապաշարմունք ունին, որը չունին հարուստները, որովհետեւ ամեն ոք, ովոր կառավարութիւնից կենսաթոշակ է ստանում, անկասկած, մտնումէ բանւորների տունն աւելի լայն ոտով: Սակայն բանւորների տները հարուստների համար աշխատանքի գաղափար չեն կազմում և նրանց աւելի շուտ կարելի է զուարձութեան տներ անուանել: Բայց աղքատներն, ըստ երեւոյթին, սիրումեն մեռնել անկախ կերպով. կարելի է, եթէ մենք հիմնէինք նրանց համար բաւականին շքեղ և յարմար զուարձութեան տներ, կամ թէ կենսաթոշակը հասցնէինք նրանց տանը և հասարակական փողերը լափշտակելու մի քանի նախապատրաստական պարապմունքներ որոշէինք, — նոքա մի կերպ հաշտուէին դրա հետ: Բայց ահա թէ բանը ինչումն է. մեր խնամատարութեան մենք այնպիսի վիրաւորական և տանջող ձեւ ենք տալիս, որ աղքատները համաձայնում են աւելի շուտ մեռնել, քան թէ մեր օգնութեանը դիմել: Մենք պահում ենք նրանց տինպիսի տղիտութեան և բթամտութեան մէջ, որ նոքա սատկեն քաղցից, ինչպէս վայրենի գաղանները՝ առանց իմանալու թէ ումը դիմեն, ինչ անեն:

Ասումեմ, դուք արհամարհումէք կարեկցութիւնը. եթէ որ չ'արհամարհէիք, ալդպիսի լոգուածները չէին տպուիլ քրիստոնեալ աշխարհի լրագիրներում՝ ինչպէս մի վճիռ՝ փողոցներում լաջորդաբար մարդկանց կոտորելու համար: «Քրիստոնեալ աշխարհի» ասացի. աւաղ, եթէ որ մենք

կանոնաւոր հեթանոսներ լինէինք, ալդ էլ անհնարին կըլինէր: Խսկապէս մեր երեւակալական քրիստոնէութիւնն է օգնում մեզ լանյանքներ գործելու. մենք ընկղմում ենք մեր հաւատի մէջ, նա տալիս է մեզ զգալի զուարձութիւն և մենք դասումենք նրան կեղծիքների մէջ: Վաղորտեան արշալուսով և իրիկնագեմի վերջալուսով լուսաւորւած եկեղեցու և երգեհոնի հնչիւնների գրամատիքական քրիստոնէղեցու և երգեհոնի համար այնպիսի քրիստոնէութիւն է, որին մենք ութիւնը մի այնպիսի պրիստոնէութիւն է, որին մենք առանց ճնշվելու ծաղրսւմենք՝ նրա կենդանագեր պատկերները սատանաների մասին գրուած մեր թատերական պիեսների մէջ տնելով, այսինքն «Սատանելլիի», «Ոորերտների» և «Փառւստների» մէջ, ապա աւելի տպաւորութիւն թողնելու համար քանդակուած լուսամուսների ետեւից օրհներգներ երգելով և «Դիօ» խօսքի վրայ աղօթքի նմանութեամբ ճարտարախօս և ձայնաւոր վարժութիւններ լորինելով: Ալդ գազով լուսաւորւած և գազով ներշնչուած քրիստոնէութիւնը կազմումէ մեր հըպարտութիւնը և մենք զգուանթիւնը կազմունքի նոքա երբ և իցէ չըդիպչեն մեր հագուստի ծայրապէս զի նոքա երբ և այսպիսի կամ վրայ աղօթքի նմանութիւններին: Բայց ցոյց տալ ամենականոնաւոր քրիստոնէական ըերին: Բայց ցոյց տալ ամենականոնաւոր վարժութիւնների ճշմարտութիւնը հասարակ խօսքի կամ վարժունքի ձեւով, ճշմարտութիւնը հասարակ խօսքի կամ վարժունքի ձեւով և նրա յատուցանել կեանքի կանոնի մէջ գէթ մի օրէնք և նրա յատուցանել աղգալին հաւատ կամ լոյս՝ չենք կավրայ հիմնել որ եւէ աղգալին հաւատ կամ լոյս՝ չենք կավրայ համար էլ ձեզ լաւ լայտնի է, թէ ինչի վրայ է ըող, տրա համար էլ ձեզ լաւ լայտնի է, թէ ինչի վրայ է ըող, կը նուում ձեր կըօնը: Աւելի լաւ է թողէք ծխելն ու երգելինում ձեր կըօնը: Աւելի լաւ է թողէք ծխելն ու երգելին վրայ ածելլը, բուրփառներնու երգեհոնը, գոթական հոնի վրայ ածելլը, բուրփառներնու երգեհոնը, գոթական

յութեամբ բռնումէ միւսի ձեռքը. դա եկեղեցիների մալրնէ, միակ սուրբ եկեղեցին, որը երբ և իցէ եղել է և կըլինի:
Արկնումեմ, դուք, ինչպէս մի ազգ, արհամարհում
էք այդ ամեն ուրախութիւններն ու բարերարութիւնները:
Ճշմարիտ է, ձեր մէջ պատահումեն որոշ մարդիկ, որոնք
չեն արհամարհում այդ, դուք էլ ապրումէք այդ մարդ-
կանց աշխատանքով, ոլժերով, կեանքով ու մահով, բայց
երբէք շնորհակալութեան մի խօսք անդամ չէք ասում
նրանց: Եւ՝ ձեր հարսառութիւնը, և՝ զսւարճութիւնները,
և՝ հպարտութիւնը միատեսակ անհնարին կըլինէին, եթէ
որ նրանք չըլինէին, որոնց դուք կամ մոռանումէք, կամ
արհամարհում: Ոստիկանը՝ որ ամբողջ գիշերները քայլումէ
մութ անկիւններում պահպանելով ձեզ ձեր ստեղծած յան-
ցագործութիւններից, և որի գլուխն ամեն մի ըսպէ կա-
րող են ջախջախել, անդամալոյն անել ամբողջ կեանքում.
ծովի ջետ. լուռ ուսումնականը՝ որ քայլայւումէ գըքերի
կամ սրուակների վրայ. հասարակ մշակը՝ որ առանց քաջա-
լերութեան, համարեա առանց հացի կատարումէ իւր գործն
անլու կերպով, ինչպէս մի ձի, որը իւր ետեւից քաշումէ
սալն ու վարձատրում մտրակի հարուածներով.—տհա այն
բոլոր մարդիկը, որոնցով կենդանի է Սնդլիան. բայց նոքա
պդ չեն, այլ միայն նրա մարմինն են ու ջղալին ոլժը, որը
շարունակումէ գործել ըստ սովորութեան և ինքնադոր-
է: Մեր ազգային ձգտումն ու նպատակը—զուազու-
թիւնն է. մեր ազգային կրօնը—եկեղեցական պաշտամունք-
ների կատարումն է և թմբացուցիչ ճշմարտութիւնների
քարոզութիւնը միայն նրա համար, որ այդպիսով հանգիստ
պահենք ամբոխին գործելու, մինչեւոր մենք կ'ուրախա-
նանք. զուարճութեան պահանջը՝ որ անողորմ, անիմաստ

և սանձարձակ է, պահումէ մեզ իւր ճանկերում, ինչպէս
տէնդը, որից չորանումեն մեր շըթունքները և թափառում
աչքերը:

Երբ որ մարդ գործումէ իրեն յարմար օրինակով, նրա
գոհունակութիւնն աճումէ այդ գործից ինչպէս պարարտ
ծաղկի թերթիկները. երբ նրա մէջ կալ կարեկցութիւն,
օգնելու ջերմ ցանկութիւն, նրա բոլոր զգացմունքները
հաստատուն են, մշտական և խորին և հոգու վրայ ներ-
դործումեն կենսատու կերպով. այդ զգացմունքները հոգու
համար նոյնն են, ինչ որ կանոնաւոր զարկերակը մարմնի
համար: Բայց որովհետեւ մենք չունինք իսկական գործ,
մենք փչացնում, սպառումենք մեր մարդկալին բոլոր ե-
ռանդը շահի սուտ գործի վրայ. և որովհետեւ մենք իսկա-
կան յուզմունք չունենք, ձեռք ենք բերում կեղծ յուզմունք-
ներ և խաղումենք նրանցով ոչ թէ անմեղութեամբ, ինչ-
պէս մանուկները, այլ գալտնի կերպով և մեղանչելով, ինչ-
պէս հեթանոս հրեաները խաղումէին ալրերի պատերի վրայ
փորագրւած այն պատկերներով, որոնց մասին ոչ ոք չէր
իմանալ, եթէ որ չըփորէին հողի տակից: Ճշմարտութիւնը,
որ մեզ մօտ չըկայ, մենք ներկայացնում ենք գըքերի մէջ
և գարեւանդակների վրայ. գեղեցկութիւնը, որը փչացնում
ենք բնութեան մէջ, փոխումենք մնջկատակութեան ալլա-
կերպութիւններով, բայց որովհետեւ մեր մարդկալին բնու-
թիւնը այնուամենալիւ պահանջումէ որեւէ վիշտ կամ
երկիւղ, փոխանակ այն մեծ վշտի, որը կարող ենք տանել
եղբայրների հետ միասին, և փոխանակ այն ազնիւ արցունք-
ների, որ կարող ենք թափել նոցա հետ միասին,—մենք
գրաւումենք գատարանական դահլիճների ոգեւորութեամբ
և գերեզմանների վրայից սրբումենք ցողը:

Դժուարէ գնահատել այդ ամենի ճշմարիտ նշանակու-
թիւնը. փաստերն ինքն ըստ ինքեան բաւականին զարհու-

բելի են, իսկ ազդալին մեղաւորութեան չափը գուցէ այնպէս մեծ չէ, ինչպէս այդ երեւումէ առաջին հայեացքից։ Մենք թողինք տալիս կամ պատճառումենք օրական հազար մահ, բայց այդ անումենք առանց վատ մտքի. այրումենք տները և ամայացնում գիւղական դաշտերը, բայց շատ վշտալ կըլինէր, եթէ իմանալինք՝ որ մէկին վնաս ենք պատճառում։ Այնուամենայնիւ մենք հոգւով բարի ենք և ընդունակ բարերարութիւններ գործելու, բայց ընդունակ ենք ինչպէս մտնուկները։ Երբ Զալմերսին, որ իւր երկարատեւ կեանքի վերջում հասարակութեան վրայ մեծ ազդեցութիւն ունէր, կշտամբում էին մի ինչ որ կարեւոր գործի մէջ՝ հասարակական կարծիքին դիմելով, նա անհամբերութեամբ բացականչումէր. «Հասարակութիւնը ոչ ալլ ինչէ, եթէ ոչ մի մեծ մաննւկ»։

Ընթերցանութեան եղանակները քննելով ես իսկապէս նրա համար շօշափեցի այդ բոլոր կարեւոր հարցերը, որովհետեւ մեր ազդալին սխալների և անբաղտսւթիւնների հետազոտութիւններն աւելի և աւելի են համոզում ինձ, որ այդ սխալներն ու անբաղտութիւնները պայմանաւորւած են բացառապէս երեխայիկան տգիտութեամբ և կրթութեան բացակալութեամբ՝ նրա ամենատարբական նշանակութեան մէջ։

Կրկնումեմ,—այն, ինչ որ հարկադրումէ մեզ ողբար, ոչ արատաւորութիւնն է, ոչ եսականութիւնը, ոչ բժամտութիւնը, ալլ անլուս աշտկերտական թեթեւամտութիւնը, որը զանազանումէ իսկական աշտկերտի թեթեւամտութիւնից նրանով, որ անուղղելի է, որովհետեւ ոչ մի ուսուցիչ չի ճանաչում։

Մեր վերջին մեծ նկարչի բոլորից մոռացուած գեղեցիկ արտադրութիւններից մինը ներկայացնումէ մեր ժողովրդի հետաքրքիր նախատիպը։ Պատկերը ներկայացնումէ կիրկեւ

—Լօնստելեան գերեզմանատունը, գիշեր, հովիտներ, բլուրներ և առաւտեան մառախուղով ծածկուած երկինքը։ Բայց միատեսակ անտարբեր՝ ինչպէս դէպի շրջապատող պարագաները, այնպէս էլ դէպի հանգուցեալները, որոնք թողել են այդ երկինքն ու հովիտը ուրիշ երկնքի և հովիտների համար, աշակերտների մի խումբ գրել է իւր գրքերը գերեզմաններից մէկի վրայ և խփումէ նրանց քարերով։ Այդպէս էլ մենք ենք խզում այն հանգուցեալների խօսքերի հետ, որոնք ուսուցանումեն մեզ, և դառն անդուլ յամառութեամբ հեռացնումենք նրանց մեզանից առանց մտածելու, որ այդ քամուց ցըուած տերեւների տակ ոչ միայն գերեզմանաքարեր կան, այլ և կախարդական կամարի ու քնած թագաւորների մեծ մալրաքաղաքի բանալին։ Այն թագաւորների, որոնք պատրաստ են զարթնել ու գալ մեզ մօտ, միայն թէ կարողանանք կանչել նրանց։ Ինչպէս յաճախ, մինչեւ անգամ մտնելով այդ մարմարեալ դռներից, մենք միայն շրջումենք արքայական նիբրհող ծերունիների մէջ, շօշափումենք նոցա հտգուստները և շարժում նոցա գլխների վրայ թագերը. բայց նոքա առաջւայ նման լուռ են և առաջւայ նման մեզ փոշոտուած արձաններ են երեւում, որովհետեւ մենք չըգիտենք սրտերի այն դիւթական երգը, որը կարողէր նրանց արթնացնել։ Այդ երգի առաջին հնչիւններից նոքա վեր կըկենան մեզ դիմաւորելու և մտադրութեամբ կընայեն, կըդիտեն մեզ։ Ինչպէս անդունդի մէջ ընկած թագաւորները դիմաւորումեն նորեկներին այս խօսքերով։ «Եւ դու թոյլ եղար ինչպէս մենք, և դու մեզանից մէկը դարձար», այնպէս էլ այդ թագաւորները իրենց անաղօտ և անդրդուելի պսակներով կըդիմաւորեն մեզ այս խօսքերով։ «Եւ դու հոգւով կարող և մաքուր եղար ինչպէս մենք, և դու էլ մեզանից մեկը դարձար»։ Լինել կարող, հոգով մեծ, «վեհանձն»—ահա կեանքի

մէջ ճշմարիտ բարձր դրութեան հասնելը. աստիճանաբար արդպէս լինել—ահա կեանք! մէջ իսկական յառաջադիմութիւնը: Բարեկամներ, լիշնումէք սկիւթացիների հին սովորութիւնը, երւ մեռնումէր նոցա տան գլուխը; Նրան հագնում էին հանդիսի շորեր, նստացնումէին կառքի վրայ և պտտեցնում բարեկամների աները. բոլոր բարեկամները ամենապատուաւոր տեղն էին տալիս նրան սեղանի վրայ և խրախճանում էին նրա ներկայութեամբ: Ալժմ երեւակալեցէք, եթէ մէկը որոշ խօսքերով առաջարկէր ձեզ աստիճանաբար հասնել սկիւթացիների այդ պատիւներին, ինչպէս որոշակի առաջարկում են ձեզ գործի մէջ: Երեւակալեցէք որ այդ առաջարկութիւնն արուած լինի հետեւեալ կերպով: «Դու կըմեռնես դանդաղութեամբ, քո արիւնը կըսառչի ամեն օր, մարմինդ կըքալքայուի, սիրտ կըխփի աւելի դանդաղ և նրա փեղկերը կըժանդոտեն երկաթի պէս: Կեանքը քո մէջ կըհանդչի և դու աւելի կըխորասուզւես ստորերկեալ թագաւորութեան սառնամանիքի մէջ. բայց քո մարմինն ամեն օր կըզարդարւի աւելի շքեղութեամբ, աւելի բարձր կըլինեն այն կառքերը, որոնց վրա նա կըբազմի, գերազանցութեան աւելի շատ նշաններ կըզարդարեն նրա կուրծքը,—եթէ կամենումես քո գլխին փալլուն թագ ունենալ: Մարդիկ կ'երկրպագեն քո այդ մարմնին, կընալեն նրան ակնածութեամբ և, ամբոխներով վազելով նրա ետեւից փողոցներում, աղաղակներ կըբարձրացնեն. նրա համար պալատներ կըկանգնեցնեն, սեղանի վրայ պատուաւոր տեղը կընստացնեն և ամբողջ գիշերները կըխրախճանան նրա շուրջը: Նրա մէջ կըպահպանուի քո հոգին ալնքան, որ իմանաս թէ նոքա ինչ են անում, զգաս ուսերիդ վրայ ձգած սկեալ շորերի ծանրութիւնն ու ճակատիդ թագի սուր ծալրեր—ուրիշ ոչինչ»: Արդեօք կը համաձայնւէք այդպիսի մի առաջարկութեան, եթէ որ անէր ձեզ մահուան

հրեշտակը բերանացի կերպով: Ինչպէս էք կարծում, արդեօք կըհամաձայնւէ դրան մեզանից ամենաարհուածը: Բայց փորձառութեան մէջ մենք բոլորս էլ աւել կամ պակաս չափով ըմբռնումենք նրան ագահութեամբ, շատերն էլ ընդունումեն նրան իւր բոլոր անպատմելի զարհուրանքով: Ընդունումէ նրան նա՝ ով որ ձգտումէ հասարակութեան մէջ աւելի բարձր բոլոր բանելու, կեանքի մէջ յառաջագիմութիւն ունենալու, առանց մտածելու՝ թէ ի՞նչ է նշանակում կեանքը, այլ մտածելով միայն՝ թէ կեանքի մէջ յաջողութիւն է ունենում նա, ովոր ձեռքէ բերում շատ ձիաներ, ծառաներ, փող, ընդհանուրի յարգանքը և ոչ իւր անձնական հոգու յարգանքը: Կեանքի մէջ միայն նա է յաջողութիւն ունենում, որի սիրտն աւելի քնքուշ է դառնում և արիւնն աւելի տաք, որի ուղեղը գործումէ աւելի արագ և հոգին ոտքէ դնում կենդանի աշխարհի հում: Նրանք, որոնց մէջ կայ այդ կեանքը, երկրի ճշմարիտ տիրապետողներն ու թագաւորներն են: Թագաւորական ամեն մի ուրիշ տեսակ իշխանութիւն, որքան էլ նա ճշմարիտէ, միայն նրանց իշխանութեան հետեւանքն ու արտայալտութիւնն է, ուրիշ կերպ այդ իշխանութիւնը միայն թատրոնական մի ճոխ ներկայացումն է, ուր արտաքին փալլը փոխարինուումէ իսկական թանկագին քարերով. այդպիսի թագաւորները—ժողովուրդների խաղալիքներ են: Այդպիսի իշխանութիւնը թագաւորական իշխանութիւն չէ, այլ բռնակալութիւն և ազգի անմտութեան հետեւանք, ահա թէ ինչու համար մի ուրիշ տեղ նրանց մասին ասացի, որ «յալտնի կառավարութիւններ մի քանի ազգերի համար խաղալիքներ են, միւսների համար ցաւ, մի քանիսի համար սանձ և շատերի համար բեռը»:

Ոչ մի խօսքով չեմ կարողանում արտայալտել իմ զարմանքը, երբ լսումեմ, որ մտածող մարդիկ անգամ թագաւ-

ւորական իշխանութեան մասին խօսումեն այնպիսի մտքով, երբթէ կառավարող ազգերը—մասնաւոր սեպհականութիւններ են, կարելի է ծախել և գնել, կամ ձեռք բերել ուրիշ ճանապարհներով. իբր թէ ազգը ոչխարների մի հօտէ, որոնց մսով կերակրումէ թագաւորը և բուրթը խոզում. իբրթէ անարժան իշխանների մասին Աքիլէսի արտայալտած «ժողովրդին լափողներ» սոսկալի յատկանիշը ամեն մի կառավարչի մշտական և լարմար տիտղոսն է եղել, իսկ թագաւորութեան սահմաններ ընդարձակելը նրա համար նշանակումէր այն, ինչ որ մասնաւոր անձի համար իւր հողալին սեպհականութեան մեծացնելը: Այդպիսի կարծիքներ պաշտպանող կառավարիչները, ինչպէս ուզումէ լինի նոցա զօրութիւնը, նոյնպէս անընդունակ են իրենց ժողովրդի թագաւորը լինելու, ինչպէս գոռեխները չեն կարող ձիանների թագաւոր լինել: Նոքա ծծումեն նոցա արիւնը և կարողեն նրանց կատաղութեան հասցնել, իսկ կառավարել չեն կարող: Եթէ աւելի մօտիկուց զննենք, այդ թագաւորներն էլ, նոցա պալատներն ու բանակներն էլ ոչ այլ ինչ են, եթէ ոչ աւելի մեծ չափով ճահճալին մոծակներ՝ խալթիչների փոխարէն սուլիներ ունենալով. Նոքա ներդաշնակ կերպով, քաղցրութեամբ և համաձայն հնչեցնում են փողերը ամառալին օդի մէջ և, ճշմարիտը, վերջալոյսն երբեմն աւելի է գեղեցկանում մոծակալին զօրախմբի ամպանման փալից, բայց հազիւ թէ շնչելու համար առողջարար է դառնում: Այն ինչ ճշմարիտ թագաւորները, երբ կառավարումեն, անումեն այդ լուսութեամբ և ատումեն կառավարելը:

Յալտնի թագաւորը կարողէ իսկական թագաւոր դառնալ այն ժամանակ, երբ նա կը չափէ իւր իշխանութիւնը նրա ուժով և ոչթէ աշխարհագրական տարածութեամբ: Այնքան էլ կարեւոր չէ թէ Տրէնար կտրումէ ձեզանից

այս ինչ տեղը մի աւելորդ կտոր, կամ թէ ՈՒէնը խլում է ձեզանից մի աւելորդ տմրոց. այլ քեզ համար կարեւոր է, ով մարդկանց հրամայող, որ նա, որին կասես «գնա», կը գնալ և որին կասես «մնա», կը մնալ: Քեզ համար կարեւորէ, որ դու կարողանաս կառավարել քո ժողովուրդն այնպէս, ինչպէս կառավարումեն Տրէնարի ընթացքը, կարեւորէ, որ դու իմանաս թէ որտեղ ես ուղարկում նրան և որտեղ պիտի կանչես: Կարեւորէ իմանալ թէ ատում է քեզ քո ժողովուրդը, մեռնում է քեզ համար, սիրում և ապրում է քեզանով: Զափիր քո իշխանութիւնն ամբոխներով և ոչ թէ մղոններով, համարիր սիրոյ լայնութեան աստիճանները ոչ թէ հասարակածից, այլ դէպի զարմանալի տաք և անսահման հասարակածը:

Քո իշխանութիւնն անչափելի է: Ո՞վ կարողէ չափել ստեղծողների և սովորողների, երկնալին և աշխարհալին թագաւորութեան այդ անդրանիկների իշխանութեան և կործանողների ու փչացնողների իշխանութեան մէջ եղած զանազանութիւնը, նրանով, ինչ որ իւր բոլոր լիակատարութեամբ միախ ցեցի և ժանգի իշխանութիւն է: Օտարութիւնի է: Ցեցի թագաւորները հաւաքումեն գանձերը միախ ցեցերի համար, ժանգի թագաւորները—ժանգերի համար. բայց ինչպէս քիչն երբեմն այնպիսի թագաւորներ, որոնք հաւաքէին պաշտպանութեան ըլկարոտող գանձերը, որոնց համար որքան գուստները, որոնք դատապարտուած են ցնցոտիներ լինելու սրերն ու սաղավարդները, որոնք դատապարտուած են նսեմանալու. ուկին ու ալմաստը, որոնք դատապարտուած են յափշտակւելու,—ահա երեք տեսակ թագաւորների հաւաքած երեք տեսակ գանձերը: Բայց ինչ կը լինէր, եթէ երեւալին չորրորդ տեսակի թագաւորներ և այդ թագաւորները հին

ձեռագրերի մէջ կարդալին, որ կայ չորրորդ տեսակի գանձ, աւելի թանկագին քան ոսկին ու ալմաստը, անգնահատելիք քան մաքուր ոսկին. որ կայ մի գործուածք չըտեսնուած գեղեցկութեամբ և Աթենքի ոստայնով գործուած, որ կայ մի չըտեսնուած զէնք հրաբուխի սուրբ կրակի մէջ ջրդեղած, կայ ոսկի՝ միայն Դելֆիական ժայռերի ետեւ մայր մտնող արիգակի ծիրանագոյն սրտի մէջ թագուած: Յաւերժական նկարներով գործուածքը, անթափանցելի զէնքը և հեղուկ ոսկին, որ Առաջնորդութեան, Աշխատանքի և մտքերեք մէծ հրեշտակներն են, պահապանի նման կանգնած են մեր շէմքում և անդադար կանչուածեն մեզ. եթէ մենք կամենանք, նոքա կըտանեն մեզ իրենց թեւաւոր զօրութեամբ, ամենատես հայեցքով կուղեն մեզ գիշտիչ գաղաններին անյալտ և թռչուններին անտեսանելի շաւզով: Երեւակալեցէք, որ կըտանուեն թագաւորներ, որոնք լսելով այդպիսի մի համբաւ, կը հաւատան նրան և ժողովելով իմաստութեան գանձերը, կ'ընծալեն ժողովդին:

Մտածեցէք, ինչպիսի զարմանալի անցք կըլինէր այդ հնչպէս դժուարէ երեւակալել այդ մեր ազգային գիտակցութեան այժմեան դրութեան մէջ: Ի՞նչ կըլինէր, եթէ որ մենք կոչէինք մեր գիւղացիներին վարժւելու ոչ թէ սուիներին, այլ գրքերին, կազմակերպէինք, ուղղէինք և պահէինք լաւ գեներալների հրամանատարութեան տակ ոչ թէ մարդասպանների բանակ, այլ մտածողների բանակ. եթէ որ մեր ազգային զբօսանքները կատարէինք ոչ թէ հրացանաձութեան համար նշանակուած տեղերում, այլ ընթերցարաններում. եթէ որ մրցանակներ տալինք ոչ միայն յաջող հրացանաձութեան համար, այլ և յաջող խօսքի համար: Այն միտքը, թէ լուսաւորւած երկրների դրամատէրերը երբ և իցէ կարողեն պատերազմի փոխարէն պաշտամանել դրականութիւնը, բոլորովին անմիտ է երեւում:

Այժմ զինուեցէք համբերութեամբ և լսեցէք լմզրած դրերէլից մէկի մի կտորը. գա լիբաւի կարելի է «գերք» անուանել, մի գիշք, որ պահպանուածէ երկար ժամանակ և հաստատուն, քան թէ բոլոր մնացածները:

«Այն զարհուրելի ձեւերից մէկը, որոնց մէջ երեւումէ Եւրօպայում դրամագլխի գործունէութիւնը, այն միջոցն է, որով դրամատէրը անարդար պատերազմներ է մղում: Ճշմարիտ և արդար պատերազմներն աւելի մեծ գումար փող չեն պահանջում, որովհետեւ նրանում մասնակցողները մեծ մասամբ կոփւը ձրի են առաջ տանում, իսկ անարդար պատերազմի համար հարկաւոր է գնել մտրդու և՝ հոգին, և՝ մարմինը. բացի դրանից, հարկաւորէ նրան պատերազմական լաւ սպառազէնք տալ, որն այդ պիսի պատերազմների գինը բարձրացնումէ մինչեւ մաքսիմիւմի: Դեռ չեմ խօսում անարդ երկիւղի մասին, ազգերի ազատամիտ կասկածների մամին. այն ազգերի, որոնց մէջ չի գտնուում ոչ բաւականին ազնութիւն, ոչ բաւականին գթասրտութիւն, որպէսզի գէթ մի ժամ հանգստութիւն ձեռք բերեն շունչ քաշելու համար: Եւ այդպէս ներկալումս Փրանսիան ու Անգլիան ամեն տարի գնումեն միմիանցից 10 միլիոնի երկիւղ:

«Եւ որովհետեւ բոլոր անարդար պատերազմները կատարուումեն եթէ ոչ կողոպտուած թշնամու հաշուին, գոնէ դրամատէրերից վերցրած փոխառութեան օգնութեամբ. այդ փոխառութիւնները յետոյ վճարուածեն ժողովրդի վրայ դրած հարկերով, որը, ըստ երեւոյթին, ոչինչ կամք չի ունեցել այդ գործի մէջ, որովհետեւ պատերազմի գլխաւոր արմատը դրամատէրերի կամքն է, իսկ նրա ամենախոր հիմքը բոլոր ժողովրդի ազգահութիւնը, մի ազահութիւն, որն ազգին անընդունակ է դարձնում գէպի ճշմարտութիւնը, ազնութիւնը, արդարութիւնը և իւր ժամանակին պատճառումէ մասնաւորի քալքայումն և որոշ անձներին պա-

տուշաս»:

Նկատեցէք, Փրանսիան և Անգլիան գնումեն միմիանցից սարսափ և նրանցից իւրաքանչիւրը ամեն տարի երկիւղի վրայ ծախսումէ 10 միլիոն ֆունտ ստերլինդ:

Ի՞նչ կըլինի արդեօք, եթէ որ նոքա փոխանակ միմիանցից սարսափ գնելու, վճռէին հաշտ լինել և ամեն տարի գնէին 10 միլիոնի գիտութիւն. ի՞նչ կըլինի, եթէ իւրաքանչիւր ազդ տարեկան 10 միլիոն ծախսէր թագաւորական գրադարաններ, պատկերների գալերէաներ, արքունական մուզէններ, այգիններ և հանգստութեան տեղեր հիմնելու: Արդեօք լաւ չէր լինիլ թէ Փրանսիայի համար և թէ Անգլիայի համար:

Այդ կ'իրականանալ շատ և շատ ուշ, բայց ես յուսովեմ, որ շուտով կըգայ այն ժամանակը, երբ բոլոր նշանաւոր քաղաքներում կըհիմնուեն արքունական կամ ազգային գրադարաններ՝ ամեն ճիւղի վերաբերեալ ամենալաւ գրքերով, որոնք պատրաստուած կըլինեն խնամքով, տպագրուած կըլինեն զանազան ձեւի թղթերի վրայ լայն լուսանցքներով, զանազան գրաւիչ հատորների բաժանւած, թեթեւ, գեղեցիկ և օրինակելի կազմերով: Այդ ընդարձակ գրադարանները բաց կըլինեն բոլոր կարգին և մաքուր մարդկանց համար օրւալ ամեն մի ժամին, ուստի և մաքութիւնն ու խաղաղութիւնը կըպահանջի իիստ օրէնքով:

Ես կարողէի և ուրիշ նախագծեր կազմել ձեզ համար, օրինակ՝ գեղարուեստական գալերէաների, բնագիտական պատմական մուզէնների և դեռ շատ թանկագին ու անհրաժեշտ հիմնարկութիւնների նախագծեր, բայց գրադարանական այդ նախագիծն ամենից կարեւորն է և ամենից իրագործելին. նրա իրագործումը մի լաւ դեղ կըլինէր բըրտանական ազգի համար, որ վերջերս սկսել է տանջուել ջըրգողութեամբ, անառողջ ծարաւով և հիւանդու քաղցով, և

պահանջումէ աւելի կանոնաւոր սնունդ: Ձեզ լաջողւեց փոխել ձեր հայրենիքում հացի օրէնքները, այժմ տեսէք, արդեօք չէք կարուղ նոր օրէնքներ հաստատել ուրիշ տեսակ հացի համար, որը պատրաստած լինի Սեզամի արաբական հին և կախարդական հատիկներից ու բաց անէր ոչ թէ աւազակալին, այլ թագաւորական գանձարանների գոները:

Բարեկամներ, ճշմարիտ թագաւորների գանձարանները՝ նոցա քաղաքների փողոցներն են. ոսկին, որը նոքա ժողովումեն և որը ուրիշների համար փողոցային ցեխ է թւում, նոցա և ժողովուրդների համար դառնումէ մաքուր բիւրեղից շինուած անապական սալայատակներ:

Կարդացէք գաղտնի խորհրդին տուած բժշկական տեսչի զեկուցումը, որ մօտ ժամանակներս հրատարակւեցաւ: Այդ զեկուցման յառաջաբանի մէջ կան մի քանի կէտեր, որոնք, ինչպէս կարծումեմ, յուզմունք կառաջացնեն հասարակութեան մէջ. այդ կէտերի առթիւ աւելացնումեմ հետեւեալը:

Ներկայումս մեզ մօտ առաջ է գնում հողային սեպհականութեան հարցը վճռող երկու տեսութիւն, որոնք հակասումեն միմիանց և սուտեն:

Առաջին տեսութիւնը ձայնումէ՝ թէ աստուածային օրէնքով միշտ գոյութիւնն են ունեցել և պիտի ունենան մի քանի ժամանակական սրբազան անձինք, որոնց են պատկանում տիեզերքի հողը, զուրը և օդը իբրեւ անձնական սեպհականութիւն, թէ այդ անձինք կարող են ըստ կամաց թոյլ տալ կամ արգելել մասցած նարդկութեանն օգտուելու վերոլիշեալ հողից, զըից և օդից, այսինքն՝ ուտել, խմել և շնչել: Հաւանական է, այդ տեսութիւնն այժմ երկար չի տեւել: Հակառակ տեսութիւնը կայանումէ նրանում, որ եթէ տիեզերքի հողը բաժանենք տիեզերքի որդերին, այն ժամանակ այդ որդն իսկոյն սրբազան անձն կըդառնայ. որ

տները կըկառուցանւեն իրենք իրենց և հացը կըբուսնի ինքն իրեն։ ամեն ոք հնաբաւ ըութիւն կունենայ ապրելու և առանց աշխատանքի ձեռք կըբերէ իւր համար սնունդ։ Այդ տեսութիւնը փորձով նոյնպէս անբաւարար երեւաց։

Մինչեւ անգամ մեր մագնիայով լուսաւորւած թուականում ոչ քիչ դառն փորձեր և ծանր աղէտներ են հարկաւոր մեծամասնութեանը համոզելու, որ ժողովրդի համար հաստատած օրէնքները բոլորովին անօգուտեն, առաւել ևս այն օրէնքները, որոնք վերաբերումեն հողին և նրա ամբողջութեանն ու բաժանմանը, կամ կապալավարձի քանակութեան աւելացնելուն և պակասեցնելուն։ Օրէնքներն անօգուտեն, քանի որ գոյութեան և կեանքի միջոցների համար մղուած ընդհանուր կոիւր հաստատումէ միայն ոչ մարդկային մրցութեան վրայ։ Ինչ օրէնքներ էլ ող դուք հրաժարակէք, միենոյն է այդ կոիւր անբարոյական ազգերի մէջ կընդունի այս կամ այն մահացու ձեւը։ Անդիմայի համար շատ օգտակար կըլինէր օրինակ՝ օրէնքով հաստատել եթէ այդպիսի օրէնքը հնարաւորէ կատարել ժողովրդի բոլոր դասակարգերի համաձայն արդիւնքի ամենաբարձր սահմանը։ Շատ ցանկալի կըլինէր, որ ազնուականի արդիւնքը վճարէր ազգը իրբեւ մի որոշւած ուոճիկ կամ կենսաթշակ և ոչ թէ նոքա ստանալին ըստ կամաց հողի կապալառուներից։ Եթէ դուք հենց վաղը կարողանալիք արդպիսի մի օրէնք հաստատել, և որը լիտոյ անհրաժեշտ լինի, կարողանալիք որոշել նշանակուած արդիւնքի չափն այնպէս, որ մի յատնիք քաշ մաքուր ցորենի ալիւրը օրէնքով ամպահովէր մի յայտնի գումար, չի անցնի մի տարի, փոքր առ փոքր կը կատարւեն և ուրիշ արժէքներ ու դիզուած դրամագլխի իշխանութիւնը կ'արտայալառէր ուրիշ նիւթերի մէջ, կամ թէ պալմանական նշաններով։ Մարդ-

կանց արգելեցէք գնել իրարու կեանք սօվերինների վրայ և կըտեսնէք, որ նոքա կըգնեն ուակուշկաների և գալկինների վրայ։ Ընդհանուր թշուառութեանը կարելիէ օգնել միայն մի ճանապարհով, այն է դէպի մտածողութիւնը, գթասրտութիւնը և արդարութեան զարգացումն ուղղուած ընդհանուր կըթութեան ճանապարհով։ Ի հարկէ, ազգային բնաւորութիւնն աստիճանաբար ամրապնդելու և բարելաւելու համար կարելի է շատ օրէնքներ հնարել բայց մեծ մասամբ այդ օրէնքներն այնպէս կըլինին, որ ազգային բնաւորութիւնը չի տանել նրանց՝ եթէ կանխօրէն բայց կարգուած չեն լինել։ Օրէնքները կարողեն օգտակար լինել երիտասարդ ազդի համար այնպէս, ինչպէս օրդօպիկիքական կօրսէտը օգտակար է թովլ մանուկի համար բայց չի ուղղացնում նրա հին ազգի կուզ մէջքը։

Արդէն չեմ խօսում այն մտսին, թէ որքան էլ դժուար լինի նա, հողալին հարցն ունի երկրորդական նշանակութիւն, բաժանեցէք հողն ինչպէս հաճելի է, բայց գլխաւոր հարցը մնումէ անվճռելի։ Ո՞վ կը փորի նրան, ո՞վ և ինչ պիսի վարձով կըկատարէ մնացածների փոխարէն ծանր և կեղտոտ գործը։ Ո՞վ և ինչպիսի վարձով յանձն կ'առնի հաճելի և մաքուր գործը։ Այդ հարցերին դեռ միանումեն կրօնական և բարոյական հետաքրքիր կշռագատութիւնները։ Արդեօք օրինաւոր է ծծել շատ մարդկանց հոգու մի մասը նրա համար միայն, որ ձեռք բերած հոգեբանական յատկութիւնների քանակութիւնից ստեղծեն մի գեղեցիկ գաղափարական հոգի։ Եթէ խօսքը լինէր ոչ թէ հոգու այլ ուղղակի արեան մասին, եթէ կարելի լինէր ամբոխի ձեռքից քամել մի յայտնի քանակութեամբ արիւն և ներս թողնել մի մարդու երակի մէջ ու նրան աւելի մաքրարիւն ջէնտլմէն դարձնել, —ի հարկէ, դա կըգործադրուէր, թէպէտեւ, հաւանական է, գաղտնի կերպով։ Բայց այժմ, որով-

Հետեւ մենք զրկումենք մարդկանց ոչ թէ արիւնից, որ տեսանելի է, այլ հոգուց և բանականութիւնից, որ տնտեսանելին,—մենք կարողանում ենք անել այդ բոլորովին յայտնի կերպով և ապրումենք ինչպէս ցեցը՝ կերակրուելով ընտրուած որսով։ Ուրիշ խօսքերով. մենք կերակրումենք մի քանի ապուշների աշխատանքով, որոնք փորումեն և քանդում նրա համար, որ մենք կարողանանք բացառապէս անձնատուր լինել մեր մտածմունքներին և զգացումներին։

Բայց գործերի այդպիսի դրութիւնն իւր ետեւ շատ բան ունի։ Բարձր կրթութիւն ստացած և զարգացած անգլիացի, աւստրիացի, վրանսիացի կամ իտալացի ջենտլմէնը (առաւել ևս լէտիները) մի մեծ և աւելի կատարեալ արտադրութիւն է, քան թէ արձանների մեծամասնութիւնը. նա իշխումէ ոչ միայն գեղեցիկ ձեւին, այլ և գոյնին ու իւր զարգացած բանականութեանը։ Դուք նայում էք նրան հրճուանքով և լսումէք զմայլանքով. նրա ստեղծագործութիւնն ինչպէս եկեղեցու կամ բուրգի ստեղծագործութիւն, անխուսափելի կերպով պահանջումէ մարդկալին շատ զոհեր։ Կարելի է աւելի լաւ է ստեղծել մարդկալին մի գեղեցիկ արարած, քան թէ մի գեղեցիկ տաճար կամ աշտարակ. մեզանից անհամեմատ բարձր կանգնած մարդկալին արարածի առաջ պատկառանքն աւելի մեծ երջանկութիւն է տալիս, քան թէ պատի առաջ պատկառանքը, բայց մարդկալին գեղեցիկ արարածը պէտքէ իւր հերթումն էլ տանէ մի քանի պարտականութիւններ. նա պէտքէ ամրութեան պատնէշ լինի այն աշտարակին, որտեղից հնչումէ զանգակահարութիւնը։ Այդ մասին յետոյ կըխօսենք։



II.

ՃՈՒՃԱՆ.

ԹՐԱԳՈՒԻԻՆԵՐԻ ԱՅգիների Մասին.

Որովհետեւ այս դասախոսութիւնն իմ նախընթաց դասախոսութեան շարսնակութիւնն է, ուստի աւելորդ չեմ համարում համառօտակի կերպով հաղորդել ձեզ այդ երկու դասախոսութիւնները միացնող միտքը։ Առաջին դասախոսութեան առարկայ կազմող հարցերը «ի՞նչ և ի՞նչպէս կարդալ'» առաջ եկան մի աւելի խորին հարցից, որը կըկամենալի, որ բոլորդ էլ առաջարկեիք ձեզ բոլորովին լուրջ կերպով։ Այդ հարցն է—ինչու կարդալ։ Ես կըցանկանալի, որ գուք էլ ինձ հետ միասին խոստովանւէիք, որ ինչպիսի առաւելութիւններ էլ տալ մեզ ներկայումս գրականութեան և կրթութեան տարածումը, այնուամենալիւ մենք այն ժամանակ կարողենք պարտ ու պատշաճ կերպով օգտուել այդ առաւելութիւններից, երբ պարզ կերպով կ'որոշենք թէ դէալի ինչն է առաջնորդում մեզ կըթութիւնը և ինչ պիտի սովորեցնէ գրականութիւնը։

Կըցանկանալի, որպէս զե գուք հասկանալիք, որ կանոնաւոր բարյական կրթութիւնն ու լաւ ընտրուած ընթերցանութիւնն առաջնորդումեն մեզ իշխանութիւն ձեռք բերելու վատ դաստիարակւած և քիչ կըթութիւն մարդկանց վրայ—իւր նշանակութեամբ ճշմարիտ թագաւորական մի

իշխանութիւն։ որ նրանցով տրւումէ մեզ միակ ազնիւ իշխանութիւնը բոլոր միւս իշխանութիւնների մէջ, որոնք, ինչպէս էլ որ նշանաւոր լինեն զօրութեան և նիւթական ոլժի արտաքին նշաններով, ինձ երեւակայական և բռնապետական են թւում։ Երեւակայական են միայն իսկական թագաւորութեան տեսանելիութեամբ և ուրուականով, դատարկ են ինչպէս մահը և «պսակուած միայն թագի նմանութեամբ»։ Բոնապետական են նրա համար, որ իրենց սեպհական կամքը գործադրումեն արտադրութեան և սիրոյ օրէնքի տեղ, ինչպէս ճշմարիտ միապետներն են կառավարում։

Եւ որովհետեւ ես կըկամենալի, որ այդ միտքը մնար ձեզ մօտ, կըսկսեմ դրանից և կըվերջացնեմ դրանով, ուստի կըկնումեմ, որ դոլութիւն ունի կենդանական և լաւիտենական տիրապետութեան միայն մի ազնիւ ձեւը։ Այդ տիրապետութիւնը տրւումէ այն մարդուն, որն ունի աւելի բարոյական ոյժ՝ քանթէ միւս մարդիկը, և այն մարդուն, որն ունի մտքերի աւելի բարձր մակերեւոյթ՝ քանթէ միւսները։ Ասածս այնպիսի մտքերի մասին է, որոնք հնարաւորութիւն են տալիս առաջնորդել միւսներին և բարձրացնել նրանց։

Համոզուած լինելով, որ ամեն մի գրականութիւն և դաստիարակութիւն օգտակար են միայն այն չափով, ինչ չափով նոքա նպաստումեն այդ խաղաղ, բարերար և ծայրագոյն իշխանութեան հաստատութեանը, նախ մեզ վրայ, յետոյ մեր միջոցով բոլոր մեզ շրջապատողների վրայ, ես խնդրումեմ ձեզ տեսնել ինձ հետ միասին՝ թէ բարձր կը թութիւնից ծագող այդ իշխանութեան որ մասնաւոր տեսակը կարողէ օրինաւոր կերպով հարկաւորել կանանց։ թէ կանալք որքան իրաւունք ունեն թագաւորական բարձր աստիճանի վրայ՝ ոչ միայն իրենց ընտանեկան նիստ ու կացում, այլ և նրանց մատչելի բոլոր շրջաններում, և թէ այդ թագաւորական ոլժի կանոնաւոր հասկացողութեան ու գոր-

ծագրութեան ժամանակ ինչ մտքով ներդաշնակութիւնն ու գեղեցկութիւնը մեզ իրաւունք են տալիս ամեն մի կնոջ ստորագրեալ երկիրը «թագուհիների ալգի» անուանել։

Բայց այստեղ հենց սկզբեց մենք հանդիպումենք մի շատ խորին հարցի, որը, ընալով նրա առաջնակարգ կարեւորութեան, մեզանից շատերի համար անվճռելի է մնում։

Մենք չենք կարող վճռել ինչի մէջ է կայսնում կանանց թագաւորական իշխանութիւնը, մինչեւ որ չ'որոշենք ինչի՝ մէջ է կայսնում նոցա սովորական իշխանութիւնը։ Զենք կարող դատել՝ թէ որ կըթութիւնն է պատրաստում կնոջը պարտականութիւնների լայն շրջանի համար, մինչեւ որ չ'իմանաք ինչի մէջ են կայսնում նրա մօտիկ պարտականութիւնները։ Եւ երբէք չի խօսուել այնպիսի վայրենի անհեթեթութիւններ այդ հարցի մասին, որ այնքան էական է հասարակութեան բարեկեցութեան համար, ինչպէս խօսումէ այժմ, և չեն ենթադրուել այդպիսի դատարկ մտածութիւններ։

Կնոջ և տղամարդու բնութեանց յարաբերութիւնները միմիանց հետ, նոցա մտաւոր և բարոյական ընդունակութիւնները, երեւի, երբէք դեռ չեն ստացել մի այնպիսի որոշում, որ բոլորից միաձայն ընդունուած լինէր։ Կնոջ կողման և իրաւունքների մասին մենք լսումենք զանազան խօսակցութիւններ, որպէս թէ նրա կոչումն ու իրաւունքները երբ և իցէ կարողեն առանձին լինել տղամարդու կոչումից և իրաւունքներից։ որպէս թէ նա և նրա տէրը միմիանցից անկախ էակներ են, որոնք միմիանց հետ անպարունակելի պահանջներ ունեն։ Յամենայն դէպս դա խարդախութիւնէ և ոչ միայն խարդախութիւն, այլ ինչպէս յոյս ունեմ յետոյ ապացուցանել, դեռ աւելի անմիտ խարդախ հասկացողութիւն, որի համաձայն կինը մի ուրուական է և տղամարդուն ստորագրեալ մի նմանութիւն, որը

պարտական է նրան անմիտ և ստրկական հնազանդութեամբ ու իւր բոլոր թուլութեամբ ամբողջովին լենուումէ նրա բարձր որժի վրայ:

Կրկնումեմ, դա բոլոր սխալմունքներից ամենավայրենին է այն արարածի վերաբերսւթեամբ, որն ստեղծուած է տղամարդին օգնական լինելու.

Եթէ փորձենք որեւէ պարզ և հաստատ որոշման հասնել այն բանի մասին, որի մէջ կայանումէ կնոջ մտքի և առաքինութեան որժն ու խնդիրը՝ տղամարդու մտքի և առաքինութեան որժի և խնդրի համեմատութեամբ, կըտեսնք, որ սեռերի մէջ կանոնաւոր կերպով հասկացուած յարաբերութիւնը փոխադարձաբար նպաստումէ երկուսի որժին, ազնուութեանը և իշխանութեանը, և փոխադարձաբար մեծացնումէ այդ որժը, տղնուութիւնը և իշխանութիւնը:

Այժմ ես պէտքէ կրկնեմ այն, ինչ որ ասել եմ անցեալ դասախոսութեանո մէջ: Կրթութեան առաջին գործադրութիւնը մեզ հնարաւորսւթիւն կըտալ խորհրդակցելու ամենաիմաստուն և մեծ մարդկանց հետ կենքի բոլոր կարեւոր դէպքերում: Կանոնաւոր կերպով օգտուել գրքերից—նշանակումէ դիմել նոցա օգնութեանը, հրաւիրել նրանց, երբ մեր սեպհական գիտակցութիւնն ու մտածողական ընդունակութիւնները բաւական չեն գտնւում. գնալ նոցա հետքերով դէպի աւելի լայն հորիզոնն ու աւելի պարզ հասկացողութիւնը. ստանալ նոցանից անմահ գատաւորների և բոլոր ժամանակների խորհրդատունների միացեալ դատավճիւը մեր անհատական և անհաստատ վճռի հակառակ:

Այժմ էլ այդպէս վարւենք: Տեսնենք արդեօք համաձայն են այդ կէտերում բոլոր ժամանակների ամենամեծ և ազնիւ սրտով իմաստունները միմիանց հետ. լսենք նոցա

կազմած վկայութիւնն այն մասին, որը նոքա հտմարումէին կնոջ ճշմարիտ արժանաւորութիւնը և նրա՝ տղամարդին հասցրած օգնութեան իսկական միջոցը:

Ամենից առաջ դառնանք Շէքսպիրին: Նախ նկատեցէք, որ Շէքսպիրը հերոսներ չունի, նա ունի միայն հերոսսւհեներ: Նրա բոլոր գրուածքներում չըկալ տղամարդու կատարեալ հերոսական մի օրինակ՝ բացի Հենրիկոս Վ-ի թեթեւակի գծագրւած պատկերից և ստուերագծուած վալէնտինից: Նրա կատարեալ գրուածքների մէջ նոյնպէս հերոսներ չըկան: Օտելլօն հերոս կըլինէր, եթէ որ չունենար այն պարզամտութիւնը, որը նրան իւր ըրչապատող մարդկանց ամենաստոր հնարքների որսը շինեց. բայց դա միակ պատկերն է, որն որքան և իցէ մօտենումէ հերոսական տիպին: Կօրիոլանը, Ցեզարը, Անտօնիօն պաշտպանուումեն ընկճուած ուժով և ընկնում են իրենց բոլոր թուլութեամբ: Համլէտը զուրկ է եռանդից և մատնուած տխուր մտածողութեան. Ոօմէօն ծի անհամբեր մանուկ է, վինետիկի վաճառականն անզօր կերպով հնազանդւածէ անհաստատ ճակատագրին: «Լիր թագաւորի» մէջ կէնտն արդարեւ ունի ազնիւ սիրտ, բայց նա այնպէս կոպիտէ և անտաշ, որ կրիտիքական ըոպէին չի կարողանում ոչինչ օգուտ բերել և բաւականանումէ ծառալի դերով: Օրլանդօն պակաս ազնիւ չէ, բայց, այնուամենալիւ, նա գծուումէ պատահականութեան յուսահատութիւնից. նրան միմիթարում, պաշտպանում և ազատումէ Ոօգալինդան: Բայց չըկալ Շէքսպիրի մի գրուածքը, որի մէջ չ'երեւալ կատարեալ կինը՝ անսասան յուսոյ մէջ և նպատակին անսխալ հետամտութեան մէջ: Կօրտէլիան, Դէզգեմօնան, Դզաբելլան, Հերմօնիան, Ալմօջինան, Եկատերինա թագուհին, Պերդիտան, Սէլլիան, Վիօլիան, Ոօգալինդան, Ելենան և, վերջապէս, գուցէ բոլորից ամենագեղեցիկը՝ Վիրդելիան,— այդ ամենն անարատ են և

մարմնացնումեն ամենավսեմ հերսութիւնը, որը մատչելի է մարդկութեան:

Յետոյ նկատեցէք հետեւեալը:

Ամեն մի ողբերգութեան մէջ աղէտի պատճառը միշտ երեւումէ տղամարդի անմտութիւնն ու թուլութիւնը, իսկ փրկութիւնը, եթէ կայ, կատարումէ կնոջ իմաստութեամբ և առաքինութեամբ, ուրիշ կերպ ազատութիւն չըկայ: «Լիր թագաւորի» մէջ աղէտի պատճառը նրա սեպհական անխոհ հեմութիւնն ու դիւրագրգիռ փառամիրութիւնն է և իւր որդիներին կատարեալ չըճանաչելը. նրա միակ և հաւատթիմ աղջկայ առաքինութիւնը կ'ազատէր նրան դժբաղդութիւնից, եթէ որ նա չըհալածէր նրան, բայց այդտեղ աղջիկը համարեա թէ ազատումէ նրան:

Ինձ համար աւելորդ է լիշեցնել ձեզ Օտէլլօի պատմութիւնը. նրա զօրեղ սիրոյ միակ թուլութիւնը, կըշոադատութեան ստոր աստիճանը՝ մինչեւ անգամ համեմատած այդ ողբերգութեան մէջ կնոջ երկրորդական տիպարի հետ, այն է Եմելինիալի հետ, որը մեռնումէ նրա սխալների դէմ կատաղի բողոքը շրթունքներին. «Օ՛, արիւնածարաւ լիմար: Ի՞նչ պէտքէ անէ այդպիսի լիմարը բարի կնոջ հետ»:

«Որմէօի և Խւլիալի» մէջ կնոջ համարձակ և իմաստուն խորամանկութիւնը ամուսնու անհամբերսւթեան շնորհիւ դէպի կորուստն է տանսւմ: «Չմեռային զրոյցի» և «Կիմբէլինի» մէջ երկու թագաւորական տների բաղդաւորութիւնը կորչում է և նոցա գոյութիւնը մահացու վտանգների է ենթարկւում տղամարդկանց անխոհեմութեան շնորհիւ, բայց նրանց վերջապէս ազատումեն միայն կանանց վեմ համբերութիւնն ու իմաստութիւնը: «Ակն ընդ Ականի» մէջ դատաւորների անարդարութիւնն ու եղբօր ապականուած երկշուութիւնը հակասումէ կնոջ ամենալաղթ անկեղծութեանն ու ալմաստեայ անարատութեանը: «Կօրիօլանի» մէջ մօր

խորհուրդը կ'ազատէր որդուն ամեն մի դժբաղդութիւնից, եթէ նա ժամանակին ընդունէր այդ խորհուրդը. նա կորչումէ նրա համար, որ մի ըոպէ մոռանումէ այդ խորհուրդը:

Ի՞նչ ասեմ անփոփոխ Խւլիալի, անսասան Ելէնալի մասին, կամ Հերմօի համբերութեան, Բէատրիսսալի ցանկութեան և այն «ալարզամիտ կոյսի» խաղաղ ու անձնուէր իմաստութեան մասին, որ ինչպէս մի հրեշտակ լայտնուումէ անօդնական, կոյր, չար ցանկութիւններից վրդովւած մարդկանց մէջ, ազատումէ նրանց իւր մի ներկայութեամբ և հեռացնում անհեթեթ լանցագործութիւնը իւր մի ժափտով:

Յետոյ նկատեցէք, որ Շէքսպիրի բոլոր գլխաւոր գործող անձանց մէջ կայ միայն մի թոյլ կին—Օֆէլիան, և ողբերգութեան բոլոր զարհութելի աղէտն առաջանումէ նրանից, որ կրիտիքական բոպէին Օֆէլիան ոչ մի պաշտպանութիւն չի ցոյց տալիս Համլէտին և իւր բնութեամբ անընդունակ է առաջնորդել նրան, երբ ամենից աւելի Համլէտը նրա վրայ է լոյս դնում: Եւ, վերջապէս, թէպէտ գլխաւոր գործող անձանց մէջ կան երեք վատ կին—լէդի Մագբէթը, Ուէգենան և Հօներէլեան, բայց դուք իսկոյն զգումէք, որ գրանք միայն կեանքի սովորական օրէնքի հրեշտակ բացառութիւններ են:

Ընդհանուր առմամբ այդպէս է Շէքսպիրի վկայութիւնը կնոջ բնաւորութեան և մարդկալին կեանքի մէջ նրա ունեցած գրութեան մասին: Նա պատկերացնումէ կնոջն երեւ մի անփոփոխ, հաւատարիմ և անսխալ իմաստութեամբ առաջնորդող, իւրեւ անարատութեան և անկաշառ արդարութեան օրինակ: Նրա կինը միշտ կարողութիւն ունի նույիրել իւր անձը մինչեւ անգամ այնտեղ, ուր արդէն չի կարող աղատել:

Յետոյ խնդրումեմ լսել մի ուրիշ գրողից ցուցանքը, որը Շէքսպիրի հետ ոչ մի գուգահէնուագծի մէջ չի մտնում

ինչպէս մարդկալին բնութեան հմտութեան վերաբերութեամբ, այնպէս էլ ճակատագրի ճանապարհների և նրա հոգեբանական հետեւողութեան վերաբերութեամբ։ Ես խօսումեմ Վոլտէր Սկօտտի մասին և դառնումեմ նրան իբրեւ մի դրողի, որը մեզ ամենաընդհանուր հասկացողութիւն է տալիս ժամանակակից հասարակութեան սովորական մտքերի պայմանների և եղանակների մասին։

Նրա մաքուր վիպասանական գրուածքների վրայ չըպիտի կանգ առնեմ, որովհետեւ նոքա զուրկ են նշանակութիւնից, բայց նրա վիպասանական բանաստեղծութիւնները, չընալով նոցա չքնաղութեան, կարողեն վկայել ոչ այնքան իրականութեան մասին, որքան պատանեկական գաղափարների մասին։ Նրա գլխաւոր գրուածքները, որոնց մէջ նկարագրում է շոտլանդական կեանքը, լիովին արժանի են մեր վստահութեանը. այդ բոլոր գրուածքների մէջ միայն երեք տղամարդ կան, որոնք մօտենումեն հերոսական տիպարին— Դէնդի Դիւմօնդը, Թօր-Թօր և Կէվէլգնուզը. առաջինը սահմանագլխի ագարակատէր է, երկրորդը՝ աւազակ և երրորդը՝ մի զինուոր, որ պաշտպանումէ անարդար գործը։ Այդ երեք մարդիկն էլ երիտասարդ են և տարօրինակ ճակատագրի կրթուած խաղալիքներ են կազմում։ միայն այդ ճակատագրի կամ պատահականութեան շնորհիւ ապրումեն, բայց չեն յաղթում այն դժբաղդութիւններին, որ նոքա կամայ ակամայ պէտքէ տանէին։ Վոլտէր Սկօտտի նկարագրած տղամարդկանց տիպերում ոչինչ յիշատակութիւն չը կայ ոչ բնաւորութիւնների հետեւողութեան ու կարգապահութեան մասին, ոչ խելացի նպատակներին հետեւելու որնէ եռանդի մասին։ Այն ինչ կանանց տիպերում, ինչպէս են՝ Ելէնա Դուգլասը, Փլօրամակիվօտը, Ռօզա Բրէդուարդայնը, Կատերինա Սէլտօնը, Դիանա Վերնօնը, Լիլիան Ռէտհառտլէտը, Ալիսա Բրիջնորդը, Ալիսա Լին և Զէնի Դեն-

որ, մենք տեսնումենք գեղեցկութեան անվերջ ելեւէջների մէջ քնքութիւն և մտաւոր ոլժ, անփոփոխ ազնութիւն և անարատ ճշմարտութիւն, անվեհեր, անխոնջ պատրաստականութիւն իրենց անձը զոհելու մինչեւ անդամ պարտականութեան ստուերին, և, վերջապէս, խորը պահուած սիրու համբերատար իմաստութիւն, որը ոչ միայն պաշտպանումէ սիրած մարդուն պատահական սխալմունքներից, այլ և աւելի շատ բան է անում. աստիճանաբար կրթում, ոգեսորում և բարձրացնումէ նրա բնաւորութիւնը այնպէս, որ վէպի վերջում կարողէք դուրս բերել նրա անարժան յաջողութիւնների պատմութիւնը։

Ալդպիսով Նէքսպիրի և Սկօտտի մօտ կինը միշտ գգուշացնումէ և խրատում մարդուն, առաջնորդումէ նրան, իսկ երիտասարդը երեք պաշտպան չի կանգնումէ իւր սիրած կնոջը և չի կրթում նրան։

Առաջ բերենք մեծ իտալացիների և յոյների թէեւ կարճ, բայց աւելի ազդու վկայութիւնը։ Զեզ յախնի է մեծ բանաստեղծ Դանթէի նախագիծը. դա մի սիրալին բանաստեղծութիւն է, որ նա նուիրումէ իւր հանգուցեալ սիրուհուն։ մի գովասանական երգէ այդ սիրուհու հոգսերի մասին։ Սիրուհին զիջանելով միայն կարեկցութեանը և ոչ սիրոյն՝ ազատումէ նրան կորստից, ազատումէ դժողքից։ Նա յուսահատութեան մէջ շեղուումէ ճանապարհից, բայց սիրուհին ցած է իջնում երկնքից նրան օգնելու. առաջնորդումէ նրան դրախտի սանդուղքների վրայ, սովորեցնումէ մարդկային և աստուածալին ամենաբարդ ճշմարտութիւնները և նուածելով տանումէ մի աստղից միւսը։

Դանթէի գրուածքի մասին թէեւ սկսել եմ խօսել, բայց նրա վրայ կանգ չեմ առնում։ Գուցէ դուք այդ անհատական բանաստեղծական հոգու վայրենի ցնորքներ կըհամարէք, աւելի լաւէ կարդամ ձեզ համար մի փոքրիկ բանա-

տեղծութիւն, որը գրել է Պիզանեցի մի ասպետ իւր կենդանի սիրուհուն։ Այդ բանաստեղծութիւնը, որ նկարագրումէ տասներեքերորդ դարու բոլոր ազնիւ մարդկանց զգացմունքը, մեզ է հասել ասպետական պատուի և սիրոյ միւս լիշտառակութիւնների հետ միասին Դանթէ Գաբրիէլէ Ռօսէթայի միջոցիւ։ Ահա այդ բանաստեղծութիւնը։

«Եւ այդպէս դու հրամակեցիր՝ որ իմ սէրը ծառայէ և յարդէ քեզ. ես կատարումեմ այդ և իմ ուրախութիւնն անսահմանէ, որ ես ընդունուածեմ քեզ ստորադրեալ ծառաների մէջ։ Իմ հոգին լիքն է հրճուանքով այն օրից, երբիմ կամքը դրուածէ ծառայելու քո կատարելութեանը և ուրախութեան ծաղիկների մասին երեւի ոչ մի բան չե կարող ազգել ինձ ոչ ափսոսանք, ոչ տիրութիւն։ Քեզ վրայ են կենդրոնացած իմ բոլոր մտածմունքներն ու զգացմունքները, որովհետեւ քեզանից են ծագում բոլոր առաքինութիւնները, ինչպէս իրենց աղբիւրից։ Դու կարողես պարզեւել ամենալաւ իմաստութիւնն ու անխոցելի պատիւը, որոնք առաջնորդւումեն քո մեծութեան կատարելութիւնը լրացնող բոլոր միւս թանկագին բարիքներով։ Օ՛, տիրուհի՛, այն օրից, երբ իմ սրտում ծագեց քո հրաշալի պատկերը, իմ կեանքը հոսեց լուսաճաճանչ յուրի մէջ և արդար տեղը, իսկ մինչեւ ալժմ նա, արդարեւ, խարիսխելով գնումէր ստուերների մէջ և լոյսից զուրկ տեղերում, ուր շատ ժամեր և շատ օրեր չէր լիշում առաքինութեան մասին։ Բայց ալժմ ես քո ստորադրեալն եմ. ես լցուած եմ ուրախութեամբ և անդորրութեամբ։ Դու ինձ վալրենի գազանից մարդ դարձրիր, որպէս զի ապրեմ և սիրեմ քեզ։»

Կարելի է դուք կը մտածէք՝ թէ լունական ապետը կնոջը չէր տալ ալդպիսի նշանակութիւն, ինչպէս այդ սիրահարուած ասպետը։ Յիրաւի, նրա հոգեկան ստորադրութիւնն այնքան կատարեալ չէ և ես կնոջ անհատական

բանորութեան իբրեւ օրինակ վերցրի միայն Նէքսպիրի հերոսուհիներին և ոչ յունականը նրա համար, որ ձեզ համար աւելի հեշտ լինի հետեւել ինձ։ Ի հաստատութիւն վերցնումեմ մաշդկութեանը մատչելի գեղեցկութեան և ազնութեան բարձր տիպարները։ Անդրօմախին՝ մարզական և կնոջ պարզ սրտով, կասսադըին՝ թէպէտեւ մերժուած բայց չնաշխարհիկ իմաստութեամբ։ չարաճճի և բարի նավզիկալին՝ արքայական նիստ ու կացի բոլոր պարզութեամբ։ Հանգիստ և տնտես Պինելոսին՝ որ մտադրութեամբ նայումէ ծովին։ Անտիգոնին՝ քրոջ և աղջկայ սննդութացութեան հաստատ և անվեհեր անձնութեամբ։ գառան պէս հեզ Իֆիգէնեալին՝ խաղաղ և լուռ հնազանդութեամբ, և, վերջապէս, Ալկէստրին, որ հանգիստ կերպով անցնումէ մահուան բոլոր վշտերը իւր ամուսնուն ազատելու համար։ այն Ալկէստրին, որի վերադարձը գերեզմանից՝ լոյնի հոգու մէջ զարթեցրել է ապագայ յարութեան մտապատկերը։

Եթէ որ ես ժամանակ ունենալի, կարողէի գեռ այդպիսի շատ օրինակներ առաջ բերել, կարողէի մատնացոյց անել Զօսերի վրայ և բացադրել՝ թէ ինչու նա գրել է «Նէքիսաթ բարի կանանց մասին» և չի գրել բարի տղամարդկանց մասին։ Կարողէի լինւել Սպէնսերի վրայ և ձեր ուշադրութիւնը դարձնել այն բանին, թէ ինչու նրա դիւթական ասպետներին և՝ խաբումեն, և՝ յաղթում, իսկ Ունիի հոգին երբէք չի պղտորւում և բրիտօմարդի նիզակը չի կոտրուում։ Կարողէի դեռ ևս աւելի հեռուն գնալ, դիմել ամենահին ժամանակների առասպելական ուսմանը, ցոյց տալ այն ժողովուրդը, որի արքայադստրերից մէկը հրաւելուած էր դաստիարակելու մարդկալին սեռի օրէնսդրին՝ նրա բոլոր ազգականների առաջ, լիշեցնել ձեզ, որ եղիսպատական ալդ մեծ ազգը բոլոր ժողովուրդներից ամենաիմաստունն էր և իւր իմաստութեան հոգուն տուել էր կնոջ պատկեր ու նրա

ձեռքում գըել սստայնի մակ ւկը. որ այդ Հոգու անունն ու պատկերը ընդունուած և հնազանդում էին նրան. որ նա է դիմել այն Աթէնքը՝ ձիթէնի սաղավարար գլխին և միգապատ վահանը ձեռքին, որին դուք մինչեւ ալժմ պարտական էք այն ամեն բանով, ինչ որ համարումէք ամենաթանկագինը և՝ արհեստի մէջ, և՝ գրականութեան մէջ, և՝ ազգային առաքինութեան օրինակների մէջ:

Բայց ես այդ քան հեռուն չեմ գնալ և առասպելական շրջանները մտնել, այլ կըքաւականանամ միայն նրանով, որ կըխնդրեմ ձեզ ըստ արժանոյն գնահատել ամենամեծ բանաստեղծների և աշխարհն իմացող մարդկանց վկայութիւնը. մի վկայութիւն, որ ինչպէս տեսնումէք, միակերպ է: Հարցնումեմ. արդեօք հնարաւոր է ենթադրել, որ այդ մարդիկ լրացնելով իրենց կեանքի հիմնական խնդիրը, բարդումէին կանանց և տղամարդկանց մէջ եղած յարաբերութեանց մասին կեղծ առաջադրութիւններով ու դադարկ յօրինուածքներով: Ո՞չ: Կան դոյութիւն չունեցող իրեր, բայց ցանկալի, որ նոքա իրականան, իսկ այդ գաղափարական կինը բոլորովին ցանկալի չէ, եթէ ի նկատի առնենք ամուսնութեան մասին մեր ունեցած ընդարձակ հասկացողութիւնը: Մենք ասումենք, կինը ոչ միայն ըլպէտք է առաջնորդէ, մինչեւ անդամ ըլպիտի ինքնակամ մտածէ: Խելքի առաւելութիւնը միշտ պէտքէ տղամարդկանց կողմը լինի. տղամարդի գործնէ մտածել և կառավորել, նրան է պատկանում անդրանիկութիւնն ինչպէս գիտութեան և խելամտութեան մէջ, այնպէս էլ ուժի մէջ:

Արդեօք անհրաժեշտ չէ մի կերպ վճռել այդ թիւրիմացութիւնը: Ո՞վ է սխալում; այդ բոլոր մեծ մարտիկը, թէ մենք: Կորելի է Նէքսպիրը, Էսքիլը, Դանթէն և Հոմերոսը մեր գուարճութեան համար միայն տիկնիկներ են զարդարում, կամ դրանից աւելի վատ, ցոյց են տալիս մեզ

իրականութեան մէջ անհնարին տեսիլքներ, որոնք եթէ իսկապէս իրականաւալին, խառնակութիւն կըձգէին մեր ընտանիքների մէջ, և մեր մտերմութեան կործանիչը կըդառնային: Եթէ գուք արդէն ընդունումէք այդպիսի մի ենթադրութիւն, վերջապէս ուշ դարձրէք փաստերի վկայութեանը, որ կըներկայացնէ ինքը մարդկային սիրտը: Քրիստոնէութեան բոլոր ժամանակներում, որ նշանաւոր են բնաւորութիւնների անարատութեամբ և զարգացմամբ, տղամարդիկ միշտ վերաբերւել են կանանց կատարեալ ստորադրութեամբ և խոնարհ անձնութերութեամբ: «Խոնարհ» եմ ասում ոչ միայն երեւակայութեամբ հրապուրելի և պաշտելի, այլ և կատարեալ ստորադրելի: Տղամարդն ստանումէր սիրած կնոջից, որքան էլ նա երիտասարդ լինէր, ոչ միայն քաջալերութիւն, պաշտպանութիւն և ամեն մի աշխատանքի համար վարձագրութիւն, այլ, ընտրութեան և դժուարին հարցերի վճռման ժամանակ, մինչեւ անգամ առաջնորդութիւն:

Այն ասպետութիւնը, որն իւր յեղաշրջման և անկման մէջ սկսեց առաջին պատճառը լինել այն ամեն բանին, ինչ որ պատերազմի մէջ դաժանէ, խաղաղութեան մէջ ապօրինի, ընտանեկան կեանքի մէջ անբարոյական և անարդ, բայց որին մենք պարտական ենք յուսոյ և պաշտպանութեան մէջ նրա սկզբնական անարատութեան և հզօրութեան համար,— ասումեմ, այդ ասպետութիւնն իւր ասպետներին առաջարկումէ ստորադրել տիկնինների հրամաններին և, մինչեւ անգամ, օտարութիւն վարմունքներին՝ ինչպէս ամեն մի ազնիւ կեանքի հիմքին: Եւ այդ առաջարկումէր նրա համար, որ նրան, ով ասպետութեան գլուխ էր կանգնում, լաւ յալտնի էր կանոնաւոր դաստիարակութիւն ստացող ամեն մի ասպետական սրտի առաջին շարժառիթը: Այդ շարժառիթը կայանումէր տիկնոջը կուրօրէն ծառայելու մէջ. նրան յալտնի

էր, որ որտեղ չըկալ հաւատարիմ ծառայութիւն, այնտեղ ազատութեամբ չեն վարւում, այնտեղ դաժան և շատ կրքերի տեղ է. նրան չ ստոնիէր, որ երիտասարդութեան միակ սիրոյ ուրախալի հնագանդութեամբ սրբագործումէ տղամարդի ոլում և նրա բոլոր գործունէութեան յարատեւութիւն է գրւում: Դա առաջանումէ ոչ թէ նրա համար, որ այդպիսի հնագանդութիւնը խոհեմ կամ արժանաւոր լինի, մինչեւ անգամ երբ վերաբերւումէ. մի անարժան առարկալի, այլ նրա համար, որ ամեն մի ազնիւ երիտասարդի համար ուղղակի պէտքէ անհնարին լինի—ինչպէս անհնարին է ամեն մի կանոնաւոր դաստիարակութիւն ստացողի համար—սիրել մէկին, որի հեզ խորհրդին նա չի կարող հաւատալ և որի թախանձանօք տուած հրամանը նա տատնուումէ կատարել:

Իմ ասածները հաստատելու համար այլ եւս ապացուցներ չեմ առաջ բերում և կարծեմ որ դրա ճշմարտութեանն իբրեւ երաշխաւոր՝ կրծառայէ ձեր խելամտութիւնը: Դուք չէք կարող ենթագրել, որ կնոջ ձեռքով ասպետական զրահի կոճկելը մի հասարակ վարմունք էր կամ վիպասանական սովորութիւն: Դա յաւիտենական ճշմարտութեան նշանն է. հոգու զրահը միայն այն ժամանակ է պինդ շրջապատում կրծքին, երբ հագցնուումէ կնոջ ձեռքով. տղամարդի պատիւը միայն այն ժամանակ է դաւաճանում նրան, երբ այդ զրահը կապուածէ անփոյթ ձեռքով: Արդեօք ծանօթ են ձեզ այն գեղեցիկ տողերը, որոնք, իմ կարծիքով, անգեր պէտքէ սովորեն Անգլիալի բոլոր ջահել կոյսերը: Ահա այդ տողերը:

«Օ, շռայլ կի՞ն: Նա, որ կարողանումէ իրեն որեւէ գին նշանակել գիտենալով՝ որ տղամարդը անշուշտ կը վճարի,— ինչպէս էժանացնումէ դրախտը: Ի՞նչ չնչին բանի փոխը էն է տալիս. իւր անգին պարգեւը և ի՞նչպէսէ վատնում

հացն ու ցօղում գինին, որոնք, եթէ արժանաւոր խնայողութեամբ գործադրուէին, անասուններին մարդիկ կը շնչէին, մարդկանց—աստուածներ»:

Կարծեմ որ դուք չէք հակառակիլ ինձ, որքան էլ ես խօսեմ սիրահարների մէջ եղած յարաբերութեանց մասին: Բայց ինչ բանի մէջ որ մենք յաճախ կասկածումենք, հենց այն էլ պէտքական է այդպիսի յարաբերութիւնների համար, որպէս զի նոքա շարունակուեն ամբողջ կեանքի ընթացքում:

Այդ յարաբերութիւնները մենք կանոնաւոր ենք համարում սիրահարների մէջ, բայց ոչ կնոջ և մարդու մէջ: Ուրիշ խօսքով. մենք համարումենք՝ թէ պարտականենք մի կնոջ պատկառելի և քնքոյշ ծառայութեամբ. այնպիսի կնոջ, որի մտերմութեանը վստահ չենք և բնաւորութեան հետ ծանօթ ենք մասամբ և մութ կերպով. իսկ այդ մեծարանքից և ծառայութիւնից պէտքէ զրկել նրան, երբ նրա սէրըն ամբողջովին մեզ է պատկանում եւ բնաւորութիւնը փորձուած ու հետազօտուածէ այնպէս, որ չենք վախենում հաւատալ նրան մեր կեանքի բոլոր երջանկութիւնը: Միթէ դուք չէք տեսնում, որ այդ ոչ միայն անարդէ, այլ և անմիտ: Միթէ չէք զգում, որ ամուսնութիւնը,—երբ նա կարողէ ամուսնութիւն համարել,—միայն մի կնիք է, որով երդմամբ նշանակուումէ ժամանակաւոր ծառայութիւնից անցնել յաւիտենական և անընդհատ սիրոյ ծառայութեանը:

Բայց դուք կը հարցնէք. արդեօք անտեղի չի լինել կնոջ խօստովանութիւնը՝ առաջնորդել հնագանդ կին լինելով հանդերձ: Ո՞չ, անտեղի չէ, որովհետեւ այստեղ խօսքն առաջնորդութեան մասին է և ոչ որոշման: Փորձումեմ համառօտակի կերպով ցոյց տալ ձեզ, թէ ինչպէս այդ երկու հասկացողութիւններն ուղղակի կարողեն միմիանցից առանձին լինել:

Մենք լիմարենք, աններելի կերպով լիմար, եթէ խօսում

ենք մի սեռի միւսի վրայ ունեցած «գերազանցութեան մասին այնպէս, որպէս թէ նրանց կարելիէ համեմատել միակերպութեան մէջ»: Եւրաքանչիւրն ունի այն, ինչ որ չունի միւսը: մինը լրացնումէ միւսին և լրանումէ նրանով: նոքա ոչ մի բանի մէջ էլ համանման չեն: Երկուսի բաղդն ու կտարելութիւնը պայմանաւորւածեն նրանով, որ իւրաքանչիւրը պիտի պահանջէ և ստանալ այն, ինչ որ կարելիէ տալ միւսին:

Նոցա բնաւորութիւնների զանազանութիւնը մօտաւորապէս կայանումէ: Հետեւեալում: Տղամարդի ոլժը գործողութեան, զարգացման և պաշտպանութեան մէջ է: տղամարդը նախ գործողէ, ստեղծող. նա գտնումէ նորը և պաշտպանում: Նրա խելքն երեւումէ ձեռնարկութեան և գիւտերի մէջ, եռանդը—պատերազմի և յաղթութեան մէջ, երբ պատերազմն արդարէ և յաղթութիւնը հարկաւոր: Խսկ կնոջ ոլժը կառավարութեան մէջ է և ոչ պատերազմի. նրա խելքն ոչ ստեղծող է և ոչ հնարող, - այդ խելքը կարգադրող, շինող և վճռող է: Նա տեսնումէ երկրի յատկութիւնները, նոցա պահանջներն ու տեղը: Նրա մեծ կախում ունենալը գովասանքն է. նա չի մտնում ոչ մի մըցութեան մէջ, բայց անսխալ կերպով յաղթողին պսակ է վճռում: Նրա պաշտօնն ու դրութիւնը պահպանումեն նրան ամեն վտանգից և փորձանքից: Տղամարդը կատարումէ իւր կոպիտ գործն ընդարձակ աշխարհում և անխուսափելի կերպով հանդիպումէ վտանգների և փորձանքների, այդ պատճառով էլ նրա բաժինն է ընկնում անյաջողութիւնները, անպատութիւնները և անխուսափելի են սխալները. նա յաճախ վիրաւորում է, յաղթուում և ծեծուում ու միշտ խստանում է: Բայց կնոջը նա պաշտպանումէ այդ ամենից, այն տան սահմաններում, ուր կառավարումէ կինը, չեն մտնում ոչ վտանգը, ոչ փորձանքը և ոչ էլ սխալմունքի կամ վիրաւորանքի:

մի պատճառ, եթէ կինն այդ չի ցանկանում: Ընտանեկան օջախի ճշմարիտ բնաւորութիւնն ալդպէս է, - դա խաղաղութեան իջեւանն ու ապաստանն է ոչ միայն ամեն մի անպատճութիւնից, այլ և ամեն մի երկեղից, կասկածից կամ անհամաձայնութիւնից: Ո՞րքան որ ընտանիքը չի կատարում այդ պայմանները, նա ընտանեկան օջախ չէ. ո՞րքան թափանցումեն նրա մէջ արտաքին աշխարհի աղմուկները և անկարեկից, անձանօթ, ատելի կամ թշնամական շրջանը թույլ է տրւում նրա շէմքից մարդու կամ կնոջ կողմից, նա գագարումէ տուն լինելուց, — դա միայն արտաքին աշխարհի ցանկապատճած մի մասն է, որը դուք ծածկել էք տանիքով և որի մէջ վառել էք վառարան: Բայց ո՞րքան նա մի սբբազան տեղ, մի տաճար է ներկայացնում պաշտպանուած ընտանեկան աստուածներով, որոնց դիմացը չի կարող դուրս գալ մէկը, որին նոքա ընկարողանալին ողջունել սիրով, ո՞րքան նա պատասխանումէ այդ բոլոր պայմաններին, և՝ տանիքը, և՝ օջախի կրակը միայն նշան են աւելի բարձր լուսոյ և ստուերի, ինչպէս մըրկալից ծովի մէջ փարոսի լոյսը և նուազ անապատի մէջ ժայռի ստուերը—այն ժամանակ նա արժանի է իւր կոչմանը և լրացնումէ իւր նշանակութիւնը: Որտեղէլ գնալ խսկական կինը, այդ տունը միշտ նրա շուրջն է ամեն տեղ: Նրա գլխից բարձր կարող են լինել միայն աստղերը, գիշերը սառած խոտերի մէջ լուսատիկը կարողէ նրա ոտների մօտ միակ կրակը լինել, բայց ընտանեկան օջախը, որտեղ էլ լինի նա, լայն շըրջապատճեմէ ազնիւ կնոջը և կինովարով ներկուած ու եղեւնիներով ծածկուած լաւ վրանէ. նա հեռու, շատ հեռու տարածումէ իւր խաղաղ լոյսն անպատապարներին:

Ահա թէ ինչի մէջ է կայանում ըստ իս, կարելի է և ըստ ձեր, ճշմարիտ կնոջ զօրութիւնը և ալդպէս է նրա կոկական տեղը: Բայց միթէ դուք չէք տեսնում, որ այդ-

պիսի մի խնդիր իրագործելու համար կինը պէտքէ լինի, գոնէ, այնքան անսխալական, որքան այդ արտայալտութիւնը վերաբերումէ մը զդկալին էութեան։ Կնոջ իշխանութեան սահմաններում բոլորը պէտք է լինեն ալդպէս, կամ կըլինեն ոչ ալդպէս։

Կինը պէտքէ ունենալ անսպառելի, անկաշառ բարութիւն, պէտքէ բնազդմամբ և անսխալ կերպով իմաստուն լինի ոչ թէ ինքնահաստատութեան համար, այլ ինքնամերժման համար. ոչ թէ ամուսնուց բարձր լինելու համար, այլ նրա հետ հաւասար իւր տեղը պահպանելու համար. պէտքէ իմաստուն լինի ոչ թէ մեծամիտ, սառն և ստոր հավարտութեամբ, այլ իւր հեզութեամբ և պաշտօնի մէջ ջերմ քնքութեամբ։ Հենց դրա մէջ էլ կալանումէ կնոջ խսկական փոփոխականութիւնը. նա փոփոխական է ինչպէս լոյսը, որը բազմազան է ներդաշնակ և մաքուր բաժանման մէջ և որը ընդունումէ ամեն մի գոյն, ինչի վրայ ընկնում է, ու տալիս է այդ գոյնին աներեւոյթ փայլ։

Մինչեւ այժմ ես աշխատել եմ ցոյց տալ ձեզ՝ թէ ինչպիսի գերք պէտքէ բոնի կինը և ինչի մէջ պիտի կալանալ նրա իշխանութիւնը։ Այժմ էլ հարցնենք մեզ. ինչ տեսակ դաստիարակութիւնն է նրան ընդունակ դարձնում այտ դիրքը բոնելու և օգտուելու այդ իշխանութիւնից։

Եթէ նրա պարտականութիւնների և արժանաւորութեան մասին իմ արած որոշման մէջ դուք համաձայնէք ինձ հետ, այն ժամանակ մեզ համար դժուար չի լինել նկատել այն կրթութեան ծրագիրը, որը պատրաստումէ կնոջը իրագործելու առաջինները և բարձրանալու մինչեւ երկրորդը։

Կնոջ վերաբերութեամբ մեր առաջին պարտականութիւնը, որի մէջ ներկայումս ոչ մի մտածող մարդ չի կասկածում, կալանումէ այնպիսի փիզիքական կրթութեան և

փիզիքական պարապմունքների ապահովութեան մէջ, որոնք նպաստէին կնոջ առողջութեանն ու գեղեցկութեան կատարելութեանը, որովհետեւ գեղեցկութեան ամենաբարձր նըրբութեանը հասնութեամբ միայն փիզիքական եռանդի կատարեալ փայլով և նուրբ ոյժով։

Ասում գեղեցկութեան կատարելութիւնն ու նրա զօրութեան ընդարձակումը. կնոջ իշխանութիւնը չի կարող չափազանց մեծ լինել և աստուածային լոյսը չի կարող չափազանց հեռուն տարածւել։ Յիշեցէք, որ առանց համապատասխան հոգեկան ազատութեան ոչ մի փիզիքական ազատութիւն չի կարող գեղեցկութիւն տալ։ Այն բանաստեղծը, որն ըստ իս գերազանցումէ միւսներից ոչ այնքան ուժով, որքան զարմանալի ճշտութեամբ, երկու տուն ոտանաւոր ունի, որի մէջ ցոյց է տալիս կնոջ գեղեցկութեան ազբերն ու արտայալտումէ նրա լիովին կատարելութիւնը։ Իդէպ ես կը կարդամ նրա ներածական տունները, բայց խնդրումեմ առանձին ուշադրութիւն դարձնել վերջինի վրայ։

«Արիգակի և անձրեւի տակ նա աճել է երեք տարի, իսկ հեացած ընութիւնը նրա մասին արտասանել է. այստեղ, երկրի վրայ, անտառներում և գաշտերում չի աճել մի ծաղիկ՝ աւելի քնքոյց և գեղեցիկ քան թէ նա։ Ես կը վերցնեմ սիրելի մանուկն իմը կոչելով և ըստ իս նրանից կին կըստեղծեմ։

«Ես կըլինեմ նրա համար և՛ օրէնք, և՛ հրապոյր կեանքի ամեն մի ժամին և վայրկենին. ես կամենում եմ իմ ընտրածին բարձր իշխանութիւն տալ գաշտերում, անտառներում, հովիտներում, երկնքում, երկրիս վրայ, ստորաներում և գագաթներին, և զսպել պայմանն ու վառել։

«Ամպերը կըտան նրան իրենց փայլն ու շողզողը, ուռենիները կըխոնարհեն նրա առաջ ճկուն ճիւղերը. և փոթորիկի շարժման մէջ նա կըզգայ, որ բարձր գթութիւնն

աներեւոյթ կերպով մօտ է թռչում և նրա գեղեցիկ իրանը քնքշութեամբ գրկում չի անվրդով համագրութեամբ:

«Գուրգուրումեն զուարճութեան կենսական զգացմունքները երիտասարդ մարմինն ու նրա շարժմունքները և փայլ-փլում է նրա կուսական կուրծքը: Միշտ ալդպիսի մտքեր կը ներշնչեմ Լիւսիին, քանի որ նրա հետ միասին ձեռք ձեռքի տուած կը կատարեմ հովտի մէջ երջանկութեան կարճ ճանապարհը»:

Նկատեցէք «զուարճութեան կենսական զգացմունքները» խօսքերը: Լինումեն և մեռցնող զուարճութիւններ, բայց զուարճութեան բնական զգացմունքները կենսական են և անհրաժեշտ կեանքի համար: Նոքա պէտքէ լինեն զուարճութեան զգացմունքներ, որպէս զի կենսական լինեն: Արգեօք չէք մտածում, որ օրիորդին գեղեցկացնումէք, եթէ նրան չէք բաղդաւորցնում: Չըկալ մի չափաւորութիւն, որը դուք չըդնէք լաւ օրիորդի բնութեան վրայ, չըկալ նրա սիրոյ և գործունէութեան բնագրմանը ոչ մի արգելք, որը չը դրոշմուէր նրա գծագրութեան վրայ անմոռանալի դաժանութեամբ, առաւել եւս տանջող դաժանութեամբ, որ չըմթնացնէ անմեղ աչքերի փայլն ու չըխանդարէ անմեղ ճակատի չքնաղութիւնը:

Ալդ ամենը վերաբերումէ միջոցներին, ալժմ դառնանք նպատակին: Վերցնենք միեւնոյն բանաստեղծից երկու տող, որոնց մէջ կատարելապէս որոշւում է կնոջ գեղեցկութիւնը:

«Ան դէմքը, որի վրայ անցեալի փայլուն գծագրութիւնները հանգիպումեն ապագալի խոստան ուրախութիւններին»:

Կնոջ վայելչութեան կատարելութիւնը կարող է կայանալ միայն այն վսեմ հանգստութեան մէջ, որը հիմնուած է երջանիկ և օգտակար տարիների կրթութեան վրայ. այդ-

վայելչութիւնը – ուրախութեան մի ժամանակագրութիւն է. նրա վսեմ հանգստութիւնը գեռ միանումէ աւելի վսեմ մանկութեան հետ, որը լիքն է խոստումներով. նա իւր համեստութեամբ անընդհատ բացւելով՝ փայլումէ մի լաւ բանի ապաւինութեամբ, որին կարողէ հասնել և որը կարելի է պարզեւել նրան ապագալում: Այնտեղ, ուր կայ ալդպիսի մի խոստում, գոյութիւն չունի ծերութիւնը, ալնտեղ յաւիտենական պատանեկութիւն է տիրում:

Հետեւաբար մեզ մնումէ նախ ծեփել կնոջ փիզիքական պատկերը պարտ ու պատշաճ ձեւի մէջ, յետոյ՝ որքան թուլ կըտան նրա ձեռք բերած ոյժերը, ջրգեղել նրա հոգին գիտութիւնների և մտքերի մէջ, որոնք կընպաստեն նրա բնագրական ճշմարտութեան ամրապնդմանը և բնածին սիրային զգացմունքի նուրբ մշակմանը: Նրա հարկաւորէ հազորդել այն բոլոր գիտութիւնները, որոնք հնարաւորութիւն: կըտան նրան հասկանալ ամուսնու աշխատանքը և մինչեւ անգամ օգնել նրան. բայց այդ պէտքէ հազորդել ոչ իբրեւ գիտութիւն, ոչ իբրեւ նրա գիտութեան պատկանելի առարկայ, այլ իբրեւ նրա զգացմունքին և դատողութեան. պատկանելի առարկայ: Նրա թէ հպարտութեան և թէ կատարելութեան համար բոլորովին անէական է. արգեօք շատ լեզուներ գիտէ, թէ միայն մի լեզու: Բայց շատ կարեւորէ, որ նա կարողանալ իւր կարեկցութիւնն ու համակրութիւնը արտայալաւել օտարին և գնահատել նրա լեզուի հնչիւնների քաղցրութիւնը: Նրա արժանաւորութեան համար ոչինչ նշանակութիւն չունի այս կամ այն գիտութիւնը, այլ շատ հարկաւորէ, որ նա կըրթուած լինի իսկական մտքով, որպէսզի հասկանալ բնական օրէնքների նշանակութիւնը, գեղեցկութիւնը և անզերծանելութիւնը, և հետեւէ գիտութեան որեւէ ճիւղին մինչեւ հեզութեան այն տիսուր սահմանները, ուր կարողեն իջնել միայն ամենա-

իմաստուն և համարձակ մարդիկ, որոնք իրենց մինչեւ անգտմ մանուկներ են համարում, որ ամբողջ կեանքում քարեր են հաւաքում անսահման ծովի ափերում։ Կարեւոր չէ, որ նա շատ քաղաքների և նշանաւոր մարդկանց անուներ գիտէ, կամ ժամանակագրութեան մէջ շատ հմուտէ, կնոջը բառարան դարձնել բոլորվին կրթութեան նսկատակ չէ. բայց շատ անհրաժեշտ է, որ նա կարողանալ իւր բոլոր էութեամբ թափանցել պատմութեան մէջ, անմիջական կայտառութեամբ վերաստեղծել իւր փայլուն երեւակայութեան մէջ նրա անցքերը, բնազդմամբ հասկանալ հանգամանքներն ու դրամատիքական յարաբերութիւնները, որոնց պատմաբանը յաճախ միայն մթնացնումէ դատողութիւններով և զանազան դադարումներով զրկում կապը։ Նրա գործն է հետեւել աստուածային պարգեւ աբաշխութեան գաղտնիքին, մթութեան մէջ զանազանել յանցանքը հատուցման հետ կապող հրալին գործուածքի օրհասական թելից։ Իսկ ամենից աւելի կարեւորէ, որ նա կարողանալ ընդարձակել իւր կարեկցութեան սահմանները մինչեւ այն պատմութիւնը, որն անընդհատ կատարւումէ նրա անխոռվ գոյութեան ամեն մի ըոպէին. մինչեւ ժամանակակից թշուառութիւնները, որոնք այլ ևս չըկարողանային կրկնուել։ Նա պէտքէ անդադար զբաղեցնէ իւր կշռադատութիւնը՝ մտածելով այն տպաւորութիւնների և ազգեցութիւնների մասին, որոնք կունենան նրա հոգու և վարքի վրայ ամենօրեալ ընդհարումներն իրենց իրականութիւնը չըկորցնող տանջանքների հետ, որովհետեւ նոքա ծածկուածեն նրա հայեացքից։ Պէտքէ սովորեցնել նրան լիշելու այն յարաբերութիւնների ոչնչութիւնը, որոնց մէջ կանգնածէ այս աշխարհը, ուր ապրումէ նա և սիրում, այն աշխարհի մօտ, ուր ապրումէ և սիրում Աստուած, և ներշնչել նրան չըթուլացնել իրեն յանձնուած հոգսը այն մարդկանց քանակութեամբ, որոնց

մէջ տալածւումէ այդ հոգսը. որ ամուսնու և որդոց ազատութեան համար բարձրացրած աղօթքը չըկորցնէ իւր ուղղութիւնը և այն ժամանակ, երբ նա ասումէ այդ աղօթքը նրանց համար, որոնց ոչ ոք չըկալ որ սիրէ—այսինքն բոլոր անբաղդների և նեղուածների համար։

Կարծեմ, որ մինչեւ այժմ դուք ոչինչ չունիք արտայալու ինձ, բայց, գուցէ, շատ բան կարտայալտէք, երբ որ ասեմ այն, ինչոր ամենակարեւորն եմ համարում։

Կանանց համար գոյութիւն ունի մի վասնգաւոր գիտութիւն. թող զգուշանան նոքա առանց յարգանքի վերաբերելու նրան։ Այդ գիտութիւնը աստուածաբանութիւնն է։ Օտարոտի է և վշտալի, որ համեստութիւնը, որը հարկագրումէ նրանց կասկածել իրենց սեպհական ոյժերին և կանգ առնել գիտութիւնների շէմքում, ուր ամեն մի քայլ հաստատուն է և մատչելի ապացուգութեան, չի խանգարում նրանց առանց մտածելու իրենց անընդունակութեան մասին՝ նետուել մի գիտութեան մէջ, որի առաջ գողում էին ամենամեծ մարդիկ և որի մէջ ճանապարհից շեղուումէին ամենախմաստունները։ Օտարոտի է, թէ ինչպիսի ինքնաբաւականութեամբ և հպարտութեամբ կապումեն նոքա իրենց ամեն մի պակասութիւնն ու լիմարութիւնը, —որքան նրանց մէջ կայ մինը թէ միւսը, որքան նրանց մէջ կայ մեծամտութիւն, անհամբերութիւն և կոյր անհասկացողութիւն, —մի կապուկ սրբազն խոտերի հետ։ Օտարոտի է, որ այն արարածները, որոնց նշանակութիւնն է մարմնացնել սէրը, ամենից առաջ պախարակումեն այն, ինչ որ քիչ կարող է յայտնի լինել նրանց, և մտածումեն ծառալել Աստուծուն՝ վեր մագլցելով այն գահի աստիճաններից, որի վրայ նա բազմած է իրեւ դատաւոր, և աշխատելով բաժանել նրա հետ այդ գահը։ Վերին աստիճանի օտարոտի է, որ նոքա մտածումեն թէ Մխիթարիչ Հոգին

Ներշնչումէ նրանց այն մտաւոր սովորութիւնները, որոնք դառնումեն ընտանեկան խառնակութեան մշտական սկզբունքները. որ նոքա համարձակւում են քրիստոնէութեան ընտանի աստուածներին ալլանդակ կուռքեր դարձնել և հոգեւոր խաղալիքներ շինել, որոնց զարդարում են այնպէս, ինչպէս մտածումեն, իսկ մարդկանց մնումէ միայն հոգալ նոցա մասին տիսուր արհամարհանքով, որպէս զի չըկոտրեն և դրանով իրենց վրայ չըդարձնեն ատելութեան աղաղակները:

Եւ այդպէս միայն այդ բացառութեամբ աղջիկներին պէտքէ տալ համարիա միեւնոյն կրթութիւնը, ինչոր տղաներին՝ միեւնոյն ծրագրով ու դասընթացքով: Մակայն այդ կրթութիւնը պէտք է բոլորովին ուրիշ կերպ լինի: Կինը, ինչ դասակարգի էլ որ նա պատկանի, պէտքէ իմանալ այն ամենը, ինչ որ գիտէ նրա ամուսինը, բայց պիտի իմանալ ուրիշ կերպ: Մարդը պէտքէ իմանալ գիտութիւնների հիմքն ու զարգացումը, իսկ կինը—գիտութիւնների ընդհանուր գործածութիւնն առօրեալ կեանքի մէջ: Մարդկանց համար, լիրաւի, երբեմն խելացի է կնոջ պէս սովորել անմիջական գործածութեան համար կարգաւորել և կրթել իրենց մտաւոր ընդունակութիւնները գիտութեան այնպիսի ճիւղերի մէջ, որոնք յետոյ կարողանան նրանց պէտքական դարձնել հասարակական ծառալութեան համար, բայց առ հասարակ ամեն մի սովորած լեզուի կամ գիտութեան պիտի տիրապետէ կատարելապէս, իսկ կինը պէտքէ իմանալ լեզուն ու գիտութիւնը այնքան, որքան միայն այդ գիտութիւնը հնարաւորութիւն կըտալ նրան համակրել իւր ամուսնու և նրա լաւ բարեկամների ուրախութիւնները:

Մակայն նկատեցէք, որ կնոջ գիտութիւնն այն սահմաններում, որոնց նա հասնում է, պէտքէ բոլորովին ճիշտ լինի: Ա.հագին զանազանութիւն կալ տարբական գիտու-

թեան և հարեւանցի գիտութեան մէջ, հաստատուն հիմքերի և դադարկահայեցողութեան մէջ: Կինը միշտ կարողէ օգնել ամուսնուն նրանով, ինչոր հաստատ կերպով գիտէ թէ և քիչ. բայց նրանով, ինչ որ գիտէ կիսով չափ կամ սիալ կերպով, նա կարողէ միայն բարկացնել ամուսնուն:

Եթէ հարկաւորէ որեւ է զանազանութիւն անել աղջկալ և տղալի կրթութեան մէջ, այն է, որ աղջկանը հարկաւորէ աւելի շուտ մտցնել լուրջ և խորին հարցերի մէջ՝ նրա մտաւոր արագ զարգացման պատճառով, որպէս զի նրա երեւակայութեան բնական կայտառութեանն ու սրամտառութեանը աւելի լըրջութիւն և համբերութիւն աւելացնուի. որպէս զի նրան միշտ բարձր և ազնիւ մտքերի շրջանում պահեն: Այն գըքերը, որոնց գուռք տալիս էք նրան կարգալու, պէտքէ լինեն ոչ աւել, ոչ պակաս թեթեւ բովանդակութեամբ, քան թէ այն գըքերը, որոնց տալիս էք տղայի ձեռքը: Այժմ անձնատուր չեմ լինել գըքերի ընդրութեան մասին եղած հարցի քննութեանը, այլ կ'ասեմ, նայեցէք որ այդ գըքերը չը թափւին նրա ծնկների վրայ ընթերցանութեան համար գըքարանից ուղարկուած կապուկներից, որ գեռ թացեն խելացնութեան հեղեղի վերջին և ամենանուրբ սրսկումներից:

Մինչեւ անգամ սրամտութեան հեղեղից, որովհետեւ այդքան հրապուրիչ փորձութեան գործի մէջ, ինչպէսին է վեպասանութիւնների ընթերցանութիւնը, մենք պէտքէ վախենանք ոչ այնքան վատ վիպասանութիւնից, որքան չափազանց հետաքրքիր վիպասանութիւնից: Ամենադադարկվէպը չի առաջացնում այնպիսի բթացնող տպաւորութիւն, ինչպէս կրօնական յուզող գրականութեան ստոր ձեւերը, և ամենավատ վէպն այնպէս վնասակար չէ, ինչպէս սուտ չպատմութիւնը, սուտ փիլիսոփայութիւնը և քաղաքականութեան մասին անհիմն գատողութիւնները: Բայց ամենավա-

վիպասանութիւնն անդամ վտանգա որ է դառնում, եթէ նա զրկումէ իսկական կեանքը հետաքրքրութիւնից և մեծացնումէ այն հիւանդոտ ծարաւը, որը ծանօթացնումէ կեանքի այնպիսի կողմերի հետ, որոնք երբէք չեն կարող մեզ հետ ոչինչ յարաբերութիւն ունենալ:

Եւ այդպէս ես խօսումեմ միայն լաւ վիպասանութիւնների մասին, իսկ մեր ժամանակակից գրականութիւնն առանձնապէս հարուստ է այդպիսի վիպասանութիւններով։ Պարտ ու պատշաճ կերպով կարդացուած վիպասանութիւնները կարող են լուրջ օգուտ բերել, որովհետեւ այդպիսի ընթերցանութիւնը միեւնոյն է, ինչոր բարոյական մարմնագնութեան և քիմիալի քննադատութիւնն ու մարդկային ընութեան տարրերի վերլուծումը։ Բայց նոցա այդպիսի խնդրին ես չեմ կարող մեծ նշանակութիւն տալ, նոքա համարեա երբէք չեն կարդացուած բաւականին ուշադրութեամբ և այնպէս, որ լրացնեն այդ նշանակութիւնը։ Ամենամեծ բանը, որ նոքա կարող են անել, այն է կերպակուր տալ զարդացած կարդացողի գրգռմունքին և գիւրազգացութիւն տալ բարի կարդացողին, որովհետեւ իւրաքանչիւրն անպատճառ կ'ընդունի այն, ինչ որ յարմարւումէ նրա անձնական բնաւորութեանն ու տրամադրութեանը։

Նախանձուններին և բնութիւնից ինքնահաւաններին Տէկկերէլը սովորեցնում է արհամարհել մարդկութիւնը, հեղերին—ափսոսալ նրան, իսկ դադարիներին—ծիծաղել նրա վրայ։ Հենց այդպէս էլ վիպասանութիւնները կարող են օգտակար լինել՝ զննողաբար պատկերացնելով մարդկութեան վերաբերեալ որեւ է ճշմարտութիւնը, որի մասին մինչեւ այժմ միայն մութ կերպով էինք գուշակում։ Իսկ զրուցադրութեան նկարչական գեղեցկութիւնը այնպիսի մեծ փորձութիւն է, որ մինչեւ անդամ գրողներից ամենալաւերը չեն կարողանում հակառակել նրան և կապումեն մեզ հետ

այնքան սուր և միակողմանի համակրանք, որ նկարագրուածի կայտառութիւնն աւելի վնասակար է դառնում քան թէ օգտակար։

Թէ ինչ չափով կարելի է թոյլ տալ վէպերի ընթերցանութիւնը, ես յանձն չեմ առնում վճռելու այդ, բայց դրա կանապէս հաստատումեմ, որ ինչ վէպեր էլ կարդացուին, ինչ բանաստեղծութիւններ կամ պատմական գրուածքներ էլ կարդացուին, միշտ հարկաւորէ նոցա ընդրութեան մէջ առաջնորդուել ոչ թէ այն մտքով, որը նրանցից դուրս է, այլ այն մտքով, որը նրանց մէջն է։ Պատահական կամ միջանկեալ շատութիւնը, որ կարողէ պատահել կամ հասկացուել զօրեղ գրքի մէջ, երբէք չի վնասում լաւ աղջկանը, իսկ հեղինակի դադարկաբանութիւնը թուլացնումէ նրան և գրաւիչ երեւակայութիւնը մոլորեցնում։ Եթէ որ աղջիկը կարողանալ մուտք ունենալ հին կլասիքական գրքերի լաւ գրադարանների մէջ, այն ժամանակ ամեն մի ընդրութիւն անօգուտ է։ Այնպէս արեք, որ ժամանակակից ամսագրերից և վէպերից ոչ մէկն էլ չընկնի ձեր աղջկայ աչքովը։ բայց հենց որ օրն անձրեւալին կըլինի, բաց թողէք նրան հին գրադարանի մէջ և հանգիստ թողէք։ Նա այնտեղ կ'որոնի իւր համար այն, ինչ որ հարկաւոր է։ դուք այդ չէք կարող անել, որովհետեւ աղջկայ և տղայի բնաւորութիւնները կրթելու միջոցների մէջ գոյութիւն ունի հետեւեալ զանազանութիւնը։ տղային դուք կարող էք տալ հարկաւոր ձեւը՝ տաշելով նրան կտրիչներով, ինչպէս մարմարիօնի թերթը, իսկ եթէ նա բարձր տեսակից է, կարողէք ձուլել նրան այդ ձեւի մէջ՝ ինչպէս բրոնզի կտորը։ Բայց աղջկայ հետ ուրիշ կերպ պէտքէ վարւել, դուք աղջկանից ուղղակի ոչ էնչ չէք կարող շինել, նա աճումէ ինքն իրեն՝ ինչպէս մի միջանց կարող շինել, նա աճումէ ինքն իրեն՝ ինչպէս մի ծաղկի, առանց արեգակի նա կըթառամի և եթէ նրան բաւականաշապի օդ չէք տալ, կըչորացնալ ինչպէս նարկեզը

իւր ծածկոցի մէջ. եթէ նրան չէք պահպանել կեանքի մի քանի ըոպէներում, նա կարողէ վայր ընկնել և փոշու մէջ ապականել իւր փոքրիկ գլուխը: Նրան կապել անկարելի է, նա պէտքէ այսպէս թէ այնպէս աճի և բարեկարգուի իւր ուզածին պէս, պէտքէ թէ հոգեպէս և թէ մարմնաւորապէս ունենալ:

Նարժումների թեթեւ ազատութիւն
Եւ կուսական շաւիդների կամք:

Բաց թողէք նրան գրադարանի մէջ այնպէս, ինչպէս ուլը բաց էք թողնում գաշտում: Ուլը վնասակար խոտերը քսան անգամ աւելի լաւ է զանազանում, քան թէ մենք. նա որոնումէ իւր համար լաւերը, քաղումէ մի քիչ դառն ու փշոտը, բայց նրա համար օգտակարը, թէպէտ և դուք հասկացողութիւն էլ չունիք, որ դրանք կարող են օգտակար լինել:

Արուեստներից թող նրա առաջ լինեն ամենագեղեցիկ օրինակները և արուեստի լինչ ճիւղով էլ նա պարապւելու լինի, թող պարապւի եռանդով ու լրջօրէն և սովորի հասկանալ աւելի, քան թէ կարող է կատարել: Ես ասացի «ամենագեղեցիկը», այսինքն՝ ամենահասարակները, ճշմարիտները և օգտակարները: Նկատեցէք այդ լատկանիշները, դրանք յարմարումեն բոլոր արուեստներին: Յարմարեցրէք նրանց երաժշտութեանը, որին նոքա, ըստ երեւոյթին, ամենից քիչ են յարմարում: Ես ասացի «ճշմարիտները», այսինքն այնպիսիները, որտեղ նօտաներն ամենից աւելի մօտիկ և աւելի ճշտութեամբ են հաղորդում խօսքերի նշանակութիւնը և յալտնի տրամադրութեան բնաւորութիւնը. ասացի «հասարակները», այսինքն այնպիսիները, որտեղ նշանակութիւնն ու ներդաշնակութիւնը ձեռքեն բերւում նօտաների ամենաքիչ քանակութեամբ և աւելի արտայալտող նօտաներով. եւ, վերջապէս, ասացի «օգտակարները»,

այսինքն այնպիսիները, որտեղ երաժշտութիւնը դեռ մեծացնում է առանց այդ էլ անհամեմատ գեղեցիկ խօսքերի գեղեցիկութիւնն այնպէս, որ նրանցից իւրաքանչիւրը տըգեղեցիկութեան մէջ և աւելի պինդ է կալչում մեր սրաին այն ըոպէին, երբ նրան կարօտում ենք:

Թող որ աղջկայ կրթութիւնն էլ այնպէս լրւրջ լինի, ինչպէս տղայինը՝ ոչ միայն ծրագրով և դասընթացքով, այլ և դրանից առաւել՝ հոգւով: Դուք կրթումէք աղջկանն այնպէս, որպէս թէ նախապատրաստում էք նրան ինչպէս գրադարանի զարդ, իսկ յետոյ ցաւումէք նոցա թեթեւամտութեան վրայ: Տուէք նրանց նոյն առաւելութիւնները, ինչ որ տալիս էք նրանց եղբայրներին, դիմեցէք այն բարձր ինչ որ տալիս էք նրանց եղբայրներին, որ նրանց մէջ էլ կայ, սովորեցրէք նրանց՝ բնազդումներին, որ նրանց մէջ էլ կայ, սովորեցրէք նրանց որ համարձակութիւնն ու պարզութիւնը նոցա գոյութեան սիւներն են, և միթէ դուք կարծումէք, որ նոքա խուլ յալտնի է ձեզ, մեր քրիստոնեալ ամբողջ տէրութեան մէջ յալտնի է ձեզ, մեր քրիստոնեալ ամբողջ տէրութիւնը լինենց նշանաշերմեռանդութիւնն ու համարձակութիւնը լինենց նշանաշերմեռանդութիւնն կարողանալին զուգահեռական կերպով ընթանալ կութեամբ կարողանալին զուգահեռական կերպով ընթանալ կութեամբ մանելու կարողութեան հետ. մինչեւ անգամ նոցա սենեակը մանելու կարողութեան հետ. մինչեւ անգամ այժմ, երբ կնոջ ճակատագերը կանգնելու միջոցների յարագութեամբ կարողանալին զուգահեռական կերպով ընդհանուր սիստեմը — երկչուսութեան և խաբերութեամբ ընդհանուր սիստեմը — երկչուսութեան և խաբերութեամբ մի գարշելի վարակումն է. մի երկչուսութիւն, բէութեան մի գարշելի վարակումն է. նրանով, որ աղջկներին թոյլ է դըւում ապրել և սիրել միայն այնպէս, ինչպէս դուր է գալիս հարեւաններին. մի խաբէութիւն, որը կայանում է գալիս հարեւաններին. մի խաբէութիւն, որը կայանում է նրանում, որ մենք մեր սեպհական ինքնասիրութեանը գոհացումն տալու համար կուրացնումենք աղջկայ հայեացքը ըլուն աշխարհական ստոր փառասիրութեան լի փալով հենց քըն աշխարհական ստոր փառասիրութեան լի փալով հենց

այն ժամանակ, երբ նրա կեանքի բոլոր երջանկութիւնը կախուածէ նրանից, որ պարզ կերպով տեսնէ:

Վերջապէս դուք պէտքէ տաք նրանց ոչ միայն բարձը կրթութիւն, այլ և արժանաւոր դաստիարակներ: Զեր որդուն դպրոց ուղարկելով՝ սովորաբար դուք փոքր ինչ մտածունքի մէջ էք ընկնում, թէ ինչ մարդ է ուսուցիչը: Ինչ մարդ էլ որ լինի նա՝ ձեր որդու իրաւունքը տալիս էք նրա ձեռքը և ինքներդ էլ բաւականին յարգանք էք ցուցանում նրան: Եթէ նա գալիս է ձեզ մօտ ճաշելու, նրան առանձին սեղանի վրայ չէք նստացնում: Զեզ նոյնպէս յայտնի է, որ բարձր դպրոցներում ձեր որդու դաստիարակը գտնուումէ մի դեռ աւելի կարեւոր անձի իշխանութեան տակ, որը վայելումէ ձեր խորին յարգանքը: Դահերեց Կրիստի Զորջի կամ թէ բեկոր Տրէնիտի հետ դուք հազիւ թէ շատ բարձրից վերաբերւէք:

Բայց ինչպիսի դաստիարակների էք յանձնում ձեր աղջկներին և ինչպիսի յարգանք էք ցուցանում ձեր ընդրած դաստիարակներին: Արդեօք աղջիկը կարող է որբան և իցէ լուրջ նշանակութիւն տալ իւր սեպհական վարքին ու մըտքին, երբ դուք նրա բնաւորութեան թէ՝ մտաւոր և թէ՝ բարոյական կրթութիւնը յանձնումէք մի անձի, որի հետ թուլ էք տալիս ձեր աղախնին պակաս յարգանքով վերաբերւել, քան թէ տնտեսուհու հետ (որպէս թէ ձեր աղջկայ հոգու համար պատասխանտուութիւնը պակաս կարեւոր է, քան թէ աղդրած և տապակած իրերի համար պատասխանատուութիւնը), և որի համար դուք ինքներդ մեծ պատիւ էք համարում, եթէ երբ և իցէ թուլէք տալիս երեկոյեան նստել ձեր հիւրասենեակում:

Ես խօսեցի կնոջ կրթութեան վրայ գրականութեան և արուեստի ունեցած բարերար ազգեցութեան մասին, բայց կայ մի ուրիշ օգնական եւս, առանց որի այդ գործը չե

կարող առաջ ընթանալ և որի ազգեցութիւնն առանձին վերցրած՝ երեմն շատ բան է անում, քան թէ բոլոր մնացածները միասին: Այդ օգնականը—գեղեցիկ, վալենի բնութիւնն է: Ահա թէ ինչպէս է նկարագրւում Յովհաննա-Դարլի կրթութիւնը:

«Այն կրթութիւնը, որն ստացել է այդ աղքատ աղջիկը, մեր ալժմեան հասկացողութեամբ՝ ստոր էր, իսկ մաքուր փիլիսոփալական տեսակէտից՝ դա անասելի բարձր կրթութիւն էր, որը անպէտք է մեր ժամանակի համար միայն նրանով, որ անըմբոնելի է: Բացի իւր հոգեւոր առաւելութիւններից՝ նա աւելի պարտական էր իւր դրութեան առաւելութիւններին: Դօմ-Ռէմի աղջիկը հոսումէր ահապին անտառի եզերքով, ուր ժողովուում էր յաւերժահարդին այնպիսի բազմութիւն, որ ծխական քահանան (cure') հարկադրուած էր ամեն տարի պատարագ մատուցանել այնտեղ, որպէս զի նրանց որեւէ կարգի մէջ պահէր: Դօմ-Ռէմի անտառները գովլւած էին ամբողջ երկրում: Նրանց մէջ բնակւումէին խորհրդաւոր ոյժեր և հին գաղտնիքները նրանց մէջ ստանում էին տրագիքական զօրութիւն: Այն տեղ կային մաւրիտանական տաճարների նման մենաստաններ, որոնք իշխանական իրաւունքներ ունէին ինչպէս Թուրէնում, այնպէս էլ գերմանական սէլմում: Վաղորդեան և երեկոյեան ժամերգութեան ժամանակ մենաստանների զանգակների քնքով հնչիւնները տարածւումէին հեռու անտափանցելի թաւուտների մէջ: Ամեն մի մենաստան ունէր իւր խորհրդաւոր աւանդութիւնը: Մենաստանները շէին և նոքա այնպէս հեռու էին միմիանցից, որ երեկ չէին խանգարում ամբողջ երկրում թագաւորող խուլ միայնակութիւնը, այնու ամենալիւ նոքա բաւական էին հովանաւորելու այդ երկրում քրիստոնէտական սրբութիւնը, որն ուրիշ կերպ կըխորասուգուէր հեթանոսական ամայու-

թեան մէջ»:

Մեզ մօտ, Անգլիայում, ի հարկէ, դուք չեք կարող ունենալ 36 մղոն երկարութեամբ անտառներ, բայց, այնու ամենայնիւ, կարող էիք, եթէ կամենալիք, ձեր որդոց համար պահել մի գոյգ լաւերժահարս:

Բայց արդեօք կամենում էք ալդ: Երեւակայեցէք, եթէ
ձեզանից իւրաքանչիւրն ունենալ տան ետեւ մի փոքրիկ
այգի, այնպէս փոքրիկ, որ ձեր որդիները կարողանալին նրա
մէջ խաղալ և վազվազել խոտերի վրայ, և որ դուք հնարա-
ւորութիւն չունենալիք ուրիշ տեղ գաղթել, իսկ ձեր ար-
դիւնքն էլ աւելանար երկու կամ չորս անգամ, եթէ որ
բուրաստաններում խոր փոսեր քանդէիք և ծաղկանոցները
կօկսի գեղեր գարձնէիք: Արդեօք կանէք ալդ: Կարծեմ ոչ:
Դուք չէք անել ալդ, հաւատացէք, մինչեւ անգամ այն
ժամանակ, եթէ ձեր արդիւնքն աւելանար ոչ թէ չորս,
այլ վաթսուն անգամ:

Այնուամենայնիւ այդպիս էք վարւում ամբողջ Սնգլի-
ալի հետ։ Ամբողջ երկիրն աւելի չէ մի փոքրիկ այդուց,
որի մէջ հազիւ թէ տեղ լինի ձեր բոլոր որդիների համար
վազգել խոտերի վրայ։ Այդ այգին դուք եռանդով դարձ-
նում էք մի ձուլարան և ողողում մոխրի կոյտերով, իսկ
դրանից տանջում են ոչ թէ դուք, այլ ձեր որդիները,
որովհետեւ բոլոր՝ յաւերժահարսերին չէք արտաքսում։ Թա-
ւուտ անտառների յաւերժահարսերի նման կան և ձուլա-
րանի յաւերժահարսեր, որոնց առաջին պարզեւը «ուժեղ-
ների սուր նետերն են», իսկ վերջին պարզեւը «ցրդէնիի
տաք ածուխները»։

Բայց այդ կետի վրայ ես չեմ պնդում, թէպէտ իմ
բոլոր ասածներից չըկայ մէկը, որին ես աւելի զօրեղ զգա-
լի. մենք այնպէս քիչ ենք օգտուել բնութեան իշխանու-
թիւնից, քանի որ նա մեր ձեռքումն էր, որ այժմ նրա

կորուստը հազիւ թէ մեզ հոմար զգալի լինի: Իսկ և իսկ Մէրսէի այն կողմում կան Սնօռւածոնն ու Մէնէեան կիր-ճերը, իսկ Ենդլսի մէջ, ճահիճների ետեւ, կայ որձաքարի այն հզօր ժայռը պսակուած վերեսկայի պսակով և ոռոգու-ած ծովային լորձանքներով, որը երբեմն սրբազն էր հա-մարւում. դա Գօլիգէտը կամ Գէտլանդն է, որ այժմէլ ազդու տպաւորութիւն է թողնում, երբ նրա կարմիր կրա-կը առաջին անդամ բորբոքւումէ փոթորկի մէջ: Այդպիսի բլուրները, այդպիսի երկնագոյն նաւամատուցներն ու ջրանցք-ները յաւիտեան սիրելի կըլինեն լոյներին և վճռող ազգե-ցութիւն կ'ունենան ժողովրդի հոգու վրայ: Սնօռւածոննը՝ ձեր պարնասն է, բայց ո՞րտեղ են մուսաները: Գօլիգէտ սարը՝ ձեր Եգինա կղզին է, բայց ո՞րտեղ է Միներվի տա-ճարը:

ԶԵք կամենում լսել, թէ այդ Պարնասի հովանաւորութեան տակ ինչ է կատարել մեր քըիստոնէական Միներվան մինչեւ 1848 թուականը։ Ահա Վալլիսեան մի ուսումնարանի մասին համառօտ զեկուցումը, որը զետեղուածէ ժողովրդական լուսաւորութեան խորհրդի հրատարակած «Վալլիսի հաշիւը» գրքի 261-րդ երեսում։ Այդ ուսումնարանը գտնուումէ 5000 բնակիչ ունեցող քաղաքին կից։

«Յետոյ սկսեցի կանչել միւս աւելի բազմամարդ դասա-
տանի աշակերտուհիներին, որ մեծ մասամբ նոր ընդունու-
ածներ էին: Երեք աղջկայ խօսքերով՝ նոքա երբէք չեն
լսել Քրիստոսի մասին, նրանցից երկուսը երբէք չեն լսել
Աստուծոյ մասին: Վեցից երկուսը համարումէին թէ ներ-
կայումս Քրիստոս երկրի վրայ է (այդ միտքը, կարծեմ,
վատ չէ), երեքը ոչինչ ըբգիտէին խաչելութեան մասին:
Եօթից չորսը չըբգիտէին ոչ ամիսների անունները, ոչ տա-
րուայ օրերի թիւը: Թուաբանութիւնից կարողանում էին
գումարել միայն երկուսը երկուսի հետ և երեքը երեքի

հետ. նոցա գլուխները կատարել ալ դատարկութիւն էին ներկայացնում»:

Օ՛, Անգլիակի զանալք, սկսած պրինցէսսից, որ կրումէ այդ Վալլիսի անունը, մինչեւ վերջին ռամկուհին՝ մի մտածէք թէ ձեր որդիներին կարելի է գուրս բերել ճշմարիտ խաղաղ նաւահանգիստը, քանի որ միւս որդիները թափառումեն բլուրների վրայ առանց հովտի ոչչարների նման: Մի մտածէք թէ ձեր աղջիկներին կարելի է մեծացնել մարդկալին իսկական գեղեցկութեամբ, քանի որ Աստուծոյ ստեղծած ամենագեղեցիկ երկիրը նրանց համար դասարանական սենեակ և խաղալու տեղ ծառայելու փոխարէն կեղտոտութեան և ամայութեան մէջ է: Դուք չէք կարող մկրտել նրանց ձեր մի վերջոկ խորսութեամբ աւազանի մէջ ինչպէս հարկն է, եթէ չէք մկրտիլ նոյնպէս այն վճիտ աղբեւրների մէջ, որոնց անդադար փորումէ Մեծ Օրէնսդիրը ձեր հայրենիքի ժայռերում. այն մաքուր ջրերի մէջ, որոնցով հեթանոսը կըերդուէր նոցա անարատութեան պատճառով, բայց գուք պատումէք միայն պղծութեամբ: Դուք չէք կարող ձեր որդիներին մօտեցնել փալտից շինած աղքատ բեմերին, քանի որ չէք տեսնում դէպի երկինքը բարձրացած մուլթ երկնագոյն բեմերի վրայ արձանագրութիւնները, այն բեմերի, որոնք գտնուումեն ձեր հայրենիքի գահը պահպանող սարերի վրայ, ուր հեթանոսը ամեն մի ամպի մէջ կըտեսնէր երկնալին զօրութիւնը. այն բեմերի, որոնք ոչ թէ կառուցուած են աներեւոյթ Աստուծոյ համար, այլ կառուցել է աներեւոյթ Աստուածը ձեզ համար:

Մինչեւ այժմ մենք խօսեցինք կնոջ բնաւորութեան, նրա դաստիարակութեան, ընտանեկան պարտականութիւնների և թագաւորական արժանաւորութեան մասին, այժմ դառնանք վերջին ամենաընդարձակ հարցին: Տէրութեան վերաբերութեամբ ի՞նչպէս են նրա թագաւորական պարտա-

կանութիւնները:

Սովորաբար ընդունուածէ տղամարդու պարտականութիւնները հասարակական համարել, իսկ կնոջը—մասնաւոր: Բայց այդ բոլորովին ճիշտ չէ: Տղամարդիկ ունին անձնական գործեր և պարտականութիւններ իրենց տան վերաբերեալ, և հասարակական պարտականութիւններ ու գործեր, որոնք առաջինների ընդարձակ տեսակն են:

Հենց այդպէս էլ կանալք ունեն իրենց տան վերաբերեալ անձնական գործեր ու պարտականութիւններ և գրանց համապատասխան հասարակական գործեր ու պարտականութիւններ:

Տան վերաբերեալ տղամարդի պարտականութիւնները, ինչպէս առաջ արդէն ասուած է, կայանումեն այդ տան գոյութեան ու յառաջադիմութեան ապահովութեան և պահպանութեան մէջ: Կնոջ պարտականութիւնները կայանում են տան մէջ կարգ ու կանոն, անդորրութիւն ու գեղեցկութիւն մտցնելու մէջ:

Ընդամենակեցէք այդ երկու ֆունկցիաները. մարդու պարտականութիւնն է, — որպէս հասարակութեան մի անդամ,— պաշտպանել տէրութիւնը, աջակցել նրա յառաջադիմութեանը և պահպանել: Կնոջ պարտականութիւնն է, — որպէս հասարակութեան մի անդամ,— կարգ ու կանոն պահպանել տէրութեան մէջ, կազմակերպել և գարդարել նրան:

Ինչպէս տղամարդը կանգնած իւր տան շէմքում՝ հարկաւոր դէպրում պաշտպանումէ նրան բռնութիւններից ու վիրաւորանքից, այնպէս էլ, և գեռ աւելի անձնութեամբ, նա պէտքէ հայրենիքի պաշտպան կանգնէ և, մինչեւ անգամ եթէ հարկաւորէ, զոհէ թշնամուն իւր տունը, որպէսզի նրանից գուրս կատարէ իւրաւելի կարեւոր գործը: Կինն էլ նոյն օրինակով իւր տան մէջ կարգ ու կա-

նոնի կենտրոնը երեւալով, տանջանքները բժշկող բալզամը և գեղեցկութեան հայելին լինելով հանդերձ՝ պէտքէ նոյնը լինի և նրանից դուրս,—այնտեղ, ուր կարգ ու կանոն պահպանելն աւելի դժուարին է, տանջանքներն աւելի շատ թեթեւութիւններ են պահանջում, իսկ գեղեցկութիւնը շատ քիչ է պատահում:

Ինչպէս որ տղամարդի սրտում զետեղուած է իսկական պարտականութիւնները կատարելու բնագդական ձգտումը և այդ բնագդումը չի կարելի արմատախիլ անել, այլ կարելի է միայն խանգարել և ալլանդակել՝ հեռացնելով նրան ճշմարիտ նպատակից. ինչպէս որ տղամարդի մէջ կայ սիրոյ բնագդումը, որը պարտ ու պատշաճ կերպով կարգաւորւած լինելով՝ պահպանումէ կեանքի բոլոր սրբութիւնները, իսկ սուտ ուղղութիւն ունենալով՝ ընդհատումէ նրանց, հենց ալդպէս էլ զետեղուած է նրա մէջ մի ուրիշ անսպառ բնագդում—սէր գէպի իշխանութիւնը, որ պարտ ու պատշաճ կերպով ուղղուած լինելով՝ պահպանումէ կեանքի և օրէնքի բոլոր վեհութիւնը, իսկ ուղղուած լինելով սուտ ճանապարհով, կործանումէ նրանց:

Այդ բնագդումը խոր արմատներ է ձգել ինչպէս տղամարդկանց, այնպէս էլ կանանց կեանքի գաղտնիքների խորքում։ Աստուած է տնկել նրան այնտեղ և Աստուած էլ պահպանումէ նրան այնտեղ։

Իզուր և անիրաւացի կերպով էք դատապարտում իշխանութեան ցանկութիւնը։ Ի սէր Աստուծոյ և ի սէր մարդու՝ ցանկացէք այդ բոլոր սրտով։ Բայց ինչպէսի իշխանութիւն։ Ահա ինչի մէջ է կալանում ամբողջ հարցը։ Կործանելու իշխանութիւն, առիւծի թաթե՞ր և սատանալի շնչումն։ Ոչ։ Բուժելու, ազատելու, առաջնորդելու և պաշտպանելու իշխանութիւն։ Գալիսօնի և վահանի իշխանութիւն։ Հպումով բժշկող, բժիշկներին միացնող և գերի-

ներին ազատող թագաւորական ձեռքի իշխանութիւն։ արդարութեան ժայռի վրայ կանգնած գահի իշխանութիւնը, այն ժայռի, որտեղից կարելի լինի ցած իշնել միայն ողորմածութեան աստիճաններով։ Միթէ ձեզ չ' գրաւում այդպիսի իշխանութիւնը, միթէ դուք չ' գրաւում այդպիսի գահը, միթէ չ' կամենում տանտիկինների փոխարէն թագուհիներ լինել։

Վաղուց արդէն Անդլիալի կանալք իւրացըել են այն կոչումը, որն առաջ բացառապէս բարձր դասակարգի սեպկանականութիւն էր կազմում. անցեալներում նոքա բաւակահականութիւն էին միայն «gentlewoman» կոչումով «ջէնտլմէն» նանում էին միայն «լուսականանօք կոչման համապատասխան, իսկ այժմ նոքա թախանձանօք կոչման համապատասխան, իսկ այժմ նոքա թախանձանօք պահանջումեն «լէդի» տիտղոսը կըելու իրաւունքը՝ «լօրդ» տիտղոսի համապատասխան^{*)}։

Դրա համար ես չեմ դատապարտում նրանց, այլ դատապարտումեմ այն եղանակի ստորութիւնը, որն առաջնորդումէ նրանց այդ պահանջի ժամանակ։ Ես կըցանկանալի, որ նոքա «լէդի» կոչումը պահանջելով և պնդելով հանդերձ պահանջէին ոչ միայն այդ կոչումը, այլ և այն հանդերձ պահանջէին ոչ միայն այդ կոչումը, որնք միացած են այդդերն ու պարտականութիւնները, որոնք միացած են այդ կոչումը հետո։ Լէդի նշանակումէ «հաց բաժանող», ինչպէս կոչման հետ։ Լէդի նշանակումէ «օրէնքների պաշտպան», և այդ երկու լորդ նշանակումէ «օրէնքների պաշտպան», և այդ երկու տիտղոսներն էլ վերաբերումեն ոչ թէ այն օրէնքին, որը պաշտպանումէ տան մէջ, և ոչ թէ այն հացին, որը բաշտպանումէ տան մէջ, և ոչ թէ այն հացին։

*) Շատ ցանկալի կըլինէր, որ անդլիալան հասարակութեան յայտնի դասակարգերի երիտասարաւութեան համար հիմնուէր իւկայայտնի ասպետական կարգ այնպէս, որ տղայ և աղջիկ հասնելով որոշկան հասպետակին՝ օրինական կերպով հաստատւէին ասպետի և լէդիի եալ հասպետին՝ օրինական մէջ. մի արժանաւորութիւն, որը տրուէր միայն արժանաւորութեան մէջ. մի առժամանակ փորձելուց յետոյ և յետ առնուէր բնաւորութեան մի առժամանակ փորձելուց յետոյ և յետ առնուէր բնաւորութեան մի առժամանակ փորձելու դէպքում։ Այդպիսի որ եւէ անազնիւ փարմունքի մէջ մեղադրւելու դէպքում։ Այդպիսի որ եւէ անազնիւ կատարեալ հարաւոր կըլինէր պատիւ սիրող մի ազգի համար և կունենար ամենամեծ հետեւանքներ։

ժանւումէ ընտանիքում, այլ այն օրէնքին, որը պահպանում է ամբոխի համար, և այն հացին, որը բեկանում է ամբոխը: Լօրդ իրաւունք ունի իւր կոչման վրայ միայն այնքան, որքան պահպանումէ իւր Տիրոջ հաստատած ճշմարիտ օրէնքը, իսկ լէդին իրաւունք ունի իւր կոչման վրայ միայն իւր Տիրոջ ուղարկած աղքատներին հասցրած այն օգնութեան չափով, որը երբեմն թուլադրուած էր կանանց տարածել և նրա վրայ. կինը իրաւունք ունի այդ տիտղոսը կրելու միայն այն ժամանակ, երբ ճանաչում են նրան, ինչպէս երբեմն ճանաչում էին նրան հացը բեկանելու ժամանակ:

Այդ օրինական և բարերար տիրապետութիւնը մեծէ և լարգելի ոչ թէ այն մարդկանց քանակութեամբ, որոնցով նա անցել է ժառանգաբար, այլ այն մարդկանց քանակութեամբ, որոնց գրկումէ այդ տիրապետութիւնը. նա միշտ երկիւղած հաւատարմութիւն է ներշնչում երբ թագաւորական ցեղը հիմնուած է պարտականութեան զգացմունքի վրայ, իսկ պատուասիրութիւն է ներշնչում իւր ողորմածութեան համեմատութեամբ: Դուք կտմենումէք վասսալների շքախմբով նշանաւոր լէդիներ լինել: Թողարկանիս լինի, դուք չեք կարող չափազանց նշանաւոր լինել և ձեր շքախումբը չափազանց մեծ չի լինել. բայց նաև չեք, որ այդ շքախումբը կազմուի այն վասսալներից, որոնց դուք ծառայում էք և կերակրում, այլ ոչ միայն սարուկներից, որոնք ծառայում են ձեզ և կերակրում. նաև չեք որ ամբոխը, որը հնագանդումէ ձեզ, կազմուի այն մարդկանցից, որոնց դուք միխթարել էք և ոչ վշտացրել, որոնց ազատել էք գերութիւնից և ոչ սարկացրել:

Մինչեւ այժմ ես խօսեցի ստորին կամ ընտանեկան իշխանութեան մասին, բայց այն ամենը, ինչ որ ասացի, ոչ պակաս լարմար է և թագաւորական իշխանութեանը:

Ձեզ համար բաց է դէպի թագաւորական բարձր կոչումը տանող մուտքը, եթէ յանձն կառնէք նրա վեհ պարտութեանները: «Rex et Regina», Roi et Reine—Կառավարիչ և կառավարչուհի նրանք են, որոնք կառավարում—ստեղծումեն ճշմարիտը». նոքա զանազանուումեն լօրդից և լէդից նրանով, որ բարձրագոյն իշխանութիւն ունեն ոչ միայն մարմնի վրայ, այլ և հոգու վրայ, ոչ միայն հագցնում և կերակրումեն, այլ և ուղղում, սովորեցնումեն: Բայց չեք դուք, գիտակցաբար թէ անդիտակցաբար, անպատճառ պէտքէ թագաւորէք շատ սրտերում. այդ թագից դուք ոչ մի տեղ չեք հեռանալ և միշտ թագուհիներ կըմնաք ձեր սիրահարների, ամուսինների և որդիների համար. դուք աւելի բարձր խորհրդաւորութեամբ զգեստաւորւած թագուհիներ կըլինէք արտաքին աշխարհի համար, որը միշտ խոնարհուել է և կըխոնարհուի կնոջ զմուռնէնի թագի և բիւրեղեալ Գալիսօնի առաջ: Բայց աւաղ, դուք շատ լաճախ բիւրեղեալ և անհոգ թագուհիներ էք լինում. ձեր մեծութիւնը որոնում-բռնումէք չնչին իրերի մէջ և արհամարթիւնը որոնում-բռնումէք չնչին իրերի մէջ. դուք թուլ էք տալիս՝ որ մարդկային հասարակութեան մէջ կամայականութիւնն ու բռնութիւնը կարգադրեն ըստ կամաց հակառակ այն իշխանութեան, որը պարգեւել է մեզ անմիջական այն իշխանութեան իշխանը. այն իշխանութեան, որին կերպով Հաշտութեան իշխանը. այն իշխանութեան, որին ձեզանից շատերը ծախում են, իսկ բարիները մոռանում:

«Հաշտութեան իշխան» տսացի ես, լաւ նկատեցէք այդ անունը: Երբ որ թագաւորները կառավարումեն այդ անուան տակ, երբ որ նրանով կառավարում են երկրի դատաւորներն ու այս աշխարհի մեծերը,—նոքա իրենց աղքատ դրութեան սահմաններում, իրենց մարդկային բնութեան չափով հասնումեն այդ մեծ իշխանութեանը: Բայց նոցանից ըլկան կառավարիչներ, ամեն մի ուրիշ սկզբնաւորութիւն ուրիշ կառավարիչներ.

անիշխանութիւն է։ Նրանք, որոնք կառավարում են Աստուծոյ անունով և ողորմութեամբ—հաշտութեան իշխաններն ու իշխանուհիներն են։ Ամբողջ տիեզերքում չըկայ մի պատերազմ, մի անարդարութիւն, որի համար դուք, կանալքդ պատասխանատու չըլինէք, և այդ ոչ թէ նրա համար, որ դուք պատճառեցիք, այլ նրա համար, որ չըխանգարեցիք։ Տղամարդիկ իրենց բնութեամբ հակուածեն դեպի պատերազմը։ նոքա պատրաստ են կռուելու ամեն մի պատճառով և առանց դրան։ Զեր դորձն է ցոյց տալ նրանց այդ պատճառը և խանգարել, եթէ որեւ է պատճառ չըկայ։ Չըկայ երկրիս վրայ մի՛ տանջանք, մի՛ վիշտ, մի՛ սրտնեղութիւն, որոնց մէջ դուք, վերջ ի վերջով, մեղաւոր չըլինիք։ Տղամարդիկ կարող են տանել այդ տանջանքները, վշաերի և անիրաւութիւնների տեսարանները, բայց դուք պէտք է ընդունակ չըլինիք տանելու այդ։ Տղամարդիկ պատերազմի փոշու մէջ առանց նկատելու կարող են ոտնակոխ անել տանջանքները, բայց նրանք թոյլ են կարեկցութեան մէջ և չափաւոր ապաւինութեան մէջ։ միայն դուք ընդունակ էք զգալու տանջանքների բոլոր խորութիւնը և գտնելու նրան բուժելու միջոցը։ Բայց փոխանակ այդ բժշկութեան մասին աշխատելու, դուք հեռանում էք ու ձեր ետեւից փակում այդու վանդակների և ծառաստանի դռները ու անտարբերութեամբ խոստովանուում, որ ցանկապատի ետեւ ամբողջ աշխարհը շփոթութեան մէջ է, աշխարհը մի գաղտնիք է, որի մէջ դուք չէք համարձակուում թափանցել. աշխարհը մի տանջանք է, որը չէք համարձակուում երեւակայիւլ։

Ես հաստատապէս ըլդիտեմ մարդկալին կեանքի մէջ մի երեւոյթ, որ ինձ զարմանալի թուար: Ինձ չի զարմացնում ոչ մի խորոշիւն, որի մէջ կարող է ընկնել այդ մարդկութիւնը, եթէ նա միանգամ արդէն կորցրել է պատւի

զգացմունքը. չի զարմացնում այն ժլատի մահը, որը պապանձող ձեռներից խլում է ոսկին. չի զարմացնում այն փափկասէրի կեանքը, որի ոտները փաթաթուած են սաւանով. չի զարմացնում այն սպանութիւնը, որը կատարում է մի մարդ իւր միակ զոհի վրայ, մի հարուած՝ որ հասցնու մէկը երկաթուղու վագոնի մթութեան մէջ կամ ճահճալին եղեկնուածի ստուերներում. չի զարմացնում մինչեւ անգամ այն սպանութիւնը, որը կատարումեն անհաշիւ քանակութեամբ մարդիկ անհաշիւ ամբոխի վրայ, մի սպանութիւն՝ որ կատարումեն պարծանքով գրգռուած ժողովուրդները յալտնի կերպով, որը ցերեկով։ Չի զարմացնում և նոցաթագաւորների ու քահանաների անչափելի, աներեւակալիկի և դժողքից մինչեւ արքայութիւնը դիզուած յանցանքները։ Բայց որ ինձ համար անիմանալի է և զարմանալի, այդ ձեր քնքոյց և հեղ կինն է մանուկը կրծքին՝ այդ մանկան ու նրա հօր վրայ ունեցած իշխանութեամբ. մի իշխանութիւն՝ որը եթէ նա կամենար, աւելի մաքուր կը լինէր երկնալին օդից և զօրեղ երկրալին ծովերից. որը մի այնպիսի երանելի պարզեւ կը լինէր, որ նրա ամուսինը չէր փոխիլ ամբողջ երկրագնդի հետ, թէպէտ եւ այդ երկրագունդն ամբողջպիսին բաղկացած լինէր մաքուր յակինթից, գունդն ամբողջպիսին բաղկացած լինէր մաքուր յակինթից, —և նա հենց այդ իշխանութիւնից հրաժարումէ, որպէս զի հարեւանուհու հետ խաղայ անդրանկութեան մէջ։

Զարմանալի և օտարօտի է, թէ ինչպէս նա բոլոր տես-
մեղ զգացմունքների անձեռնմխելի թարմութեան մէջ
առաւօտեան դուրս է գալիս այդին, խաղում քնքշաբար
զգուած ծաղկների փնջերով, բարձրացնում է խօնարհուած
գլուխները, անխոռվ ու խաղաղ կերպով ժպտումէ իւր
բաղդատոր ժպիտով և ժպտում է միայն նրա համար, որ
նրա խաղաղ ապաստանը շըջապատուած է փոքրիկ ցանկա-
պատով, այն ինչ նրա հոգու մէջ եռումէ մի խոտսվանու-

թիւնն՝ թէ վարդերով ծածկուած փոքրիկ պատի ետեւ աղտոտւած խոտերը մինչեւ հօրդզոնն արմատախիլ են արուած մարդկութեան տագնապով և ողողուած են նրա արեան հեղեղներով։

Արդեօք երբ և իցէ մտածելէք այն խորին նշանակութեան մասին, որն ունի կամ պէտքէ ունենալ այն մարդկանց, որոնց մենք աւելի երջանիկ ենք համարում, ճանապարհի վրայ ծաղիկներ թափելու սովորութիւնը։ Դուք կարծումէք թէ այդ անուռմէր նրա համար, որ նրան խարեն այն յուսով՝ թէ երջանկութիւնն էլ հենց այդպէս կը-թափուի նրա տաերի տակ ամբողջ կեանքում, թէ որտեղ էլ գնան նոքա, միշտ ոտք կըդնեն այդպիսի անուշահոտ խոտերի վրայ և կոշտ հողը նրանց համար փափուկ կըլինի ցանւած վարդերի հաստ ծածկոցի տակ։ Եթէ նոքա յուս են դնում դրա վրայ, անշուշտ պիտի գնան փշոտ և դառն խոտերի վրաից և միակ փափուկ ծածկոցը, որը կըդիպչի նոցա ոտներին—ձիւնի ծածկոցը կըլինի։

Բայց նոքտ երբէք չեն կամենում դրան այդպիսի մըտքեր տալ. հին սովորութիւնն ունի ուրիշ և աւելի լաւ նշանակութիւն։ Լաւ կնոջ ճանապարհը, յիրաւի, ցանուած է ծաղիկներով, բայց այդ ծաղիկներն աճում են նրա ետեւից և ոչ թէ առաջից։ «Նրա գարշապարները կպան մարդարիտներին և մարդարտածաղիկները սկսեցին կարմրել նրա գարշապարների տակ»։

Կարծում էք թէ սիրահարի այդ երեւակայութիւնն դադարկ և անմիտ է։ Բայց եթէ ճշմարիտ լինի։ Կարելի է բանաստեղծի մտածած էք համարում և այս.

Զանգակ ծաղիկը գլուխը վեր բարձրացրեց

Եւ ուղղուեց քնքոյշ գարշապատի տակ։

Բայց քիչ է կնոջ համար ասել, թէ նա իւր ճանապարհի վրայ ոչ մի բանի չի վնասում։ Նա պէտք է բոլո-

րին էլ կեանք տալ, զանգակ ծաղիկները պէտք է աճեն նրա ուժների տակ։ Կարծումէք թէ այդ վայրենի չափանցութիւնն է. եր էք. ես երբէք չեմ չափանցացնում, այլ ասումեմ միայն սոսկ ճշմարտութիւնը։ Հաւանական է, դուք լսել էք, որ ծաղիկները լաւ են ծաղկում միայն այն դուք լսել էք, ուր նրանց սիրումեն։ Գիտեմ, դուք կը-պարտիզներում, ուր նրանց սիրումեն։ Գիտեմ, դուք կը-կամենալիք, որ այդ ճշմարիտ լինէր. ձեզ հաճելի կըլինէր այն գիւթական ուժը, որի շնորհիւ ձեր քնքոյշ հայեացքը ծաղիկներին աւելի պայծառ գոյն տար, դրանից առաւել, ընդունակութիւն ունենար համոզել չար սառնամանիքին անցնել այդ ծաղիկներից, իսկ կծկուած որդերին՝ խնայել նրանց. հրամակէր ցողին երաշտութեան ժամանակ իջնել նոցա վրայ, իսկ ցրտի ժամանակ խօսել հարաւային քամուն. «Ե՛կ այստեղ, հարաւային, փըչնը իմ պարտիզի մէջ, թող «Ե՛կ այստեղ, հարաւային, փըչնը իմ պարտիզի մէջ»։ Դուք այդ նա առաջւայ նման բուրէ անուշահոտութեամբ»։ Դուք այդ շատ կարեւոր գործ կըհամարէք։ Բայց ինչպէս էք կարծում, շատ կարեւոր գործ կըհամարէք։ Իւթիւն է այն, ինչ որ կարդեօք, այդ ամենից աւելի կարեւոր չէ այն, ինչ որ կարդեօք, ամենից աւելի կարմրելու չէ այն, ինչ որ կարմրել անել աւելի գեղեցիկ ծաղիկների համար. այն ծաղողէք անել աւելի գեղեցիկ ծաղիկների համար. որ դուք օրհիպիկների, որոնք կ'օրհնեն ձեզ նրա համար, որ դուք նում էք նրանց, և կըսիրեն ձեզ նրա համար, որ դուք սիրում էք նրանց. այն ծաղիկների, որոնք ունեն նոյնպիսի աչքեր, ինչպէս դուք, նոյնպիսի մտքեր ու կեանք, որոնց աչքեր, ինչպէս դուք, նոյնպիսի մտքեր ու կեանք, որոնց եթէ միանգամ ազատէք, յաւելտեան ազատուած կըլինեն։ Միթէ մեծ չէ այդպիսի իշխանութիւնը։ Հեռաւոր ժայռերի վրայ և ճահիճների մէջ, մութ, զարհուրելի փողոցներում ընկած են այդ թոյլ ծաղիկները. նոցա թարմ տերեւում պոկուած են, ցողունները կոտրուած։ Միթէ դուք երբէք նոցա մօտ չէք գնում, չէք ծեփում նոցա փոքրիկ անուշահոտ մարդերը, չէք պատսպարում չար քամուց, որից նոքա դողումեն։ Միթէ տուաւուր կըլաջորդէ առաւօտին միայն ձեզ համար, և ոչ նրանց համար, և արշալոյսը կը

սրսկէ հեռաւող ճաճանչներով այն «մահու կաքաւները»,
իսկ ոչ մի արշալոյս չի հանգչիլ վարդերի, մանուշակների
և այծերեւների այդ կոյտերի վրայ, չի հրաւիրիլ ձեզ
ննջարանի լուսամուտի մօտ՝ կոչելով ձեզ ոչ թէ անգլիա-
կան բանաստեղծի սիրահարի անունով, այլ Պանթէի ձեծ
Մաթիլդայի անունով, որը կանգնած երանական լէտա-
գետի ափին՝ ծաղկիկներից երկայն դրասանդներ էր հիւսում:

Եղ, Եղ, Յ Յազդա: Հեռացել է
Զարագուշակ դիշերւայ խաւարը:
Եւ քո ալգում շնչում է
Եւ վարդն ու ալծտերեւը:

Միթէ դուք չէք մօտենալ նրանց, այդ քնըուշ կենդանի արարածներին, որոնց հողից ծնուած և երկնային գոյնով ներկուած ոյժը բարձրանում է կարսդ ցօղունով, որոնց փոշիից մաքրուած անարատութիւնը բացւումէ խոսաման շքեղ ծաղկով։ Նոքա գիմումեն ձեզ, որոնումեն ձեզ։ «Մանուշակը թոթովումէ—ես լսումեմ, լսում եմ։ Շուշանը շանջումէ—ես սպասումեմ։»

Նկատեցիք, որ ես ստանաւորի առաջին տան մէջ բաց թողի երկու տող։ Կարծումէք թէ ես մոռացել եմ։ ահա այդ տողերը։

Ե'կ, Եկ, օ Մագդա: Հեռացել է
Զարագուշակ գիշերւայ խաւարը:
0' Մագդա, այդին ե'կ:
Այստեղ վանդակի մօտ
Ես միանակ սպասումեմ:

Գիտեք ալդ ով է կանգնած այնտեղ ալդու վանդակի մօտ, ովէ ալդ «միայնակը», որ ձեզ սպասումէ: Արդեօք երբ և իցէ լսել էք ոչ թէ Մագդալի, այլ Մագդաղինէի մասին, որն առաւօտեան արշալուսին դուրս գալով իւր այգին, տեսնումէ, որ մէկը սպասումէ նրան վանդակի մօտ.

մէկը, սրին նա ալգեպանի տեղ ընդունեց։ Արդեօք չէք
սրոնել նրան շատ անգամ, չէք որոնել ի զուր ամբողջ եր-
կայն գիշերներ։ Ուստել էք նրան և որոնել էք իզուր հին
ալգու դռների մօտ, ուր շողզողումէ հրալին սուրը։ Այն-
տեղ դուք նրան երբէք չէք գտնիլ։ բայց այդ ալգու վան-
դակի մօտ նա սպասումէ միշտ ձեզ, սպասում է, որ բռնէ
ձեր ձեռքից և ձեզ հետ միասին գնայ դիտելու հովտի
պտուղները, տեսնելու՝ լաւ է աճում խաղողի որթը և բաց-
ւումեն նռենու կոկոնները։ Դուք կըտեսնէք նրան ախտեղ
իւր ձեռքով ուղղած խաղողի քնքոյշ հիւսուածքների մէջ,
կըտեսնէք թէ ինչպէս են աճում հողի տակից նրա ցանած
նռենու արիւնագոյն սերմերը։ դուք կըտեսնէք երկնալին
պահապանների խմբեր, որոնք իրենց թեւերի շարժումով
քշում հեռացնումեն նրա ցանած ճանապարհի եզերքից
քաղցած թռչուններին և ձայն են տալիս միմիանց խա-
ղողի որթերի շարքերից։ «Հալածեցէք աղուէսներին, փոք-
րիկ աղուէսներին, որոնք փչացնումեն խաղողի ալգին, որով-
հետեւ մեր խաղողը քնքոյշ ողկոյներ ունի»։

Օ' դուք, թագուհիներ, ձեր հայրենիքի ըլուրսոր և գովելի թաւուտաների Եշխանուհիներ, միթէ աղուէսներն որչեր կ'ունենան և երկնքի թռչունները բուներ, իսկ ձեր քաղաքների քարերը խաբելով ձեզ կըդոչեն. «Մարդու Որդին քացի մեզանից ոչ մի տեղ չունի գլուխը խոնարհելու»:





III.

Վեանքի գաղտնիքի և արուեստի մասին.

(Այս դասախոսութիւնը կարդացուածէ Դուբինում գիտութիւնների Կոլլեջում 1868 թ.)

Երբ որ ես գովելի առաջարկութիւն ստացայ այսօր ձեզ հետ զրոյց անելու, չէ՞ իմանում այն սահմանափակութեան մասին, որին պատկանումեն ներկայ ժողովի խորհրդածութեան առարկաները *): Այդ արգելքը, որ բոլորովին խելացի և պատշաճ է այն հանգամանքներով, որոնց նա ի նկատի ունէր, այնու ամենայնիւ կըզրկէր ինձ իմ ներկայ մտածութիւնների ժամանակ ձեզ համար՝ արուեստի մասին մի այնպիսի դասախոսութիւն պատրաստելու հնարաւորութիւնից, որից գուշ կարողանալիք որքան և իցէ էական օգուտ քաղել։ Ուստի ներեցէք ինձ, եթէ ես կըխանգարեմ այդ արգելքը. իսկապէս խանգարումը կըվերաբերէի միայն տառերին և ոչ ձեր հրամանների հոգուն։ Եթէ ես վշտացնումեմ մէկին՝ խօսելով կրօնի մասին, որը արուեստի հիմքն է կազմում, կամ քաղաքականութեան մասին, որը օժանդակումէ նրա կարողութեանը, — ես միաժամանակ վշտացնումեմ և բոլոր մնացածներին, որովհետեւ չըպիտի համարւեմ ոչ կրօնական որեւ տարբերութեամբ և ոչ կուսակցական որեւէ վիճաբանութեամբ, բայց վերջի վերջով չեմ

*) Արգելքը վերաբերումէր կրօնական հարցերին։

վշտացնիլ և ոչ մէկին, եթէ ցոյց կըտամ և կամացուցանեմ դրական ապացուցութեան հնարաւորութիւնը, որ մարդու արուեստի և ճարտարապետութեան մէջ ամեն ինչ աւելի լաւ է պայմանաւորւում նրա հաւատի պարզութեամբ և հայրենասիրական ջերմեւանդութեամբ։

Ես կապուած եմ դեռ մի ուրիշ հանգամանքի հետ եւս, որը խանգարումէ ինձ կատարեալ անկեղծութեամբ արտայայտուել ոչ միայն այս տեղ, այլ որտեղ լինի. ինձ երբէք իսկութեամբ յայտնի չէ, թէ հասարակութիւնն որքան է հաւատում իմ իսկական ընդունակութեանն այն հարցերի մէջ, որոնց մասին խօսումեմ, և որքան է լուս ինձ միայն նրա համար, որ այդ հարցերի վերաբերեալ գրել եմ փոքրիկ յօդուածներ, որոնց շատերը սիրելի և սրամիտ են գտել։ Յիշաւի ես անբաղդութիւն ունեցայ—շատ յարաբերութիւններում համարձակ կարող եմ այդ անբաղդութիւն անուանել—երբեմն խօսքերը բաւականին գեղեցիկ կերպով շարելով, և այդ թշուառ հմտութիւնը շողոքորթեց մասամբ իմ լիմար փառասիրութիւնը, քանի որ իմ հպարտութիւնը խիստ պատժուած չէր. ես տեսնում էի, որ շատերը նշանակութիւն էին տալիս բացառապէս այդ խօսքերին և բոլորովին անտարբեր էին գտնւում դէպի նոցագերին։ Բարեբաղդաբար ընդ ունակութիւնը խօսումէ համիտքը։ Բարեբաղդաբար ընդ ունակութիւնը խօսումէ համարկան։ Եթէ նա երբ և իցէ եղել է ինձ մօտ, այժմ էլ լեզուով. Եթէ նա երբ և իցէ եղել է ինձ մօտ, ահա միանում է ինձ։ Եթէ ես կարողեմ մի բան ասել, հարկաթողնում է ինձ։ Եթէ ես կարողեմ մի բան ասել, հարկաթողնում էլ փոխուել են խօսքերի հետ միասին։ Ինչպէս իմ մտքերն էլ փոխուել են խօսքերի հետ միասին։ Ինչպէս մտքերն էլ փոխուել են խօսքերի հետ միասին։ Եթէ ազգեցուառաջ, երբ երիտասարդ էի, իմ ունեցած քիչ ազգեցուառաջ պարտական էի գլխաւորապէս այն հրճուանքին, թեամբ պարտական էի գլխաւորապէս ամապերի գեղեցիկութեամբ և երկնքում նոցա ծաղկիներով, — այնպէս էլ կութեամբ և երկնքում նոցա ծաղկիներով, որը կըցանկանալի պահպանել ալժմ բոլոր ազգեցութիւնը, որը կըցանկանալի պահպանել

պէտք է հիմնուի այն ջերմեռանդութեան անկեղծութեան վրայ, որով աշխատումեմ հետամուտ լինել ուրիշ ամպերի գեղեցկութեան ու ձեւին, որոնց մասին ասուած է. «Ի՞նչ է ձեր կեանքը: Նոգի, որը երեւումէ կարճ ժամանակում և անլավանում»:

Կարծեմ շատ քիչ մարդիկ կրգտնուեն, որոնք հասած լինեն կեանքի միջին կամ վերջին ժամանակներին և երեք զգացած չըլինեն փոփոխութեան կամ հիացման ըոպէին այդ դառն խօսքերի բոլոր ճշմարտութիւնը. որոնք կեանքի ամպերի վրայ նսեմացող արեգակի լոյսի երեւալուն պէս յանկարծակի տանջանքով չըպաշարւէին այն գիտակցութեամբ, թէ այդ ամպը թեթեւ է ինչպէս քունը և անցողական ինչպէս ցողը: Բայց մինչեւ անդամ ծանը զարմանքի այդ ըոպէին մենք միշտ չենք հասկանում պարզ կերպով, որ մեր մարդկային կեանքի յատկանիշնէ ոչ միայն ամպի՝ առժամանակեալ լինելը, այլ և նրա խորհրդաւորութիւնը. որ նրա գալարուածքները փաթաթւածեն մառախուղով և ձեւն ու ճանապարհները ոչ միայն օտարութիւն, այլ թափանցիկ ու շփոթւած. որ ոչ միայն դադարկութեամբ, որը մենք չենք կարող որսալ, այլ մառախուղով, որը չենք կարող թափանցել, մեր այդ ամպոտ կեանքն արդարացնումէ այս խօսքերը. «մարդ զնումէ դադարկի մառախուղի մէջ և արորում անդորրութեամբ»:

Ի՞նչպէս էլ որ լինի մեր յանկութիւնների ոյժն ու հպարտութիւնների մեծութիւնը, այնուամենայնիւ մենք քիչ ընդունակ ենք հասկանալու կեանքի ամբողջ նշանակութեան մէջ երրորդ և ամենալազբական յատկութիւնը, որով մեր կեանքը նման չէ երկնալին ամպին,—այն՝ որ բացի նրա առժամանակեալ լինելուց և խորհրդաւորութիւնից, ունի և նրա հզօրութիւնը. այն՝ որ մեր հոգու ամպը պարունակում է իւր մէջ կալծակից զօրեղ բոց և անձրեւից

թանկագին առատութիւն, և թէպէտ չարերի ու բարիների մասին հաւասար կերպով կասեն թէ՝ «այնտեղը, որը ճանաչում էր նրանց, այլ եւս չի ճանաչում», այնուամենայնիւ ահագին զանազանութիւն կալ նրանց մէջ, որոնց ալդ տեղում կարճ ժամանակով գտնուելը նոյնպէս օրհնուած էր, ինչպէս գըախտի ամպերը, որոնք բարձրանումէին ել-կրից ալգուն խոնաւութիւն տալու համար, և նրանց մէջ, որոնց տեղը ճանաչում էր ինչպէս փոփոխական, անհաստատ ստուերներ և որոնց առտուածալին գերիմաստութիւնն անու-անումէ «անջուր հորեր և փոթորիկից հալածուած ու յաւետենական գիշերի մառախուղին դատավարտուած ամպեր»:

Սակայն մեզանից նրանց, որոնք բաւականին երկար ժամանակ ապրել են և կարող են մի ուղիղ կասկացութիւն կազմել այն փոփոխութիւնների արագութեան մասին, թիւն կազմել այն փոփոխութիւնների արագութեան մասին, որոնք աղէտի ուժգնութեամբ երեւանեն գալիս և՝ օրէնք-որոնք աղէտի ուժգնութեամբ երեւանեն գալիս և՝ մարդկանց հաւատալուների մէջ, և՝ արուեստի մէջ, և՝ մարդկանց ճշմարտուածքների մէջ, որ այժմ կեանքի ճշմարիտ ընութեան մասին ունեցած միտքը, նրա ոյժն ու պարտականութիւնները պէտք է նրանց երեւան իրենք իրենց անելանելի տիրութեամբ և անողորմ դաժանութեամբ:

Գիտեմ, որ այդ զգացմունքը, կարելի է, սրուել է իմ հոգու մէջ այն անյաջողութիւններից լետոյ, որոնք պատահ-մամբ վրայ են հասել իմ ուխտած նախազերի մեծ մասին, բայց այդ զգացմունքին կասկածանքով չեմ վերաբերում, բայց աղէտ աշխատում եմ նրանց չափազանց մեծ կամք թէպէտ և աշխատում եմ նրանց չափազանց մեծ կամք թէպէտ և անդունակ անդամ մտածումեմ, որ ամենասուր ըրտալ: Ոչ, ես մինչեւ անդամ մտածումեմ, որ ամենասուր փոփոխութիւնների և նոր սկսուածքների մէջ հիամթափումն օդտակար գեղ է նրա գաղտնի ցաւի համար այնպէս, փումն օդտակար գեղ է նրա գաղտնի ցաւի համար այնպէս, ինչպէս վերջալուսի ժամանակ ծաղիկներն աւելի պալծառ են երեւում, քան թէ արեգակի կուրացուցիչ լոյսի տակ: Են երեւում, այն ճշմարտութիւնները, որոնց վրայ այսօր Որովհետեւ այն ճշմարտութիւնները,

կամենումեմ մատնացոյց անել, արդկութեան աշխատանքի ճշմարտութիւններ են, —մեծ մասամբ տխուր, թէպէտ միեւնոյն ժամանակ օգտակար, և որովհետեւ դիտեմ, որ ձեր իռլանդական բարի սրտերն աւելի շուտ կըդրաււեն անձնական զգացմունքի անկեղծ արտայալտութեամբ, քան թէ վերացական սկզբունքների մեկնութեամբ, ուստի թոյլ եմ տալիս ինձ անկեղծօրէն արտայալտել ձեզ իմ սեպհական տիրութեան պատճառները, արտայալտել նրանց այնքան, որ դուք կարողանաք վճռել թէ ինչպիսի տեղ պիտի տանել նրան, որին դուք կարեկցութեան չափով կանուանէք կամ վիշտ, կամ հոգու կորովամտութիւն, որ իւր լաւ յուսերն սպառել է և ուխտած ձգտումների մէջ պարտութիւն կրել:

Ես իմ կեանքի ամենակարող տամն տարիները դրել եմ այն աշխատութեան վրայ, որով կամենում էի ապացուցանել այն մարդու արտադրութիւնների արժանաւորութիւնը, որին համարում էի Ռայնոլդսի ժամանակներից անգիտական ուսումնարաններում յայտնող բոլոր նկարիչներից ամենամեծը: Այն ժամանակ ես հաստատապէս հաւատացած էի, որ ամեն մի մեծ ճշմարտութիւն և գեղեցկութիւն վերջ ի վերջոյ անշուշտ կըլազմէ, կըբռնէ իւր օրինաւոր տեղը, օգուտ կըբերէ մարդկութեան և կըլարդուի նրանից. ես աշխատում էի, որ նկարչի ստեղծագործութիւնները բռնէին իրենց արժանի տեղը գոնէ քանի նա կենդանի է: Բայց նա ինձանից աւելի լաւ էր հասկանում, որ անօդուտ է խօսել այն մասին, ինչ որ մարդիկ չեն տեսնում. նա միշտ վերաբերում էր իմ փորձերին կասկածելի մերժումներով, մինչեւ անգամ այն ժամանակ, երբ շնորհակալութիւն արաւ ինձ և մեռաւ, նախ քան իմ աշխատանքը պսակուեց ամենաանկատար յաջողութեամբ: Ես ոչ պակաս յամառում էի մտածելով՝ թէ նրա տաղանդի ոլժը

ցուցանելով այնուամենայնիւ օգուտ եմ բերում եթէ ոչ նրան, գոնէ հասարակութեանը: Իմ գրքերի մասին սկսեցին խօսել: Առհասարակ ժամանակակից պատկերների արժէքը բարձրացաւ և ես սկսեցի զուարձանալ դանդաղութեամբ տարած յաղթութեան գիտակցութեամբ, երբ, բարեբաղդաբար թէ դժբաղդաբար, դէպք եղաւ ինձ ստուգել այդ յաղթութեան իրականութիւնը, և այդ դէպքը միանդամ ընդ միշտ դուրս բերաւ ինձ սխալմունքից: Ազգային գալերէ-խայի աւանդապահները յանձնեցին ինձ Տօրների նկարները տեղաւորել այնտեղ և վճռեցին Կէնսինգտոնի ցուցահանդէսի համար պատրաստել բնութիւնից վերցրած նրա երեք հարիւր նկարները: Այդ նկարներն ուղարկուեցան Կէնսինգտոն և մինչեւ ալժմ էլ գտնուում են այնտեղ՝ միշտ պատրաստ հասարակութեան գիտողութեան համար: Այդ պատրաստ կերներն ի ցոյց դրուեցան, բայց դրանից այնուամենայնիւ ցուցահանդէս ըլդուրս եկաւ, որովհետեւ այն սենիակը, որի մէջ կախուած էին նոքա, միշտ դադարկ էր:

Այդ տեղ ես միանդամից հասկացայ, որ այն խնդրի վերաբերութեամբ, որին ես հետեւում էի, այդ տասն տարիներն ի զուր կորան: Բայց այդ հանգամանքն ինձ շատ ըլվացը եց, գոնէ ես սովորեցայ իմ արհեստին և շողոքորթեցի ինձ այն յուսով, թէ այդպիսի դասից յետոյ կարող եմ իմ հմտութիւնը յարակել մեծ օգուտով: Բայց ինձ վրդովեց այն գիւտը, ինձ համար զարհուրելի այն գիւտը, թէ գեղարուեստական ամենալուսափալ հանճարը կարող է աշխատել և իզուր կորչել և այդ թոյլ է տալիս նախանամութիւնը, թէ այդ հանճարի նըբութեան մէջ կարող է կալանալ ինչ որ մի այնպիսի բան, որը նրան անըմբռնելի դարձնի սովորական աչքի համար. թէ նրա օտարոտի կառարելութեանը կարողեն խառնուել նոյնքան կորստաբեր պտկասութիւններ, որքան դադարկ են նրա արժանաւորու-

թիւնները. թէ նրա փայլը կարող է լինել ոչ միայն անտեսանելի, այլ և առժամանակեալ. թէ նրա շնորքն ու ձիրքը կարող են մեզ համար լինել ամառային ձիւնի և հունձի ժամանակւալ անձրեւի նման:

Արդպէս էր ինձ համար կեանքի առաջին գաղտնիքը: Իմ եռանդի ամենալաւ մասը նուրբելով նկարչութեան, նրա հետ միասին ես աշխատում էի թէպէտ քիչ հրապուրանքով, բայց մեծ ուշիմութեամբ, և ճարտարապետութեան վրայ և ալդ տեղ տրդէն չէի գանգատում համակրութեան պակասութեան մասին: Այն մասնաւոր բնաւորութեան, որի մասին ես կամեցալ կարդալ արուեստների մասին իմ այս վերջին գասախօսութիւնը հենց այստեղ—Իուլանդիալում, մի քանի պատճառների մէջ գլխաւորներից մէկն էլ այն էր, որ ինձ դէպ եղաւ կարդալ այս գասախօսութիւնը ինժեներների ուսումնարանի գեղեցիկ շինութեան կից, ուր առաջին անգամ ես ուրախութիւն ունեցալ տեսնել այն սկզբունքների մարմնառութիւնը, որոնց մինչեւ ալդ աշխատում էի ներշնչել. աւազ, ալժմ ալդ շինութիւնն ինձ համար ոչ այլ ինչէ, եթէ ոչ մի շքեղ գերեզման այն անկեղծ մարդկանցից մէկի համար, որոնք երբ և իցէ նուրիել են իրենց անձը գեղարուեստին,—իմ մտերիմ և թանկագին բարեկամ Բէնիամին Ուտուարդի համար: Իուլանդական հանճարնու համակրութիւնը միայն Իուլանդիայում չէ ինձ օգնութեան հասել: Երբ որ իմ միւս բարեկամին, Թովմաս Դինին լանձնուեցաւ միստեր Ուտուարդի աջակցութեամբ Օքսֆորդեան չուզէի շինութիւնը. ալդ աշխատանքի ամենալաւ մանրամասնութիւնները կատարեցին այստեղ ծնուած և կրթուած քանդակագործները. ալդ շինութեան առաջին լուսամուտը, որի մէջ սկսուեց Անգլիայում գրականութեան հետ միասին բնական գիտութիւնների ուսումնասիրութիւնը, իմ նկարի համաձայն կատարեցաւ իուլանդական քանդակա-

գործի ձեռքով:

Կաբելի է գուք կըմտածէք՝ թէ այն մարդը, որին բաժին էր ընկել այդպիսի լաջողութիւնը, թէպէտ և նրա աշխատանքի մի ճիւղում, իրաւունք չունի անլաջողութեան մասին խօսելու: Եթէ միստեր Ուտուարդն ալժմ ալստեղ ինձ մօտ լինէր, ես չէի ասիլ ալդ: Բայց նրա հեզ և կաթոգին հոգուն չէր վիճակուած կատարել այն, ինչի որ ձգտումէր, և այն գործը, որը մենք միասին արինք, ալժմ տնօգուտ է գառել: Կաբելի է լետոյ ալդ կըփոխուի, բայց այն ճարտարապետութիւնը, որը մենք աշխատում էինք մտցնել, չէր համալատախանում ոչ անմիտ ճոխութեան, ոչ ալլանդակ մեքենայականութեան, ոչ ժամանակակից քաղաքների կեղտոտ չքաւորութեան: Նա տարածւեց միայն ժամանակակից ստեղծագործութեան եղանակների շրջանում, առանձնապէս Անգլիայում, ուր յենւեց եկեղեցական զգացմունքի վրայ: Նոգեկաթսալի վառարանի կոմ երկաթուղարին հողակուտերի ետեւից երեխն նայումէ ձեզ սրտազարժ աններդաշնակութեամբ նրա առժամանակեալ հրաշագեղութիւնը և գուք մի կերպ որոշումէք նրա մուրով ծածկեցների վրայ ծաղկիները: Ես հասկացայ, իմ սիրած կուածմնարաններին նա բացի վնասից օգուտ չըբերաւ. հասկացայ, որ իմ եռանդի ալդ բժժինն էլ ի գուր սպառուեց և, երեսս գարձնելով երկաթեալ փողոցներից ու բիւրեղակերտ պալատներից, ապաստան որոնեցի լեռների ստեղծագործութեան և ծաղկիների գեղեցկութեան մէջ:

Ես կարող եմ պատմել ձեզ և մի շարք ուրիշ անլաջութիւնների մասին, որոնց պատճառում էին մինը միւսին լաջորդող տարիները, բայց բաւականին ի չարը գործ դքի ձեր համբերութիւնը՝ իմ սրտնեղութեան պատճառները մասամբ բացադրելու համար: Ալժմ ես կըհազորդեմ ձեզ աւելի հանգամանօրէն նրա հետեւանքները: Դուք գիտէք

որ իրենց կեանքում մի բանի ձտող և դրա մէջ անյաջողութիւն կրող մարդկանց շատ յաճախ յատուկ է լինում զգալ և ասել՝ նախազգուշութեան թէ ծիծաղեցնելու համար, որ կեանքը ոչինչ է։ Որովհետեւ այդ կեանքը խաբել է նրանց, նոքա համարում են՝ թէ նա իւր բնութեամբ միշտ խաբումէ, իսկ ամենալաւ դիպուածներում միայն երեւակայական ուրախութիւն է տալիս. թէ նրա ամպը ոչինչ ոյժ, կրակ չունի. թէ դա միայն նկարուած մի ամպէ, որը կարող է հաճելի լինել, բայց որին պէտք է արհամարհել։ Գիտէք Պօպն ինչպէս գեղեցիկ կերպով է արտայալտում այդ հոգեկան առանձին տրամադրութիւնը հետեւեալ խօսքերով.

«Այն ինչ միտքը ոսկեզօծումէ փոփոխական ճառագալթներով այն նկարուած ամպերը, որոնք զարդարումեն մեր օրերը, բաղդաւորութեան մէջ ամեն մի պակասորդ լրացնուումէ լուսով, իսկ զգացմունքի դադարկութիւնը—հպարտութեամբ։

«Յոլոց կառուցանուումէ այնպէս շուտ, ինչպէս գիտութիւնը քանդումէ. անմտութեան բաժտկում դեռ ժպտումէ ուրախութեան պղպղակը։ Անցնումէ մի բաւականութիւն—գալիս է միւսը և ոչ մի ունայնութիւն իզուր չի դրում»։

Բայց իմ սեպհական հոգու վրայ անյաջողութեան տպաւորութիւնը հակառակն էր։ Որքան կեանքն աւելի էր խաբում ինձ, այնքան նա փառաւոր և հրաշալի էր երեւում։ Հակառակ նրան, ինչ որ Պօպն էր ասում, նրա ունայնութիւնն որպէս թէ աննպատակ էր թւում, բայց այդ ունայնութեան ծածկոցի տակ կար մի ինչ որ բոլորովին ուրիշ բան։ Կեանքն ինձ համար սկսեց դառնալ ոչ թէ նկարուած, այլ սարսափելի և անթափանցելի մի ամպ. ոչ թէ կրկներեւոյթ, այլ մառախուղի մի սիւն, որին մօտենալն ինձ արգելուած էր։ Ես տեսնումէի, որ իմ անյաջողութիւններն

ու յաջողութիւնները, որոնք իրենց աղքատ յաղթանակով աւելի վատէին թւում անյաջողութիւններից, առաջանում էին մի ընդհ սնուր օրէնք և գոյութեան միտք հասկանալու և նրան բարձր ու հարկաւոր նպատակին հասցնելու աշխատանքի պակասութիւնից։ Միւս կողմից ես տեսնում էի, որ ամեն մի հաստատուն յաջողութիւն՝ թէ արուեստների մէջ և թէ միւս բոլոր գործերում՝ դրւումէ ստոր նպատակների տիրապետութիւնից ոչ թէ նոցա ոչնչութեանը համոզուելով, այլ հաւատալով մարդկային սեռի յառաջդիմելով, այն ժաւատալով այն խոստանը, հաւատալով այն խոստանը, որ ասումէ թէ մարդուս մահացու մասը երբ և իցէ կըկանուի անմահութեամբ. ես տեսնումէի, որ արուեստն ստանում էր որեւէ կենսական ոյժ կամ յարգելի դրութիւն միայն այն ժամանակ, երբ ձգտումէ հոչակել այդ անմահութիւնը, միայն այն ժամանակ, երբ ճառայումէ մեծ և ճշմարիտ հաւատին, կամ անշահասէր հայրենասիրութեանը, կամ ազգային կեանքի այնպիսի օրէնքին, որը պէտք է լինի կրօնի հիմքը։

Այն ամենից, ինչ որ ես երբ և իցէ ասել եմ, չի եղել մինն այնքան ուղիղ և հարկաւոր,—այնքան սխալ հասկացուած և վատ գործադրուած,—ինչպէս իմ դրական հաստատութիւնը՝ թէ արուեստներն երբէք չեն կարող իրենք լաւ լինել, եթէ նոցա շարժառիթները վատ են։ Ինձ իրենց լաւ լինել, այն հասկանում այսպէս. անշնորք, իրենց գործի մէջ սխալ են հասկանում այսպէս. անշնորք, իրենց գործի մէջ անհմուտ, մի կանոնաւոր գիծ գծել չըկարացող նկարիչներն անդադար դիմումեն ինձ ու գոյում։ «Ճեսէք իմ այս պատկերը, նա պէտք է լաւ լինի, ես այդպիսի գեղեցիկ լինդիր կերը, նա պէտք է լաւ լինի, ես այդպիսի գեղեցիկ լինդիր»։ Բայց միակ բանը, որ կարելի է պատասամբողջ տարիներ»։ Բայց միակ բանը, որ կարելի է պատասամենել այդպիսի մարդկանց, եթէ կըբաւականանալ ձեր կոպատութիւնը, այս է. «Պարն, դուք ոչինչ չէք կարող մտա-

ծել մինչեւ անգամ ամբողջ քանակ թեամբ տարիներ, որովհետեւ դուք չունիք այդ պիսի գլուխ, և որքան էլ գեղեցիկ լինեն ձեր շարժառիթները, որքան էլ նոքա ուժեղ լինեն այնպէս, որ դուք սիրով թուլ տաք տապակել ձեզ փոքրիկ կրակի վրայ, միայն թէ նկարէք պատկերը, — այնուամենալիւ դուք չէք կարող նկարել. չէք նկարել նրանից մի վերջոկ անգամ, որովհետեւ դուք այդպիսի ձեռներ չունիք»:

Բայց աւելի որոշ կերպով հարկաւոր է ասել այն մարդկանց, որոնք գիտեն իրենց գործը կամ կարող են գիտենալ, եթէ կամենան, — այսպէս. «պարո՞ն, դուք ունիք կատարեալ չնորք, այդ չնորքը մեծէ. նաևցէք ուղիղ ծառայել նրանով ձեր ժողովրդին, ձեզ վրայ աւելի մեծ պատասխանատուութիւն է դրուած, քանիթէ դատարանների և բանակների վրայ. եթէ դուք կառավարէք դատարաններն ու բանակները և դատաճանէք նրանց, հալրենիքի առաջ ձեր մեղքն այնպէս ծանր չի լինել, եթէ կը հրաժարւէք ձեր մեծ իշխանութիւնից և մարդկանց փոխարէն այդ իշխանութեամբ կը ծառայէք սատանալին: Կորցրած դատարաններն ու բանակները կարելի է փոխարինել ուրիշներով, իսկ մեծ հանճարները, երբ նրանց ի չարն են գործ դնում, յաւիտենական սզով են դառնում երկրի վրայ»:

Ահա թէ ինչ էի հասկանում ես ասելով, որ արուեստը պէտքէ ազնիւ շարժառիթներ ունենայ: Ես ասել եմ և այն՝ թէ արուեստներն երբէք չեն ծաղկել և չեն կարող ծաղկել ուրիշ կերպ, եթէ ոչ ունենալով այդպիսի ճշմարիտ շարժառիթներ և ծառայելով աստուածալին ճշմարտութեան ու օրէնքի հոչակմանը: Բայց դրա հետ միասին ես տեսնում մէի, որ այդ հոչակումն երբէք չէր յաջողուում նրանց. որ բանաստեղծութիւնը, քանդակագործութիւնը և նկարչութիւնը թէպէտ մեծ էին միայն այն ժամանակ, երբ

աշխատում էին հաղորդել մեզ աստուածների մասին մի քան, բայց երբէք չէին հաղորդում հաւաստի ոչինչ, այլ միշտ խաբումէին մեր վստահութիւնն ամենակրխտէքական բովէին և, իրենց ոյժերի կատարեալ ծաղկմանը հասնելով, հաղարտութեան և նանրասիրութեան ծառաներ էին դառնում: Ես աճող տարակուսանքով նոյնպէս զգումէի մեր մէջ անլաղթելի անզգայութիւնն ոչ պակաս՝ քան դաստիարակների մէջ: Զգում էի, որ թէպէտ կեանքի և նրա բոլոր արուեստների մէջ ամեն մի վարմունքի իմաստութիւնն ու կանոնաւորութիւնը կարելի է ըմբռնելի դարձնել միայն նրա նպատակների ուղիղ հասկացողութեամբ, բայց մենք բոլորս խորասուգւածներ ինչ որ տարամ քնի մէջ, մեր սրտերը գերացել են, աչքերը նայում են ապշութեամբ, ականջները խցուածեն, որպէս զի ըլլսենք հոգեցունչ ձայնի կամ ձեռքի կոչը, որպէս զի ըլտեսնենք մեր աչքերով, չը հաւատանք մեր սրտով և ըլբժշկուենք:

Մեր բոլորիս մէջ այդ լարուած անզգայութիւնը՝ կեանքի առաջին գաղտնիքն է. նա կանգնում է ամեն մի իմացականութեան, ամեն մի առաքինութեան ճանապարհի վրայ: Որքան էլ մենք զարմանանք նրանով, այնուամենալիւքիչ կը ինի: Որ պարապմունքներն ու կեանքի զուարձութիւնները նպատակ չունեն, — այդ կարելի է հասկանալ, բայց որպէս զի ինքը կեանքը նպատակ չունենայ, որպէս զի մենք չ'աշխատենք իմանալ թէ նա մեզ դէպի ինչն է տանում, չ'աշխատենք միջոցներ ձեռք առնել, որ այդ ինչը յաւիտեան ըլլալուի մեզանից, — ահա իսկապէս անըմբռնելի գաղտնիքը: Երեւակալեցէք, օրինակ, եթէ ես կարողանալի հրաւիրել այս ունկընդրութեան ներկայ եղողներոց մէկին և հազորդէի նրան իբրեւ ճշմարտութիւն, որ նրան ժառանգութիւն է թողնուած մի մեծ կալուածք մի քանի բացառական պայմաններով. թէ և գիտեմ որ այդ կալուածքը

մեծէ, բայց չըգիտեմ ո՞րքան է մեծ, մինչեւ անդամ չըգիտեմ որտեղ նա գտնւում — Վեստինդիայում թէ Օստինդիայում, Անգլիայում թէ Երկրագնդի միւս ծայրում։ Միայն գիտեմ, որ Կալուածքը շատ ընդ արձակ է և նա, այդ մարդը կըզրկուի նրանից, եթէ շուտով չի իմանալ՝ թէ ինչ պայմաններով է թողնուած նրան այդ կալուածքը։ Նոյնպէս Երեւակայեցէք, եթէ ես ասէի այդ հաւաստի կերպով այս ունկնդրութեան մէջ որեւ է մէկին և նա իմանար՝ որ այդպէս ասելու հիմք ունեմ, կարծումէք թէ նա կըբաւականանար այդպիսի անորոշ տեղեկութիւններով, եթէ որեւ իցէ հնարաւորութիւն լինէր իմանալու էլի մի բան։ Միթէ նա իւր ամբողջ եռանդը չէր դնիլ ինչպէս և իցէ ապացուցներ գտնելու, միթէ նա ոյժից չէր ընկնիլ իմանալու՝ թէ որտեղ է գտնւում այդ կալուածքը և ինչպէս է։ Երեւակայեցէք որ այդ մարդը լինէր մի երիտասարդ և իւր բոլոր ջանքը գործ դնելով միայն իմանար, որ կալուածքը երբէք նրան չի հտանիլ, եթէ նա փորձառսւթեան մի քանի տարիներում չի աշխատիլ և կանոնաւոր կեանք չի վարել։ որ նրա բաժին նշանակուած կալուածքը կ'աւելանայ և կըպակասի նրա վարքի արժանաւորութեան համեմատ, այնպէս որ տարեկան արդիւնք կ'ստանալ կամ տասնհազար, կամ երեք հազար, կամ ուղղակի ոչինչ և այդ բացառապէս կախուած է նրանից, թէ նա ինչպէս կըպահէ օրէցօր։ Արդեօք դուք օտարութիւնների չէրք համարել, եթէ որ այդ երիտասարդն ոչ մի կերպ չաշխատէր կատարել պայմանները, մինչեւ անդամ իմանալ՝ թէ ինչ է պահանջւում նրանից, այլ շարունակէր ասլրել այնպէս, ինչպէս պատահումէ և երբէք չըտեղեկանար — աւելանում են թէ պակասում նրա լոյսերն այդ կալուածքի վրայ։ Ահա հենց այդ միեւնոյնը, ինչպէս ձեզ լայտնի է, պատահումէ մեր քըլստոնեալ թագաւորութիւնների լուսաւոր մարդկանց մեծամասնութեան հետ։

Համարեա ամեն մի կին թէ տղամարդ ժողովում հաստատումեն, որ հաւատումեն աւելի մեծին. հաւատումեն՝ թէ նրանց ոչ միայն կըհասնի բոլորովին անսահման կալուածքը, եթէ նրա Տիրոջը հաճելի կըլինեն, այլ և նրանց սպառնում է բոլորովին հակառակը — անդադար տանջանքների բնակարանն այն դէպքում, եթէ նոքա հաճելի չեն լինել այդ մեծ կալուածատիրոջը, երկնքի մեծ Տիրապետողին։ Եւ դրանից ոչ պակաս՝ հազարաւոր մարդկալին հոգիներից ոչ միննէլ չի աշխատում մտածելու օրական գէթ տասն րոպէ, թէ որտեղ է գտնւում այդ կալուածքը, գեղեցիկ է նա, ինչպիսի կեանք պիտի վարել այնտեղ, ինչպիսի կեանք պիտի վարել այդ ստանալու համար։

Դուք երեւակայումէք, թէ հետաքրքրւումէք դրանով, բայց հետաքրքրւումէք այնպէս քիչ, որ ներկայ րոպէին, հաւանական է, ձեզանից շատերն անբաւական են ինձանից, որ ես խօսեցի այդ մասին։ Դուք եկել էք լսելու այս աշխարհի արուեստների մասին և ոչ թէ ապագայ կեանքի մասին, ու բարկանում էք, որ ես խօսումեն ձեզ հետ այն մասին, ինչ որ ամեն կիւրակի կարող էք լսել եկեղեցում։ Բայց մի վհատէք, նախ քան կըհեռանաք այստեղից, ես կըխօսեմ ձեզ հետ գեռ մի բան և՝ պատկերների մասին, և՝ փորագրութիւնների մասին, և՝ կաւէ անօթների մասին ու այլ իրերի մասին, որոնք աւելին հետաքրքրուց ձեզ հանդերձեալ կեանքը։ Կարելի է դուք կարտայտէք ինձ՝ թէ «մենք կամենումենք լսել պատկերների և կաւէ անօթների մասին, որովհետեւ հաւատացածենք, որ դրանց մասին ինչ որ բան գիտէք, իսկ միւս աշխարհի մասին ուղղակի ոչինչ չըգիտէք»։

Ճշմարիտ որ ոչինչ չըգիտեմ. դա բոլորովին ճիշտ է։ Բայց հենց այն բանի մէջն է բոլոր խորհրդաւորութիւնն ու օտարօտիւթիւննը, որի վրայ աշխատումէ դարձնել ձեզ

ուշադրութիւնը,—այն բանի մէջ, որի մասին չըգիտեմ ես և դուք նոյնպէս:

Արդեօք կարող էք առանց տատանւելու պատասխանել միւս աշխարհի մասին մի ուղղակի հարցի: Հաւատացած էք, որ կալ դրախտը: Հաւատացած էք, որ կալ դժողքը: Հաւատացած էք, որ մարդիկ ձեր աչքերի առաջ ահա այս քաղաքի կամըջից գլորութեն ուղղակի յաւիտենական կրակի մէջ, կամ հաւատացած էք որ ոչ: Հաւատացած էք, որ ձեր մահից յետով կազմառուէք ամեն մի վշտից, ձեռք կըքերէք բոլոր առաքինութիւնները, կըմասնատուէք ամեն մի երջանկութեամբ, կըփառաւորւէք անդադար այն թագաւորի հասարակութեան մէջ լինելով, որի համեմատութեամբ բոլոր երկրային թագաւորները ճպուներ են, իսկ բոլոր ժողովուրդները նրա ոտների փոշին: Արդեօք հաւատացած էք դրան: Եթէ հաւատացածէք, արդեօք ձեզանից մէկը համարում է որ արժէ գէթ մի բան անել համոզուելու համար: Եթէ ոչ, մենք ինչպէս կարողենք որեւէ բանի մէջ կանոնաւոր կերպով վարւել և խոհեմութեամբ դատել: Ի՞նչ պատիւ կարող է լինել արուեստների մէջ, որոնք մեզ զբաղեցնումեն, ի՞նչպիսի օգուտ այն տիրապետութեան մէջ, որը մեզ զուարձացնումէ:

Միթէ այդ կեանքի գաղտնիքը չէ:

Բայց շարունակենք, կարելի է դուք բարերար էք համարում, որ մարդկանց մեծամասնութիւնը վրդովմունքով և ուշադրութեամբ կանգ չի առնում ապագայի հարցերի վրայ. այսօրւայ գործը չի կարող կատարւել, եթէ բոլորն էլ զբաղուած լինեն վաղուան մտքով: Ենթագրենք թէ այդպէս է. բայց կարելի է, գոնէ, սպասել, որ մեզանից ամենամեծերն ու իմաստունները, որոնց ակնյալտնի նշանաւանն է—սովորեցնել ուրիշներին, մի կողմը քաշուեն և աշխատեն գտնել թէ ի՞նչ արժանահաւատ բան կարելի է

իմանալ մարդկութեան ապագայ ճակատագրի մասին, իսկ յետոյ հաղորդեն մեզ այդ մասին ոչ թէ հոետորական և ճարտարամիտ ձեւով, այլ ամենահասարակ և անկեղծ խօսքերով:

Մարդկութեան բարձր ներկայացուցիչները, որոնք փորձել են այդպիսի եղանակով նայել այդ խորութիւնների մէջ և պատմել մեզ նրանց մասին, քրիստոնէական տարեթուի մէջ եղել են Դանթէն և Միլտոնը: Ոչ մտքերի անկեղծութեամբ և ոչ լեզուի վարպետութեամբ ոչ ոք չի կարող համեմատուել նրանց հետ: Իմացէք, ես խօսումեմ բոլորովին ոչ թէ այն մարդկանց մասին, որոնք զգեստաւորւած են քարոզչական կամ քահանայական աստիճանով՝ մեզ զանազան մտքեր և հաւատի ուսումը մեկնելու համար, այլ այնպիսի մարդկանց մասին, որոնք աշխատել են—որքան այդ հնարաւոր է եղել մարդկային մտքին—ապացուցների իմանալ միւս աշխարհի մասին և հաղորդել մեզ: Աստուածաբանները, կարելի է, կարող են սովորեցնել մեզ՝ թէ ի՞նչպէս կարելի է ընկնել այդ աշխարհը, բայց այդ երկու բանաստեղծները միայն եռանդով աշխատել են իմանալ և որոշ արտայալտութիւններով փորձել են հաղորդել մեզ՝ թէ մենք ի՞նչ կըտեսնենք այնտեղ, ի՞նչ կըլինի մեզ հետ այնտեղ, ովքեր են այժմ բնակւում այնտեղ և ովքեր են առաջ բնակւել այսօր աշխարհներում—վերին և ստորին աշխարհներում:

Նոքա ի՞նչ հաղորդեցին մեզ: Միլտոնի տեղեկութիւններն այն անցքի մասին, որը նա ամենակարեւորն է համարում աշխարհի ստեղծագործութեան ամբողջ սիստեմի մէջ,—այսինքն հրեշտակների անկման մասին, —նրան մինչեւ անդամ ակնյալտնի կերպով անարժան են թւում, տուաւել եւս՝ որ նրա պատմութիւնն ամբողջովին հիմնուած է և մեծ մասամբ իւրացրած Գէղիօդի՛ կրտսեր աստուածների

տիտանների հետ ունեցած վճռական պատերազմի մասին ունեցած՝ այդ նպատակի համար անջատուած և թուլացրած զրուցագրութիւնից: Նրա բանաստեղծութեան մնացած մասը մի նկարագրաւան դրամա է, որին Մելտօնը կարգաւորել է յայտնապէս և գիտակցաբար հնարուածքների բոլոր խորամանկութիւններով և որի մէջ ոչ մի փաստ չի կարող մի բոլէ հնարաւոր թուալ հաւատացող մարդուն: Պանթէի կօնցէպցիան աւելի զօրեղացրած է. նա ինքն առժամանակ ուժ չունի ոչ մի տեղ հեռանալու նրանից. դա իսկական տեսիլք է, միայն տեսիլք և մինն այն վայրենի տեսիլքներից, որոնք երբ և իցէ ալեկոծումեն հոգին հրճուանքով. մի երազ է, որի մէջ երեւումեն նորոգուած և զարդարուած ձեւով ամենածծաղելի և կոպիտ պատկերներ ու հեթանոսական աւանդութեան երեւակայութիւններ. որի մէջ քրիստոնէական եկեղեցու ճակատագիրն իւր ամենասրբազան հանգանակներով բոլորովին երկրորդական նշանակութիւն է ստանում վլորէնդիացի մի սիրելի աղջկայ կողքին և կարողէ հասկանալի լինել միայն նրա օգնութեամբ:

Ճշմարիտն եմ ասում ձեզ, որքան շատ եմ աշխատում նուածել իմ մէջ այդ օտարօտի քնափութեանն ու կարկամութեանը, որքան աւելի է ծագում իմ մէջ կեանքի զօրութեան և իմաստի գիտակցութիւնը, այնքան զարմանալի է թւում ինձ, թէ ինչպէս այդ մարդիկ համարձակուեցան խաղալ ամենաթանկագին ճշմարտութիւնների հետ (կամ մահացու ստերի հետ), որոնց լսող մարդկութիւնը կարող էր լուսաւորւել կամ խարուել: Ամբողջ աշխարհը դարերից սկսած ուշագրութեամբ ականջ է դնում նրանց լարուած լսողութեամբ և կաթոգին սրտով: Բայց ի՞նչ: Հնազանդ հոգիների այդ ժողովներին, որ անդադար փոխարինումեն միմիանց, կեանքի հացը փափակող ամբոխին նոքա ածումեն միայն իրենց քաղցրահնչիւն սրինգները, շքեղ անուանա-

կարգութեամբ զարդարումեն դժոխային խորհուրդները, ընթացիկ արեգակի ձայնակցութեան տակ ընտրում են գիտառի լարերը, լցնումեն յաւիտենականութեան բացուածքները իրենց սխոլաստիքական երեւակալութեամբ ստեղծուած անմիտ խաղալիքներով և կորցրած երկրային սիրոյ մոլեգին հաւատատի տիտուր ճառագայթներով,—այն բացուածքները, որոնց տուաջ փակում են մարդարէների երեսները և որտեղից ցանկալի է նայել հրեշտակներին:

Եետոյ մեզ հարկաւորէ յիշել, որ այդ երկու մեծ դաստիարակները ճակատագրից անզգայացած մարդիկ էին և չէին կարողանում բոլորովին պատերազմի մարդիկ էին վիճարանութիւնների կուրութեան մէջ և անձասպան վշտերի ծանրութեան տակ անընդունակ որոշելու թէ որտեղի նոցանձնական պատուասիրութիւնն ազդում բարոյական օրէնքի հաստատութեան վրայ, որքան է խառնուել նոցա բարկութեան հետ անձնական տանջանքն այդ օրէնքը խանգարելու ժամանակ: Բայց գոյութիւն ունին աւելի մեծ մարդիկ, քան թէ նոքա,—սրտով անմեղ և վիճաբանութեան համար աւելի մեծ մարդիկ: Հոմերոսի և Շէքսպիրի նման մարդիկ, որոնց անհատականութիւնն անորոշ է այնպէս, որ բոլորովին կորչումէ ապագայ դարերի մէջ և թափանցելի է դառնում ինչպէս հեթանոսական կորցրած աստուծոյ մասին աւանդութիւնը: Ահա նոցա անվիրաւոր և անդադարտուած հայեացքի առաջ ամբողջ մարդկակին բնութիւնը բացումէ ողբերգական թուլութեամբ, որին նոքա չեն կամենում հակառակ կանգնել, կամ թէ տիսուր և անցողական ուժով, որը չեն համարձակում գովիլ: Նրանց է ստորագրուում բոլոր հեթանոսական և քրիստոնէական լուսաւորութիւնը: Միեւնոյն է, մեզանից մէկը կամ միւսը շատ է կարդացել Հոմերոսին կամ Շէքսպիրին՝ թէ քիչ, —

բայց բոլոր մեր շրջապատը իսկութեամբ թէ գաղափարով
նրանցից է ստացել իւր ձեւը: Յունական բոլոր ջէնտլմէն-
ները դաստիարակւել են Հոմերի վրայ: Բոլոր հռովմէական
ջէնտլմէնները—յունական գրականութեամբ: Իտալական,
ֆրանսիական և անգլիական ջէնտլմէնները—հռովմէական
գրականութեամբ և նրա սկզբունքներով: Նէքսպիրի նշա-
նակութեան մասին կ'ասեմ մի բան. ստեղծական մտքերի
շրջանում նրանից յետոյ ծնուած բոլոր մարդիկ չափումնեն
միայն այն աստիճանով, որքան նոքա սովորել են Նէքս-
պիրին: Ահա այդ երկու մարդիկը, մարդկալին հասկացողու-
թեան այդ երկու կենտրոններն ինչ համոզունքներ են
ներշնչում մեզ այն մասին, թէ այդ հասկացողութեան
հասնելն ամենից կարեւորն է: Ինչպէս է նոցա յուսը և
ինչպէս ուրախութեան պսակը: Դէպի ինչն են նոքա մեզ
հրաւիրում և ինչի մէջ յանդիմանում: Ի՞նչն է ամենից
աւելի մօտիկ նոցա սեպհական սրտին, քան թէ ներշնչուած
են նոցա անմահ խօսքերը: Արդեօք որեւէ խաղաղութիւն
են խոստանում նոքա մեր վրդովմուքին և բուժումն մեր
տանջանքներին:

Նախ վերցնենք Հոմերոսին և մտածենք - արդեօք կայ
մի ուրիշ տեղ մարդկութեան ճակատագրի աւելի տխուր
պատմութիւն, քան թէ հոմերական այդ մեծ գրուածքի
մէջ։ Ա.քիլէսի բնաւորութեան մէջ գլխաւոր գծերը՝ արդա-
րութեան ջերմ ծարաւն ու մտերմութեան քնքշութիւնն
են։ Դակ եղիականի մէջ, այդ տխուր երգի մէջ, չընայելով
ամենաիմաստուն աստուածների անդադար օգնութեանը,
չընայելով նրա հոգին տանջող արդարութեան ջերմ ցանկու-
թեանը, այդ մարդը վատ ղեկավարւող ցանկութիւնների
տզդեցութեան տակ մնումէ մարդկանցից ամենաանարդարը։
Նրա սկզբանը լիքն է խորին քնքշութեամբ, բայց անընկձելի
ցանկութիւնների ազդեցութեան տակ նա մնումէ դաժան

մարդ։ Զերմ սիրոյ և մտերմութեան մէջ նա նախ կորցնումէ սիրուհուն, լետոյ բարեկամին։ սիրուհու համար զոհումէ հարազատ զօրքերին, բարեկամի համար—բոլորը։ Արդեօք մարդ կըտալ իւր կեանքը բարեկամի համար։ Այո, մինչեւ անգամ մեռած բարեկամի համար։ Այդ Ա.քիլէսը, թէպէտ և ծնուած ու դաստիարակուած է աստուածուհուց, զոհումէ իւր թագաւորութիւնը, հայրենիքը, կեանքը, ձգումէ անմեղներին, մեղաւորներին և իրեն կոտորածի արիւնալի լորձանքի մէջ և, վերջապէս, մեռնումէ իւր հակառակորդներից ամենաարհամարհուածի ձեռ քով։

Ասացէք, միթէ այդ կեանքի գաղտնիքը չէ.

Ըստ մայրական պատմութեան՝ առաջին համբաւ մեղ մեր հարազատ
Բայց ինչպիսի համբաւ բերաւ մեղ մեր հարազատ
բանաստեղծը, մեր սրտերի փորձողը, երբ քրիստոնէական
հաւատի 15 դարն արդէն անցել էր մարդկակին գերեզման-
ների վրայից։ Ուրախալի են նրա խօսքերը, քան թէ հեթա-
նոսինը, մօտիկ է նրա լոյսը, ամուր է ապաւինութիւնը,
լուսաւոր է ճակատագրի հասկացողութիւնը։ Օ՛, ո՛չ Նա
զանազանւումէ հեթանոս բանաստեղծից միայն նրանով, որ
նա ձեռքի տակ չունի աստուածներ, որոնք պատրաստ լի-
նէին օգնութեան հասնելու, և նրանով, որ լիմար պատա-
հականութեան, ըստէական անմտութեան, սխալ հաղորդած
յանձնաբարութեան, լիմարի բռնակալութեան և դաւա-
ճանի որսգալիթների պատճառով նրա մօտ կորչումն զօ-
րեղն ու ճշմարիտ՝ առանց լուսոյ որեւ է խօսքի։ Նա
բնաւորութիւնները նկարագրելով, վերագրում է նրանց հեզ
և իրաւացի ոյժին, իսկ հեզութիւնը—սովորական երկիւղա-
ծութեան։ Կատերինալի մահուան անկողինը փալումէ հրեշ-
տակների տեսիլքներով։ մեծ թագաւոր-զինւորը կանգնած
իւր քիչ սպանուածների կողքին, խոստովանում է այն ձեռ-
քի ներկայութիւնը, որը կարող է ազատել և՝ շատերով և
քչերով։ Բայց նկատեցէք, նրանք, որոնց միտքն ամենից

աւելի լարուած ու խորին է, որոնց վիշտն ամենից աւելի սաստիկ է, — չունեն ալդպիսի խօսքեր և նրանց սրտերում չըկայ ալդպիս, միսիթարութիւն։ Փոխանակ անդադար խոստովանւելու աստուածութեան բարերար ներկայութեանը, որն անցնում է ամբողջ հեթանոսական աւանդութիւնը և հեթանոսական ոյժը՝ իբրեւ աղքեւը պատերազմի, հալածանքի և մահու ստուերների հովտի մէջ, քրիստոնէական բանաստեղծի մօտ մենք գտնումենք միայն բարոյական օրէնքի խոստովանութիւնը, գէպի որն «աստուածները իրաւացի են և մեր հաճելի սերունդները մեր տանջանքների զէնքերն են դառնում»։ մենք տեսնումենք նոյնպէս ճակատագրի անփոփոխելի նախասահմանութեան խոստովանութիւնը, որն իսկութեամբ կատարումէ այն դատավճիռը, թէ մենք սկսել ենք թուլանալ ու կուրանալ, և հարկադրումէ մեզ խոստովանւել, երբ մեր սխալմունքներն արդէն տուել են իրենց պտուղները, իսկ ամենախորամանկ մտքերն անպտուղ են մնացել, թէ «կայ մի աստուածութիւն», որն ըստ իւր կամաց տնօրինում է մեր ապագան, ինչքան էլ մենք աշխատենք նրան ուրիշ ձեւ տալ»։

Ուրեմն՝ միթէ ալդ կեանքի գաղտնիքը չէ։

Թող ալդպէս լինի։ Ենթագրենք, որ կրօնական իմաստուն մարդիկ ոչինչ չեն կարող ասել ոչ մարդկային ապագայ կեանքի մասին, ոչ ներկայ կեանքի մասին այնպէս, որ մենք կարողանալինք հաւատալ նրանց, իսկ մտածող իմաստուն մարդիկ ոչ մի բան չեն կարող ասել, որը կարողանար մեզ հոգեկան խաղաղութիւն տալ։ Բայց կան երբորդ գասակարգի մարդիկ, որոնց կարող ենք դիմել դրանք գործնական իմաստուն մարդիկն են։ Մենք նստել ենք բանաստեղների ոտների տակ, որոնք երգումէին երկնքի մասին և պատմում մեզ իրենց երազները։ Մենք լսել ենք բանաստեղներին, որոնք երգումէին երկրի մասին և երգում

էին մեզ համար թաղման երգեր ու յուսահատական խօսքեր։ Բայց կան գեռ եւս մի դասակարգի մարդիկ, տեսիլքներին անընդունակ, վշտերին անզգայ, բայց նպատակի հետեւողութեան և հմուտ գործերի մէջ հաստատակամ մարդիկ, որոնց յալտնի է այն ամենը, ինչ որ կարելի է իմանալ։ Նոցա բոլոր լոյսն ու զգացմունքը կենդրոնանում են այս աշխարհի մէջ և մենք, անշուշտ, նրանցից կարող ենք իմանալ, թէ ինչպէս գոնէ աւելի լաւ կարելի է հաստատիմանալ, թէ ինչպէս աւելի լաւ կարելի է հաստատւել այս աշխարհի մէջ։ Նոքա ինչ են ասում մեզ, ինչ են ցուցանում իրենց օրինակով։ Դրանք թագաւորներն ու նոցա խորհրդականներն են, թագաւորական մարդիկն ու տէրութեան հիմնադիրներն են, գրամատէրներն ու օրէնսդէտներն են, որոնք կշռի մէջ կշռումեն երկիրն ու նրա փոշին։ Նույն, որոնք կշռի մէջ կշռումեն երկիրն ու այն՝ ինչ որ մեզ հաքա, ի հարկ է, գիտեն աշխարհն ու այն՝ ինչ որ մեզ համար կեանքի գաղտնիք է, նրանց համար գաղտնիք չէ։ Անշուշտ նոքա կըսովորեցնեն մեզ թէ ինչպէս պէտք է ապարել, քանի կենդանի ենք, և ինչպէս ըմբռնել այս աշխարհի բոլոր լաւ բաները, որոնց նա կարող է տալ մեզ։ Խարհի բոլոր լաւ բաները, որոնց նա կարող է տալ մեզ։

Ինձ թւումէ, թէ ես աւելի լաւ կարողեմ հազորդել ձեզ թւումէ, թէ ես աւելի լաւ կարողեմ հազորդել նոցա պատասխանը, եթէ պատմեմ մի երազ, որ տեձեզ նոցա պատասխանը, եթէ պատմեմ մի երազ, որ տեձեզ նոցա պատմանգամանը չեմ, ու միանգաման։ Չէ որ ես էլ, թէպէտ բանաստեղծ չեմ, սել եմ միանգաման։ Չէ որ ես էլ, թէպէտ բանաստեղծ չեմ, սել եմ միանգաման։ Եւ այդպէս ես տեսնումեմ, իբր թէ գտնուում եմ մանկական մայիսպէս ես տեսնումեմ, իբր թէ գտնուում եմ մանկական մայիսպէս ես տօնախմբութեան մէջ, ուր բարի և խելօք տանտէրը եան տօնախմբութեան մէջ, ուր բարի և խելօք տանտէրը մանուկների համար պատրաստել էր բոլոր կարեւոր խաղամանուկները։ Տօնախմբութիւնը կատարւումէր մի փառահեղլիքները։ Տօնախմբութիւնը կատարւումէր մի փառահեղլիքները։ Եր հրաշալի ալդիով։ Թէ տան մէջ, որը շրջապատուած էր հրաշալի ալդիով։ Թէ տունը և թէ ալդին դրուած էին մանուկների կատարեալ ու ալդին տակ, այնպէս որ նոցա միակ հոգոն էր, տնօրինութեան տակ, այնպէս որ նոցա միակ հոգոն էր, որքան կարելի է օրն ուրախ անցկացնել։ Ճշմարիտ է, նոքա չըգիտէին թէ ինչ կըլինի վաղը, բայց մի քանիսը փոքր

ինչ վախեցած էին երեւում, որովհետեւ ի նկատի ունէին այն հանգամանքը, թէ նրանց նոր ուսումնարան կըտան, ուր կըլինեն հաջաքնութիւններ, սակայն աշխատում էին հեռացնել իրենցից այդպիսի մտքերը և վճռումէին ուրախանալ, որը տանում էր դէպի կորուստը: Տունը, ինչպէս ասացի, շրջապատուած էր գեղեցիկ այդիով, իսկ այդու մէջ կալին ամեն տեսակ ծաղիկներ, հանգստանալու համար փափուկ նստարաններ, խաղալու համար հարթ մարգագետիններ, հրաշալի գետակներ ու ժայռեր, մագլցելու համար ժայռոտ տեղեր: Սկզբում մանուկները լաւ էին, բայց շուտով կուսակցութիւնների բաժանւեցան և իրաքանչիւր կուսակցութիւն յալտնեց՝ թէ իւր համար վերցնում է այդու մի կտորը և միւսները չըպիտի համարձակւեն դիաչել նրան: Յետով նոքա սարսափելի կերպով վիճեցին այն մասին, թէ որին ինչպիսի կտորէ հասնում, և, վերջապէս, տղաները ձեռք առին իրենց յատուկ գործը, «գործնականապէս» զբաղուեցին նրանով ու այնքան կուտեցին ծաղկանոցներում, մինչեւ որ փչացրին համարեա բոլոր ծաղիկները, որից յետով ի վնաս ընկերներին՝ կոփոտեցին և ուրիշ ծաղկանոցներ. աղջիկներն այնքան արտասուեցին, որ, վերջապէս, նոցարտասունքն էլ չըբաւականացաւ: Ա. Երջ ի վերջոյ նոքա բոլորն էլ թուլացած պարկեցին ընդհանուր ամայութեան մէջ և սկսեցին սպասել, թէ երբ կըդալ երեկոն և նոցատուն կըտանեն:

Այն մանուկները, որոնք մնացել էին սենեակներում, նոյնպէս ուրախանում էին: Նոցա համար պատրաստուածէր բոլոր կարեւոր զբաղմունքները. ածումէր մուղիկան, որի խալերի տակ կարելի էր պարել. բացուած էր գրադարան, որի մէջ կալին բոլոր զբաղմունքների վերաբերեալ գրքեր. կար մուգէլ՝ ամենահետաքրքիր խեցիներով, կենդանիներով և թռչուններով լիքը. կար արհեստանոց՝ ուշիմ մանուկ-

ների համար ճախարակգործութեան վերաբերեալ բոլոր պարագաներով. կալին երեւակայական լաւ հանդերձարաններ, որոնց մէջ աղջիկները կարող էին զարդարւել. կալին մանրագիտակներ, գեղագիտակներ, ամենակարեւոր խաղալիքներ, որոնք ցանկալի էին մանուկներին. իսկ սեղանատանը բացւած էր սեղանն ամենատեսակ համեղ կերակուրներով:

